

**ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ

- Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ** ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն
- Ա. ՀԱԿՈԲՅԱՆ** ՀՊՏՀ ուսումնական բաժնի պետ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ
- Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ** ՀՊՏՀ Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանի տեղակալ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ
- Ա. ՔԹՈՅԱՆ** ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի վարիչ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ
- Տ. ՄԿՐՏՉՅԱՆ** ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դասախոս «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ
- Մ. ՄԱՐՈՒՔՅԱՆ** ՀՊՏՀ արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ
- Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ** ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Կրթական ծրագրերի և տեխնոլոգիաների հետազոտությունների» ծրագրի ավագ հետազոտող

Սույն հետազոտությունը և համակարգի երկարաժամկետ զարգացման գործողությունների ծրագիրը մշակվել են «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ պատվերով:

Ծրագիրը մշակվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Բարձրագույն կրթության բարեփոխումների ուղղվածության և երկարաժամկետ զարգացման ծրագրի մշակումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության աշխատակիցների և ոլորտի մի շարք փորձագետների հետ մասնագիտական-փորձագիտական քննարկումների արդյունքում:

ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԽԱԲԱՆ.....	7
ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՔԵՐԸ.....	10
ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ.....	12
1 Բարձրագույն կրթության համակարգի իրավական կարգավորումը և սուբյեկտները.....	12
2 Բարձրագույն ուսումնական հաստատությունները, դրանց կադրային ապահովվածությունը և ուսանողների ներգրավվածությունը.....	13
3 Բարձրագույն կրթության ոլորտում առաջին և երկրորդ աստիճանում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերը.....	16
4 Բարձրագույն կրթության մասնագիտությունների սահմանումը, մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորումը և հավատարմագրումը.....	17
5 Բարձրագույն կրթության ֆինանսավորումը.....	20
6 Բարձրագույն կրթության մատչելիությունը.....	22
7 Բարձրագույն կրթության համակարգում սովորողների ֆինանսական աջակցության գործող մեխանիզմները.....	23
8 Գիտություն-կրթություն-տնտեսություն համագործակցությունը.....	25
9 Բարձրագույն կրթության միջազգայնացումը, ուսանողների և պրոֆեսորադասախոսական համակազմի միջազգային շարժունակությունը.....	26

10	Բարձրագույն կրթության համակարգի մրցունակությունը.....	27
11	Բարձրագույն կրթության ազդեցությունը բնակչության բարեկեցության վրա.....	28
12	Բարձրագույն կրթության պահանջարկի միտումները և ապագայի կանխատեսումները.....	28
13	Բարձրագույն կրթության համակարգի ռազմավարական զարգացման ներուժը և սահմանափակումները.....	30
ԳԼՈՒԽ 2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ.....	33
1	Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի տեսլականը և առաքելությունը.....	33
2	Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության բարեփոխման ռազմավարության նպատակները և երկարաժամկետ զարգացման ծրագրի գործողությունները.....	34
ԳԼՈՒԽ 3	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՍՆԵԼՈՒՆ ՄԻՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	47
1	Բարձրագույն կրթության մատչելիության մակարդակի բարձրացումը.....	47
2	Տարածքային համաչափ զարգացման համատեքստում երկրի բոլոր համայնքների բնակիչների համար բարձրագույն կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ձևավորումը.....	53
3	Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության բարձրացումը.....	56

4	Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության մշտադիտարկման և գնահատման ինստիտուցիոնալ հենքի ձևավորումը.....	63
5	Բարձրագույն կրթական հաստատությունների պետական ֆինանսավորման համակարգի արդյունավետության բարձրացումը և ֆինանսավորման ծավալների ավելացումը.....	67
6	Բուհերի սոցիալական պատասխանատվության և հաշվետվողականության մակարդակի բարձրացումը.....	73
7	Գիտության զարգացման և կիրառական հետազոտությունների խթանման ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումը.....	76
8	Համալսարանների հետազոտական գործունեության խթանման ինստիտուցիոնալ հենքի ձևավորումը.....	81
9	Ձևավորել բարձրագույն կրթության միջազգայնացումը խթանող միջավայր.....	86
10	Բարձրացնել ՀՀ բարձրագույն կրթության միջազգային տեսանելիությունը և գրավչությունը.....	89
11	Ընդլայնել միջազգային համագործակցությունը բարձրագույն կրթության, հետազոտությունների և նորարարության բնագավառում.....	92
12	Ավելացնել ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի միջազգային շարժունությունը.....	96
13	Բուհերում կրթական ծրագրերի բարեփոխումներին նպաստումը...	98
14	Բուհ ընդունելության և ներքին շարժունության գործընթացների բարեփոխումը.....	102

**ՀԱԵԼՎԱԾՆԵՐ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԹՎԵՐՈՎ..... 106**

ՆԱԽԱԲԱՆ

Կրթության ոլորտն առանցքային նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում: Կրթության ոլորտը յուրաքանչյուր երկրում մարդկային կապիտալի կուտակման, որակական աճի ապահովման, երկարաժամկետ զարգացման, ինչպես նաև գիտելիքի հասարակության ու գիտելիքի տնտեսության կառուցման անկյունաքարն է: Միևնույն ժամանակ կրթության ոլորտը և հատկապես մասնագիտական կրթությունը այն եզակի ոլորտներից է, որը չնայած ակադեմիական կայունությանն ու պահպանողականությանը ամենադինամիկ զարգացողներից մեկն է համաշխարհային տնտեսությունում: Պատճառն այն է, որ մասնագիտական կրթության որակավորումների ու մասնագիտությունների շրջանակը, բովանդակային հենքը և կրթական ծրագրերի բովանդակությունը ուղղակիորեն ածանցվում են աշխատաշուկայի ու տնտեսության վերափոխումներից, ինչը մասնագիտական կրթության բնագավառում գործող հաստատությունների մրցունակության հիմնական գրավականն է: Սակայն աշխատաշուկային համարժեք արձագանքելու խնդիրը վերջին տարիներին հետևողականորեն բարդանում է: Ներկայումս գլոբալ տնտեսությունում սրընթաց կերպով առաջանում են նոր մասնագիտություններ, ավանդաբար պահանջարկված և բարձր վարձատրվող բազմաթիվ մասնագիտություններ իրենց տեղը գիջում են արհեստական ինտելեկտին՝ կորցնելով իրենց գրավչությունը:

Ակնհայտ է, որ որևէ անհատի նախապատվություն չի կարող խարսխվել այնպիսի մասնագիտության կամ այնպիսի կրթական հաստատության ընտրության վրա, որը վերջնարդյունքում նրան ինքնադրսևորվելու և մասնագիտական աճի մեկնարկային լավ հնարավորություններ չի ընձեռելու՝ կապված նրա հետ որ այդ հաստատության կրթական ծրագիրն առնչվել է ոչ պիտանի մասնագիտության կամ, կտրված լինելով աշխատաշուկայից ու տնտեսությունից, բովանդակային առումով չի ապահովել այնպիսի վերջնարդյունքներ, որոնք առաջնային պահանջարկված են աշխատաշուկայում: Բոլոր դեպքերում էլ կրթական ծառայության սպառողների

տեսանկյունից նման ծրագրերը չեն կարող ընկալվել իբրև բարձրորակ: Սա լուրջ խնդիրներ է առաջադրում մասնագիտական կրթական հաստատություններին: Ընդ որում, այս առումով կրթական համակարգի դերը երկակի է: Մի կողմից այն տնտեսության ու աշխատաշուկայի վերափոխումների արձագանքողն է, մյուս կողմից ակնհայտ է, որ հենց այս ոլորտում ձևավորված գիտելիքի արդյունքն են հանդիսանում այդ վերափոխումները: Նման հեղափոխական գիտելիքի ստեղծման ունակություններ կամ, առնվազն, աշխատաշուկայի հետ սերտ համագործակցող կրթական ծրագրեր ունենալու հրամայականը պահանջում են, որ մի կողմից յուրաքանչյուր կրթական հաստատություն կարողանա ճիշտ կանխատեսել մասնագիտությունների ապագա վերափոխումները և իր կրթական ծառայությունների պորտֆելում ներառի ապագային միտված մասնագիտությունների կրթական ծրագրեր, ժամանակին կարողանա դադարեցնել այն մասնագիտությունների ծրագրերը, որոնք կանխատեսվող մոտակա ապագայում իբրև զբաղմունքի տեսակներ դադարելու են, իսկ մյուս կողմից ունենա կադրային ու ենթակառուցվածքային այնպիսի համալրվածություն, որպեսզի կարողանա մշտապես լինել փոփոխությունների գեներացման ակունքներում: Ակնհայտորեն սա վերափոխում է նաև մասնագիտական կրթության մատուցման փիլիսոփայությունն ու մասնագիտական կրթական հաստատության մոդելը՝ շեշտադրումը դնելով հետազոտություններ-կրթություն ինտեգրման վրա:

Մասնագիտական կրթությունն իր բնույթով նաև եզակի ծառայություն է: Այն մի կողմից միտված է բավարարելու անմիջական գնորդների (առանձին մասնագիտական կրթական ծրագրերի ուսանողների) պահանջմունքները, իսկ մյուս կողմից՝ տնտեսության տարբեր ճյուղերի ու դրանց գործատուների կարիքները: Անմիջական գնորդի պահանջմունքը բնականորեն կապված է ինքնադրսևորման և հարգանքի պահանջմունքների իրացման հետ, ինչը խարսխված է ապագայում իր ստացած հմտություններն օգտագործելով կայուն եկամուտ ունենալու տեսլականի վրա: Իսկ գործատուների կարիքներն առավել բազմազան են. դրանք կարող են լինել ինչպես կադրային, կապված մասնագիտական բարձր որակներով և կիրառական հմտություն-

ներով օժտված կադրերով համալրմանը, այնպես էլ գործառնական, կապված կապված բարիքների նախագծման, փորձարկման, ստեղծման ինչպես նաև բիզնես գործընթացների լավարկման նպատակով անհրաժեշտ հետազոտություններում ու մշակումներում կրթական-հետազոտական հաստատությունների հնարավորությունների օգտագործման հետ: Մասնագիտական կրթության՝ իբրև ծառայության եզակիությունը կայանում է նաև նրանում, որ այն ստեղծվում է ոչ թե բացառապես թողարկողի (բարձրագույն ուսումնական հաստատության), այլև այս ծառայության անմիջական գնորդների (ուսանողների) և սպառողների (պետության ու գործատուների) համատեղ աշխատանքի արդյունքում: Այս է պատճառը, որ կրթության և մասնավորապես մասնագիտական կրթության ոլորտում արժեքի ստեղծման ծախսերը իրենց վրա են վերցնում ինչպես կրթական ծառայության անմիջական գնորդները (ուսանողները կամ նրանց ծնողները), այնպես էլ գործարար համայնքն ու պետությունը: Ընդ որում պետության դերակատարումն այս հարցում առանցքային է:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել մասնագիտական կրթության զարգացման խնդիրները, որոնց լուծման տեսլականներն իբրև թիրախներ ներառվել են ինչպես Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարական ծրագրերում, այնպես էլ ՀՀ կառավարության տարբեր տարիների գործողությունների ծրագրում: Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտը ինչպես կառուցվածքային, այնպես էլ ընթացակարգային ու բովանդակային առումով զարգացման երկար ճանապարհ է անցել, ինչի արդյունքում որակական նոր, ավելի բարձր մակարդակի անցնելու բավարար հիմքեր են կուտակվել համակարգում: Սակայն որակական թռիչքի ու երկարաժամկետ զարգացման ապահովման անհրաժեշտությունը պահանջում են էապես վերանայել բարձրագույն կրթության համակարգի ներկայիս ընկալումները և հետանկախացման ժամանակահատվածում ոլորտի ֆինանսավորման, կարգավորման, բուհական համագործակցության արմատավորված մոտեցումները, առանց որոնց համակարգի արդյունավետ զարգացումն անհնարին կլինի:

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՔԵՐԸ

Բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարության և երկարաժամկետ զարգացման ծրագրի մշակումը խարսխվել է «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թթ. ծրագրում»: Ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել նաև ՄԱԿ-ի «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» փաստաթղթի կայուն զարգացման չորրորդ նպատակով, «Կրթություն 2030. Դեպի ներառական և արդարացի որակյալ կրթություն ու կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչիոնի հռչակագրով և Բոլոնիայի գործընթացի 2015 թ. Երևանի գագաթաժողովի արդյունքներով ընդունված հռչակագրով սահմանված հեռանկարային զարգացման թիրախները:

Ռազմավարության մշակման ընթացքում ուսումնասիրվել և հաշվի են առնվել նախորդող ժամանակահատվածում բարձրագույն կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության ձեռքբերումները, բացթողումները, 21-րդ դարում մասնագիտական գործունեության ուղղությունների և մասնագիտական հմտությունների սրընթաց վերափոխումների ազդեցությամբ բարձրագույն կրթությանն առաջադրվող մարտահրավերները, ինչպես նաև համակարգի զարգացման ներքին և արտաքին սահմանափակումներն ու հնարավորությունները:

Ռազմավարության մշակման շրջանակներում ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից իրականացվել է համակողմանի հետազոտություն՝ ուղղված ՀՀ բարձրագույն կրթության համակարգում առկա խնդիրների բացահայտմանը, դրանց լուծման ուղղությամբ միջազգային փորձառության վերհանմանը, ՀՀ-ում արտերկրի փորձի ներդրման հնարավորությունների գնահատմանը, ինչպես նաև, բարձրագույն կրթության համակարգի ուժեղ և թույլ կողմերի սահմանմանը՝ հեռանկարային զարգացման համատեքստում:

Հետազոտություններն իրականացվել են հետևյալ ուղղություններով.

- բարձրագույն կրթության բովանդակություն,
- բարձրագույն կրթություն աշխատաշուկա կապ,
- բարձրագույն կրթության որակ,
- բարձրագույն կրթության համակարգի արդյունավետություն,
- բուհերի և ուսանողների ֆինանսավորում,
- բարձրագույն կրթության մատչելիություն և տարածական հասանելիություն,
- գիտություն-կրթություն-տնտեսություն համագործակցություն,
- բուհերի միջազգայնացման գործընթաց:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

1. Բարձրագույն կրթության համակարգի իրավական կարգավորումը և սուբյեկտները

Բարձրագույն կրթության համակարգը ներառում է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ ԿԳՆ), Լիցենզավորման և հավատարմագրման պետական ծառայությունը, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը, Կրթության ազգային ինստիտուտը, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը, Գիտության պետական կոմիտեն, Բարձրագույն որակավորման հանձնաժողովը, ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոնը, Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոն հիմնադրամը, պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը **կարգավորվում է** Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, նախագահի հրամանագրերով, ներպետական այլ նորմատիվ իրավական ակտերով և միջազգային փաստաթղթերով¹:

Ոլորտի հետագա զարգացման ապահովման, ինչպես նաև բարձրագույն կրթության գլոբալ ոլորտում ընթացող վերափոխումներին և դրանցով առաջադրված նոր իրողություններին առավել հստակ համապատասխանության ապահովման նկատառումներից ելնելով Բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող հիմնական օրենքը ենթարկվել է հիմնարար փոփոխության և ներկայումս գտնվում է ՀՀ ազգային ժողովում՝ պատրաստ երկրորդ ընթերցմամբ ընդունվելուն: Նոր օրենքի նախագիծը հիմնովին վերափոխում է ինչպես

¹ Հավելված 14;

բարձրագույն կրթական համակարգի պետական կարգավորման, այնպես էլ բուհերի ինքնակառավարման, կրթություն-գիտություն-տնտեսություն, կրթություն-շահակիցներ համագործակցության ներկայիս սկզբունքներն ու կառուցակարգերը:

2. Բարձրագույն ուսումնական հաստատությունները, դրանց կադրային ապահովվածությունը և ուսանողների ներգրավվածությունը

2016-2017 ուսումնական տարում Հայաստանի Հանրապետությունում գործունեություն են ծավալել թվով 63 բարձրագույն ուսումնական հաստատություններ և 12 մասնաճյուղեր, որոնցից 25-ը՝ հավատարմագրված: Բարձրագույն կրթության առաջին աստիճանում բակալավրի ծրագրով մասնագիտական կրթական ծրագրեր են իրականացրել 24 պետական բուհեր և 12 մասնաճյուղեր ու 39 ոչ պետական բուհեր: Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում մագիստրոսի ծրագրով մասնագիտական կրթական ծրագրեր են իրականացրել 34 պետական և ոչ պետական բուհեր ու 9 մասնաճյուղեր, ինչպես նաև 4 գիտական կազմակերպություններ:

Բուհերի 81%-ը տեղաբաշխված է եղել ք. Երևանում, իսկ 19%-ը՝ մարզերում: 2016-2017 ուսումնական տարում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորել է 81.648 ուսանող, որոնցից 72517-ը (88%-ը) սովորել է պետական, իսկ 9131-ը (12%-ը) բուհերում և մասնաճյուղերում: 81.648 ուսանողներից 52.480-ը (64%-ը) սովորել է առկա ուսուցման համակարգում, 29.168-ը (36%)՝ հեռակա ուսուցման համակարգում: 81.648 ուսանողներից 70738-ը (87%-ը) սովորել է բարձրագույն կրթության առաջին աստիճանում, իսկ 10910-ը (13%)՝ բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում:

Բարձրագույն կրթության առաջին աստիճանում բակալավրի կրթական ծրագրերի մասնակցող ուսանողների 86%-ը սովորել է վճարովի, իսկ 14%-ը՝

անվճար հիմունքներով²: Ընդ որում անվճար հիմունքներով սովորող ուսանողները ուսանել են բացառապես պետական բուհերում և մասնաճյուղերում:

Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում մագիստրոսի կրթական ծրագրերի մասնակցող ուսանողների թիվը կազմել է 10 910, որոնցից 32%-ը սովորել է անվճար, իսկ 68%-ը վճարովի հիմունքներով: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում կազմել է 13.1%: Անվճար հիմունքներով սովորող ուսանողների 99%-ը ուսանել են բացառապես պետական բուհերում, դրանց մասնաճյուղերում և 4 գիտական հաստատություններում:

2016-2017 ուսումնական տարում բարձրագույն կրթության առաջին աստիճանում բակալավրի կրթական ծրագիր իրականացնող պետական բուհերի և մասնաճյուղերի ուսանողների 54%-ը, ոչ պետական բուհերի սովորողների 50%-ը և բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում մագիստրոսի կրթական ծրագիր իրականացնող պետական ու ոչ պետական բուհերի, մասնաճյուղերի և գիտական 4 հաստատությունների ուսանողների 60%-ը եղել են իգական սեռի ներկայացուցիչներ:

Ուսանողների 84%-ը սովորել է ք. Երևանի բուհերում, 5%-ը՝ Շիրակի, 4%-ը՝ Լոռու, իսկ 7%-ը՝ այլ մարզերում: 2016-2017 ուսումնական տարում 18-22 տարեկան բնակչության ընդգրկվածությունը բարձրագույն կրթական հաստատություններում կազմել է 44%³:

2016-2017 ուսումնական տարում պետական և ոչ պետական բուհերի աշխատակիցների թիվը կազմել է 18983, որոնցից 17517-ը (92%-ը) աշխատել են պետական բուհերում, իսկ 1466-ը (8%-ը)՝ ոչ պետական բուհերում: Պետական բուհերի 17517 աշխատակիցների թվում հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի թիվը կազմել է 7025 (40%-ը), իսկ մյուս աշխատողների թիվը

² Պետության կողմից ուսման վարձի 100% փոխհատուցում ուսանողական նպաստի ձևով

³ Հավելված 5:

կազմել է 10492 (60%-ը): Դասավանդող անձնակազմ ուսանողներ հարաբերակցությունը կազմել է 0.096: Ոչ դասավանդող անձնակազմ ուսանողներ հարաբերակցությունը պետական բուհերում կազմել է 0.14:

Ոչ պետական բուհերի 1466 աշխատակիցների թվում հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի թիվը կազմել է 573 (39%-ը), իսկ մյուս աշխատողների թիվը կազմել է 893 (61%-ը): Դասավանդող անձնակազմ ուսանողներ հարաբերակցությունը ոչ պետական բուհերում կազմել է 0.062: Ոչ դասավանդող անձնակազմ ուսանողներ հարաբերակցությունը պետական բուհերում կազմել է 0.09:

Պետական բուհերի հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի շուրջ 52%-ը ունի գիտական աստիճան, որից 9%-ը գիտությունների դոկտորի և 43%-ը գիտությունների թեկնածուի: Գիտական կոչումներ ունեն պետական բուհերի հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի շուրջ 44%-ը, որից 11%-ը պրոֆեսորի և 33%-ը դոցենտի: Պետական բուհերի հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն բանասիրական (շուրջ՝ 18%), տեխնիկական և տնտեսագիտական (համապատասխանաբար՝ 11.2%), մանկավարժության և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների (համապատասխանաբար՝ 8.5%), բժշկության (շուրջ՝ 7.8%) և արվեստագիտության (շուրջ՝ 6.8%) մասնագետները:

Ոչ պետական բուհերի հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի շուրջ 47%-ը ունի գիտական աստիճան, որից 6%-ը գիտությունների դոկտորի և 42%-ը գիտությունների թեկնածուի: Գիտական կոչումներ ունեն ոչ պետական բուհերի հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի շուրջ 30%-ը, որից 5.2%-ը պրոֆեսորի և 25%-ը դոցենտի: Ոչ պետական բուհերի հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմում ամենամեծ տեսակարար կշիռն

ունեն տնտեսագիտական (շուրջ՝ 15.5%), բանասիրական (շուրջ՝ 14%), իրավաբանական (շուրջ՝ 12 և բժշկության (շուրջ՝ 20%) մասնագետները⁴:

Կրթության ոլորտում միջին անվանական աշխատավարձը 2016 թվականին կազմել է 120.000 դրամ, ինչն էականորեն զիջում է ՀՀ միջին աշխատավարձի ցուցանիշը:

3. Բարձրագույն կրթության ոլորտում առաջին և երկրորդ աստիճանում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերը

2016-2017 ուսումնական տարում Հայաստանի Հանրապետությունում գործող 63 բուհերը, 12 մասնաճյուղերը և 4 գիտական հաստատությունները բարձրագույն կրթության առաջին և երկրորդ աստիճանում միասին վերցրած իրականացրել են շուրջ 150 մասնագիտությունների և մասնագիտացումների կրթական ծրագրեր: Ըստ բարձրագույն կրթության մասնագիտությունների խոշորացված խմբերի տվյալ 150 կրթական ծրագրերի ուսանողների թվում ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել են հումանիտար գիտությունների (շուրջ՝ 30%), գործարարության և վարչարարության (շուրջ՝ 20%), ագրոպարենային ոլորտի (շուրջ՝ 9%) և կրթության ու մանկավարժության (շուրջ՝ 8%) ոլորտների կրթական ծրագրերի ուսանողները: 2015-2017 թվականներին ՀՀ կառավարության կողմից տվյալ 150 կրթական ծրագրերի համար հատկացվող վճարովի կրթական տեղերում ընդունելության արդյունքներով թափուր մնացած կրթական տեղերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն գործարարության և վարչարարության (ֆինանսներ, հաշվապահական հաշվառում, տնտեսագիտություն, կառավարում՝ շուրջ 24%), մանկավարժության (շուրջ՝ 10%), լեզվաբանության մասնագիտությունները (շուրջ՝ 10%): Գործարարության և վարչարարության ոլորտի մասնագիտությունների թափուր տեղերի շուրջ 70%-ը բաժին է ընկնում ոչ պետական բուհերին, ում տեսակարար կշիռը նույնքան մեծ է նաև

⁴ Հավելված 6:

իրավագիտության ու բժշկության ոլորտներում հատկացված և ընդունելության արդյունքներով թափուր մնացած կրթական տեղերում:

ՀՀ կառավարության կողմից տվյալ 150 կրթական ծրագրերի համար հատկացվող վճարովի կրթական տեղերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանը: ՀՀ կառավարության կողմից տվյալ 150 կրթական ծրագրերի համար հատկացվող վճարովի կրթական տեղերում ընդունելության արդյունքներով թափուր մնացած կրթական տեղերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, Երևանի պետական համալսարանը, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանը, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա հիմնադրամը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը⁵:

4. Բարձրագույն կրթության մասնագիտությունների սահմանումը, մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորումը և հավաքարմագրումը

Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայությունների մատուցումը հանդիսանում է լիցենզավորվող գործունեության տեսակ: Ոլորտը հանդիսանում է նաև կարգավորվող: Չնայած բուհական ինքնավարությանը, բարձրագույն կրթության որակավորումները, մասնագիտությունները, բուհերին հատկացվող վճարովի և անվճար կրթական տեղերը կարգավորվում են ՀՀ կառավարության որոշումներով: Բարձրագույն կրթության որակավորումների և մասնագիտութ-

⁵ Հավելվածներ 9 և 10:

յունների ներկայումս գործող ցանկը համապատասխանեցված է ՅՈՒՆԵՍԿՈ-ի դասակարգչին (ISCED-F 2013): Կրթական ծրագրի լիցենզավորման գործընթացը կարգավորվում է «ՀՀ-ում կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ: Կարգում նախատեսված են լիցենզիայի տրամադրման հստակ և չափելի պահանջներ, որոնք առնչվում են կրթական ծրագրի իրականացման համար պրոֆեսորադասախոսական կազմի, անհրաժեշտ տարածքների, լաբորատոր, գրադարանային, ընթերցասրահի առկայությանը, պրակտիկայի համար անհրաժեշտ բազայով ապահովվածությանը: Լիցենզավորման պայման է նաև կրթական ծրագրի ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի առկայությունը:

«Հայաստանի հանրապետության բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավարության 22.12.2005թ. N 2307-Ն որոշման համաձայն. 2005/2006 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից կրեդիտային համակարգի բնագավառում որոշակի փորձ ունեցող բուհերում համակարգը կրթափորձի կարգով մասնակիորեն կիրարկելուց և դրանց արդյունքները ամփոփելուց հետո ՀՀ կառավարության կողմից հաստատվել են նոր կրթական չափորոշիչներ և դրանց հենքի վրա իրականացվել է գործող ուսումնական պլանների արմատական վերակառուցում՝ ուղենիշ ունենալով դրանց մոդուլացումը և արտահայտումն ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունն արտահայտող կրեդիտային արժեքներով (պարտադիր ու ընտրովի դասընթացների և ուսումնական մոդուլների ցանկով և դրանց ամրագրված կրեդիտների չափաբաժիններով): Նույն որոշմամբ Հայաստանյան բուհերին պատվիրակվել է, որ շնորհվող կրեդիտների ու որակավորումների ճանաչելիությունը և կրեդիտների կուտակման ու տեղափոխման եվրոպական համակարգի հետ (ECTS) դրանց համադրելիությունն ապահովելու նպատակով, պետք է մշակվեն նոր կրթական

ծրագրեր, որոնց ուսումնական ծրագրերն ու դրանց բովանդակությունը կմերձեցվեն եվրոպական չափանիշներին և մասնագիտական աշխատանքային շուկայի առկա պահանջներին:

Գործընթացի իրավական ուղեկցման և գնահատման նպատակով ՀՀ կառավարության տարբեր որոշումներով հաստատվել են բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները, ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները: Հիմնվել է որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամը:

Դրանով հանդերձ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը ցույց տվեց, որ բուհերը հիմնականում առաջնորդվել են կրթական պետական չափորոշիչներով, «Հայաստանի հանրապետության բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ՀՀ կառավարության 22.12.2005թ. N 2307-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև ոլորտը կարգավորող հիմնական օրենքի պահանջներով՝ իրականում չունենալով եվրոպական բարձրագույն կրթական տարածքում տիրապետող ձևի ու բովանդակության կրթական ծրագրեր: Բացի այդ այս ուղղությամբ մեր կողմից կատարված դիտարկումները, բուհերի կայքերում կրթական ծրագրերին առնչվող տեղեկատվության համեմատական վերլուծության արդյունքները փաստում են որ կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և հետադարձ կապի ապահովման աշխատանքներում բուհեր-գործատուներ, բուհեր-շրջանավարտներ, բուհեր-կրթական ծրագրերի ներքի շահակիցներ համագործակցությունը կամ բացակայում է կամ գտնվում է ցածր մակարդակի վրա: Նմանատիպ սկզբունքով կառուցված և իրականացվող կրթական ծրագրերն ավելի շուտ բացառություն են քան օրինաչափություն:

Սա կապված է նաև ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափելի ցուցիչների, ինչպես նաև գործընթացը կարգավորող կարգերի բացակայության հետ:

5. Բարձրագույն կրթության ֆինանսավորումը

2017 թվականին ՀՀ պետական բյուջեից բարձրագույն կրթությանը նպատակաուղղվել է 12131.5 մլն դրամ, ինչը կազմել է կրթության համախառն ծախսերի 9.5%-ը: 2008-2017 թթ ընթացքում Կրթության ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեում տատանվել է 9.38%-ից (2017) 13.42%-ի (2009) միջակայքում՝ 2009 թվականից դրսևորելով ընդգծված անկման միտում⁶: Իսկ բարձրագույն կրթության ծախսերի տեսակարար կշիռը՝ 0.7% -ից (2013) 0.9%-ի (2016) միջակայքում⁷: Համախմբված բյուջեում կրթությանը նպատակաուղղված ծախսերի տեսանկյունից Կրթության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2008-2016 թթ տատանվել է 2.1-2.9%-ի միջակայքում՝ 2017-ին կազմելով 2.3%: Բարձրագույն կրթության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2008-2016 թթ տատանվել է 0.19-0.24%-ի միջակայքում՝ 2017-ին կազմելով 0.22%⁸: Կրթության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության տեսանկյունից ՀՀ ցուցանիշը կրկնակի անգամ զիջում է **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ)** երկրների միջին ցուցանիշը և շուրջ 1.5 անգամ միջինից ցածր եկամուտներով երկրների միջին ցուցանիշը⁹: Բարձրագույն կրթության ընդամենը ծախսեր/ՀՆԱ-ի ցուցանիշը շուրջ 1.6 անգամ զիջում է ՏՀԶԿ երկրների միջինինին, իսկ բարձրագույն կրթությանն ուղղվող պետական միջոցները/ՀՆԱ-ի ցուցանիշը շուրջ 3.3 անգամ է զիջում ՏՀԶԿ-ի միջինին¹⁰: Այս ոլորտին ուղղվող մասնավոր միջոցները, գլխավորապես ուսման վարձերի տեսքով, չափազանց բարձր են միջազգային ցուցանիշներից, սակայն նույնիսկ այդ պարագայում բավարար չեն ոլորտը ֆինանսավորելու և դրա զարգացումն ապահովելու համար:

⁶ Հավելված 3:

⁷ Հավելվածներ 3 և 4:

⁸ Նույն տեղում:

⁹ World Bank, World Development Indicators

¹⁰ Education at a Glance 2015- OECD Indicators

ՀՀ կառավարության կողմից հաստատված 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրից ակնհայտ է, որ կրթության ընդհանուր ծախսերը առաջիկա երեք տարիներն կնվազեն, իսկ Հայաստանը կշարունակի մնալ տարածաշրջանի ամենացածր կրթական ծախսեր ունեցող երկրների ցանկում:

Վերջին տասնամյակում պետական ֆինանսավորման մակարդակի հետևողական նվազումը, մասնավոր հատվածից ներգրավվող սահմանափակ միջոցների պայմաններում բուհերին դրդում է ֆինանսավորման հարցերում առաջնորդվել ուսման վարձերից գանձվող միջոցներով, ինչը նույնպես ընդգծված նվազման միտում ունի՝ կապված բուհեր ընդունվողների թվի զգալի կրճատման հետ: Ուսումնասիված պետական բուհերում պետության կողմից ֆինանսավորումը ամբողջի մեջ կազմում է 14-30% տոկոս, կամ միջինը՝ 21%, ինչը շուրջ 3.5 անգամ պակաս է ԵՄ երկրների բուհերի ֆինանսավորման բյուջեում պետական միջոցների տեսակարար կշռից: Պետական ֆինանսավորման պակասը լրացնելու միջոցը վճարովի ուսանողների ուսման վարձն է: Իրականում, գրեթե բոլոր պետական բուհերն էլ կայուն եկամուտներ ապահովելու համար փորձում են ավելացնել վճարովի ուսանողների քանակը, ինչպես նաև բարձրացնեն ուսման վարձավճարի մակարդակը: Նման պայմաններում բուհերը դադարում են վատ առաջադիմություն ունեցող ուսանողներին կրթական ծրագրից հեռացնելու մոտիվացիա ունենալ, ինչը խաթարում է կրթական գործընթացի որակը և խիստ բացասաբար է անդրադառնում բուհերի վարկանիշի և հասարակության կողմից բարձրագույն կրթության արժևորման վրա: Հայաստանի Հանրապետությունը պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում գանձվող ուսման վճարի չափով գտնվում է 1000 Եվրոյից նվազ վարձավճարի մեծությամբ երկրների ցանկում, որը առաջիկա տարիների բարձրագույն ուսումնական հաստատությունների պետական ֆինանսավորման բովանդակության փոփոխության չենթարկվելու և դիմորդների թվի կրճատման պարագայում կհանգեցնի այս

ցուցանիշի էապես բարձրացմանը, ինչը հակասում է 2015 թվականին Երևանում կայացած Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովի ժամանակ ընդունված կոմյունիկեով երկրների առավել հասանելի բարձրագույն կրթության ստեղծման պարտավորության հանձնառությանը:

6. Բարձրագույն կրթության մափչելիությունը

Բարձրագույն կրթության աշխարհագրական հասանելիությունը գտնվում է ոչ ցանկալի մակարդակի վրա: 2016 թվականին բուհերի 81%-ը տեղաբաշխված է եղել քաղաք Երևանում, ինչի պատճառով ուսանողների 86%-ն ուսումնառել է ՀՀ միայն մեկ համայնքում: Ընդ որում երևանյան մի շարք բուհեր մարզաբնակ ուսանողների համար նախատեսված կեցության ապահովման ենթակառուցվածքներ կամ չունեն, կամ դրանց հնարավորությունները խիստ սահմանափակ են:

Բուհերի կրթական միջավայրի ենթակառուցվածքները հիմնականում հարմարեցված չեն սահմանափակ հնարավորություններով անձանց կարիքներին, բացի այս բուհերը նման անձանց համար չունեն աջակցության ցուցաբերման որևէ այլ միջոց, քան ուսման վարձի մասնակի զեղչերի կիրառումը:

Տնային տնտեսությունները 2016 թվականին բարձրագույն կրթության ուսման վարձերի գծով 1 շնչի հաշվով ամսական կատարել են 663 դրամի ծախս (2008-ին՝ 1221 դրամ), ինչը կազմել է նրանց սպառողական ծախսերի 1.5%-ը՝ 2008 թվականի 4.2%-ի դիմաց:

Անապահով ուսանողների թվակազմը պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում 2015 թվականին կազմել է մոտ 2500 հոգի, 2016 թվականին մոտ 2700 հոգի, ում պետությունը կարողացել է աջակցել ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցմամբ: Իսկ բարձրագույն ուսումնական

հաստատությունների կողմից տարբեր սոցիալական կատեգորիայի ուսանողներին 2016-2017 ուսումնական տարում կատարվել է ուսման վարձի մասնակի փոխհատուցում: Փոխհատուցում ստացած ուսանողների թվաքանակը կազմել է շուրջ 10.000: Թեպետ պետությունը ֆինանսավորել է բարձրագույն կրթության համակարգում սովորողների 14%-ի անվճար կրթություն ստանալու իրավունքի իրացումը, ինչպես նաև տարբեր հիմնադրամներով և ուսման վարձերի զեղչման տարբեր կառուցակարգերով տրամադրել է ուսման վարձի 25-75%-ի մասնակի փոխհատուցում, սակայն բարձրագույն կրթությունը բնակչության աղքատ և ծայրահեղ աղքատ խավերի համար շարունակել է մնալ ոչ մատչելի:

Այսպես, եթե 18-22 տարեկան բնակչության համախառն ընդգրկվածությունը բուհերում 2016 թվականին կազմել է 44%, ապա ծայրահեղ աղքատ բնակչության ընդամենը 17%-ը և աղքատ բնակչության 34%-ն է ընդգրկված եղել բուհերում: Եթե 2016 թվականին բնակչության ամենահարուստ 20% խավի սպառողական ծախսերի 2%-ն է բաժին ընկել կրթությանը, ապա ամենաաղքատ 20% խավի սպառողական ծախսերի միայն 0.2%-ը:

7. Բարձրագույն կրթության համակարգում սովորողների ֆինանսական աջակցության գործող մեխանիզմները

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են ֆինանսական աջակցության որոշակի ծրագրեր՝ բուհեր ընդունվելիս և սովորելու ընթացքում: Դրանք են.

1. Պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերի մասնագիտությունների համար պետության կողմից սահմանվում են ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր՝ ընդունվելիս ըստ ընդունելության քննություններից ստացած միավորների, իսկ սովորելու ընթացքում՝ ըստ ուսանողների առաջադիմության (ռոտացիոն սկզբունքով):

2. Անվճար համակարգում (նաև որոշ արտոնություններ ունեցող) սովորող ուսանողների 90%-ը ստանում են կրթաթոշակ ամսական մոտ 5000 դրամի չափով:
3. Ուսանողների առանձին խմբեր բուհեր են ընդունվում ընդհանուր մրցույթից դուրս և ուսումնառության ընթացքում օգտվում են անվճար համակարգում սովորելու արտոնությունից (զոհված ազատամարտիկների կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների երեխաներ, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակ վիրավորում ստացած ուսանողներ, մինչև 23 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, 1-ին կամ 2-րդ խմբի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող ուսանողներ, վերջին երեք տարում պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված և բուհ ընդունված ուսանողներ): Որոշ խմբերի ուսանողների՝ անվճար սովորելու արտոնությունը դադարում է արտոնությանը հանգեցրած պայմանների վերացման դեպքում (օրինակ, առանց ծնողական խնամքի մնացած ուսանողի 23 տարին լրանալը կամ հաշմանդամության կարգավիճակից զրկվելը):
4. Սոցիալական անապահովության նվազագույն միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների ուսանողները ՀՀ կառավարության կողմից ստանում մասնակի փոխհատուցում ուսման տարեկան վարձի առնվազն 50%-ի չափով:
5. Բուհերն իրենց հերթին ուսման վարձերի մասնակի փոխհատուցման միջոցով ֆինանսական աջակցություն են ցուցաբերում սոցիալական որոշակի խմբերի ուսանողներին (անապահովության 0-ից բարձր, սակայն նվազագույն միավորից ցածր միավորներ ունեցող ընտանիքների ուսանողներ, միակողմանի ծնողազուրկ կամ միաձնող ուսանողներ, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներ, ընտանիքում երեք և ավելի անչափահաս երեխա կամ ուսանող ունեցող ընտանիքի երեխաներ, ժամկետային զինվորական ծառայության ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած

ուսանողներ, 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից ուսանողներ և այլն): Վերը նշված խմբերի ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը կախված է ուսման առաջադիմությունից (բացառություն են կազմում 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից ուսանողները, ովքեր ստանում են ուսման վարձի 50%-ի փոխհատուցում՝ անկախ ուսման առաջադիմությունից):

Ուսանողների ուսման վճարների մասնակի փոխհատուցմանը պետք է ուղղվի բուհի տարեկան բյուջեի առնվազն 7%-ը, իսկ մասնակի փոխհատուցում ստացած ուսանողների թիվը պետք է կազմի վճարովի համակարգում սովորող ուսանողների առնվազն 10%-ը: Բացի դրանից, բուհն իր միջոցների հաշվին փոխհատուցում է պետության կողմից ըստ մասնագիտությունների անվճար ընդունված ուսանողների 10%-ի չափով ուսանողների ուսման ամբողջ վարձը:

8. Գիտություն-կրթություն-տնտեսություն համագործակցությունը

2012-2016 թվականներին հետազոտությունների և մշակումների ֆինանսավորման ծավալը Հայաստանի Հանրապետությունում տատանվել է համապատասխանաբար 9950-11650 մլն դրամի շրջանակներում, որից 6750-9300 մլն-ը իրականացվել է պետական միջոցների հաշվին, իսկ 2463-2962 մլն-ը՝ այլ միջոցների հաշվին: Հետազոտությունների և մշակումների մեջ բարձրագույն ուսումնական հաստատություններին հատկացված ֆինանսավորումը առանձնացված չի հաշվառվել: Հետազոտությունների ներքին ֆինանսավորումը հիմնականում իրականացվել է Գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային ծրագրերի հաշվին: Մասնավոր հատվածից հետազոտությունների և մշակումների նպատակով բուհերին հատկացված օժանդակությունը և պատվերների ծավալը կամ աննշան է կամ որևէ այլ պատճառով չի հաշվառվել:

9. Բարձրագույն կրթության միջազգայնացումը, ուսանողների և պրոֆեսորադասախոսական համակազմի միջազգային շարժունակությունը

2016 թվականին ՀՀ բուհերում ուսանել է 3794 օտարերկրյա քաղաքացի: Օտարերկրյա ուսանողները կազմել են բարձրագույն կրթության համակարգում սովորողների 4.6%-ը: Թեպետ 2014-2016 թվականներին օտարերկրյա ուսանողների թիվը աճել է 2009-2012 թվականների թվի համեմատ (700-1000 ուսանողով), սակայն այն ցածր է 2007-2008 թվականներին ՀՀ բուհերում սովորող օտարերկրացի ուսանողների թվից (շուրջ 500 ուսանողով)¹¹: համեմատ: Օտարերկրացի ուսանողներ 86%-ը կազմել են Ռուսաստանի Դաշնությունից (32%), Վրաստանից (23%), Սիրիայից (7%) և Հնդկաստանից (24%) ժամանած ուսանողները: ՌԴ-ից, Վրաստանից և Սիրիայից ուսանողների թվում Սփյուռքի մասնաբաժինը ծանրակշիռ է:

2004-ից մինչև 2013 թվականները Erasmus Mundus-ի սովորողների ընդհանուր թվաքանակը ՀՀ-ից կազմել է ընդամենը 75: 2013-2014 թթ. ընթացքում մագիստրոսական կրթական ծրագրով Erasmus Mundus ծրագրի ուսանողների թվաքանակը Հայաստանից կազմել է 24 (դիմորդների թիվը՝ 154), համատեղ հետբուհական կրթական ծրագրով Հայաստանից ընտրվել է 2 ուսանող (դիմորդների թիվը եղել է 7): 2014 թվականից ԵՄ շարժունության ծրագիրը վերանվանվել է որպես «Միջազգային կրեդիտային շարժունության ծրագիր» որին Հայաստանի բուհերը սկսել են մասնակցել 2015 թվականից: 2015-2016թթ. Հայաստանից շարժունությանը մասնակցած ուսանողների թիվը կազմել է 504, իսկ դեպի Հայաստան շարժունությանը մասնակցել են 267 ուսանողներ: 2015-2016թթ. Հայաստանից շարժունությանը մասնակցել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի 509 աշխատակից:

¹¹ Հավելված 13:

2006-2016 թվականների ընթացքում ՀՀ բուհերը տարբեր ձևաչափերով ներգրավված են եղել միջազգային կառույցների ֆինանսավորմամբ իրականացվող շուրջ 44 ծրագրերում 92.442.000 եվրո ծավալով, որից 5.8%-ը կամ 5.343.000 եվրոյի ֆինանսավորումը բաժին է ընկնում 2012-2017 թվականներին հաստատված ծրագրերին, իսկ մնացյալը 2006-2011 թվականներին հաստատված և իրականացված ծրագրերին:

10. Բարձրագույն կրթության համակարգի մրցունակությունը

Բարձրագույն կրթության և վերապատրաստման ծառայությունների մրցունակության տեսանկյունից 2007-2017թթ. ընթացքում, թեպետ հաջողվել է էականորեն բարելավել Հայաստանի Հանրապետության դիրքերը (Համաշխարհային տնտեսական համաժողովի Գլոբալ մրցունակության զեկույցում՝ 95-րդ-ից, մինչև 69-րդ տեղ), սակայն մրցունակության տեսանկյունից այն դեռևս գտնվում է միջինից ցածր դիրքում և էականորեն զիջում է ինչպես գիտելիքահեն տնտեսությունների բարձրագույն կրթության համակարգի դիրքերին, այնպես էլ Արևելյան Եվրոպայի երկրներին: Ընդ որում համակարգի հեռանկարային զարգացմանը նպաստող առանցքային այնպիսի բաղադրիչների գծով, ինչպիսիք են «գիտահետազոտական հաստատությունների որակը», «հետազոտությունների և զարգացումների վրա կազմակերպությունների կողմից կատարվող ծախսերը», «հետազոտությունների և զարգացումների բնագավառում համալսարան-արդյունաբերություն համագործակցությունը», ինչպես նաև «գիտնականների և ինժեներների առկայությունը», Հայաստանի դիրքերը առավել վատթար են և զիջում են բարձրագույն կրթության մրցունակության ցուցանիշին¹²:

¹² Հավելված 1 և 2:

11. Բարձրագույն կրթության ազդեցությունը բնակչության բարեկեցության վրա

Ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների՝ 2016 թվականին բարձրագույն կրթություն ունեցել է տնտեսապես ակտիվ բնակչության 29%-ը: Գործազուրկ բնակչության 28%-ն ունեցել է բարձրագույն կրթություն: 2008-2016թթ. ընթացքում բնակչության բարեկեցության ապահովման առումով բարձրագույն կրթության որոշիչ դերը ցուցաբերել է ընդգծված նվազման միտում¹³: Եթե 2008 թվականի բարձրագույն կրթություն ունեցող անձանց շրջանում ծայրահեղ աղքատների թիվը կազմել է 0.4%, ապա 2016-ին՝ արդեն 0.9%: Ընդ որում՝ 2016 թվականին բնակչության ծայրահեղ աղքատ խավի 13%-ն ունեցել է բարձրագույն կրթություն:

Եթե 2008 թվականին աղքատ է համարվել բարձրագույն կրթություն ունեցողների 14.7%-ը, ապա 2016-ին՝ 16.8%-ը: Ընդ որում՝ 2016 թվականին աղքատ բնակչության 23%-ը կազմել է բարձրագույն կրթություն ունեցողները¹⁴:

Եթե 2008 թվականին բարձրագույն կրթությամբ գլխավոր ունեցող տնային տնտեսությունների սպառումը շուրջ 30%-ով է գերազանցել կրթության այլ մակարդակ ունեցող գլխավորով տնային տնտեսությունների սպառմանը, ապա 2016 թվականին այն գերազանցել է ընդամենը 17%-ով:

12. Բարձրագույն կրթության պահանջարկի միտումները և ապագայի կանխարեսումները

2006-2016 թվականների ընթացքում բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկը հետևողականորեն կրճատվել է, ինչը պայմանավորվել է ինչպես միգրացիայի, այնպես էլ հանրակրթական դպրոցից ավագ դպրոց անցման ցածր մակարդակով: Եթե 2006 թվականին դպրոցների

¹³ ՏՀԶԿ երկրներում ԲԿ ազդեցությունը բնակչության բարեկեցության վրա համարվում է համակարգի արդյունավետության գնահատման տիրապետող մեթոդներից մեկը:

¹⁴ Հավելված 5:

շրջանավարտների թիվը կազմել է 43438, ապա 2016 թվականին՝ գրեթե կրկնակի պակաս (22655): Սա կապված է ավագ դպրոցում որակի ապահովման չբավարարող մակարդակի վրա գտնվելու հետ: 2012 թվականին բուհ է ընդունվել 19%-ով քիչ ուսանող քան 2010 թվականին, իսկ 2016 թվականին բուհ ընդունվել է 2010 թվականին ընդունվածներից 33%-ով քիչ¹⁵: Սրա ազդեցությամբ 2011-2016 ուսումնական տարիներին ընդունելության արդյունքներով թափուր մնացող կրթական տեղերի թիվը հետևողականորեն աճել է: 2016-2017 ուսումնական տարվա արդյունքներով հատկացված 18 հազար վճարովի կրթական տեղերից 10 հազարը թափուր է մնացել: Մեր կանխատեսմամբ 2018-2028թթ. ժամանակահատվածում բարձրագույն կրթության պահանջարկի անկման միտումը կշարունակվի: Այսպես, եթե հանրակրթական դպրոցից ավագ դպրոց անցումը շարունակի մնալ նույն տիրույթում և պահպանվեն վերջին 10 տարիներին միգրացիայի, ծնելիության ու մանկամահացության ներկայիս ցուցանիշների տրենդերը ապա 2018-2028թթ. ընթացքում դպրոցի շրջանավարտների թիվը կտատանվի 18-23 հազարի միջակայքում: Իսկ եթե պահպանվի վերջին հինգ տարիների տրենդը ապա շրջանավարտների թիվը կտատանվի 17-18 հազարի միջակայքում: Ավագ դպրոցում որակական ճեղքում արձանագրելու և ընդգրկվածության ցուցանիշի զգալի բարելավման պարագայում միայն հնարավոր կլինի հասնել 24-33 հազար շրջանավարտի միջակայք, եթե հնարավոր լինի կրճատել նաև միգրացիայի ներկայիս տեմպը և բարելավել ծնելիությունը, ինչը թերևս բարդ իրագործելի սցենար է: Ըստ այդմ առավել իրատեսական է, որ ավագ դպրոցի շրջանավարտները կտատանվեն 18-20 հազարի միջակայքում:

¹⁵ 2010 թվականն ընտրվել է բազային քանի որ այն 10 ամյա միջնակարգ կրթության շրջանավարտների առումով վերջին տարին է:

13. Բարձրագույն կրթության համակարգի ռազմավարական զարգացման ներուժը և սահմանափակումները

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
<ol style="list-style-type: none"> 1. Բարձրագույն կրթության լիցենզավորման և հավատարմագրման որոշակի կառուցակարգերի առկայությունը: 2. Սոցիալական որոշ խմբերի ուսանողների համար գործող ուսման վարձի մասնակի փոխհատուցման հստակ մեխանիզմների առկայությունը: 3. Որոշ մարզերում համալսարանական մասնաճյուղերի և առանձին համալսարանների առկայությունը: 4. Տեխնիկական, ինժեներական և մաթեմատիկական կրթության բնագավառներում ներուժի առկայությունը: 5. Միջազգային ճանաչում ունեցող գիտական հանդեսներում հրատարակումների առկայությունը: 6. Որոշ բուհերի հենքի վրա ձևավորված ոչ ակադեմիական հետազոտական կառույցների առկայությունը: 7. Բարձրագույն կրթության ձևավորված որոշակի կառուցվածքի առկայությունը: 8. Միջազգային շարժունության ծրագրերի առկայությունը: 9. Բուհերի կառուցվածքում միջազգային գործունեությանը զբաղվող կենտրոնացված ստորաբաժանումների առկայությունը: 10. Մասնակցություն միջազգային դրամաշնորհային ծրագրերին: 	<ol style="list-style-type: none"> 1. Բուհ-համայնք համագործակցության ոչ բավարար մակարդակը: 2. Բարձրագույն կրթության սուբյեկտների գերկենտրոնացումը Երևան քաղաքում: 3. Մասնագիտական կրթական ծրագրերի բացակայությունը բուհերի մեծամասնության կրթական գործընթացում: 4. Մասնագիտական կրթական ծրագիր-աշխատաշուկա թույլ կապերը: 5. Որոշ մասնագիտությունների գծով գերարտադրությունը: 6. Կրթական և հետազոտական գործընթացներում բուհ-գործատուներ համագործակցության սահմանափակ բնույթը: 7. Կրթական գործընթացի հետադարձ կապի կառուցակարգերի բացակայությունը: 8. Ծրագրային հավատարմագրում ունեցող բուհերի բացակայությունը: 9. Հավատարմագրման և լիցենզավորման ոչ արդյունավետ և անհստակ ընթացակարգերը (երբ բարդ պայմանների առկայությունը չի հանդիսանում որակի երաշխիք) 10. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման ցուցիչների բացակայությունը: 11. Բուհերում արհեստավարժ կառավարիչների սահմանափակ թիվը: 12. Ակտիվների անարդյունավետ կառավարումը բուհերում: 13. Բուհերի աշխատակազմի և դասախոսական կազմի ուռճացվածությունը և անհամապատասխանությունը դիմորդների ներկայիս թվաքանակին: 14. Գիտության և գիտատեխնիկական հետազոտությունների ֆինանսավորման ցածր մակարդակը երկրում: 15. Գիտական հետազոտությունների և մշակումների բնագավառում տնտեսություն-համալսարաններ սահմանափակ համագործակցությունը: 16. Ժամանակակից սարքավորումների ձեռքբերման և ենթակառուցվածքի կատարելագործման սահմանափակ հնարավորությունները բուհերում: 17. Կիրառական հետազոտությունների ցածր տեսակարար կշիռը: 18. Հետազոտությունների և մշակումների առևտրայնացման ցածր մակարդակը: 19. Գիտահետազոտական կառույցների չհամակարգված գործունեությունը՝ միասնական հետազոտական հարթակի բացակայությամբ: 20. Գիտահետազոտական կառույցների գործունեության գնահատման համապարփակ ցուցիչների բացակայությունը: 21. Ֆինանսավորման ծավալների չկապակցվածությունը

	<p>գիտահետազոտական կառույցների հետազոտությունների արդյունքներին:</p> <p>22. Բուհերում՝ հետազոտական կառույցների զարգացման սահմանափակ կարողությունները:</p> <p>23. Հետազոտողների արտասահմանյան վերապատրաստումների և միջազգային փոխանակման ծրագրերի մասնակցության սահմանափակ հնարավորությունները:</p> <p>24. Պետության կողմից ուսման վարձի ամբողջական փոխհատուցում ստացող ուսանողների փոքր տեսակարար կշիռը:</p> <p>25. Ֆինանսավորման փոքր ծավալների պատճառով բուհերի կախվածությունը ուսանողական վարձերից:</p> <p>26. Ուսանողական վարկավորման և ուսման վարձերի վճարման հետաձգման կառուցակարգերի թերզարգացվածությունը:</p> <p>27. Ուսանողների հասցեական ֆինանսավորման համակարգի բացակայությունը:</p> <p>28. Ուսանողների ֆինանսական աջակցության գործող ծրագրերի անկատարությունը:</p> <p>29. Ուսանողների ֆինանսական աջակցության թիրախների բացակայությունը:</p> <p>30. ՀՀ տեղական կամ արտերկրի հիմնադրամներից ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների փոքր տեսակարար կշիռը:</p> <p>31. Բավականին թույլ են զարգացած առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար համապատասխան ճարտարապետական ենթակառուցվածքները և միջավայրը, ինչը շատ դեպքերում խոչընդոտում է նրանց իրավունքների հավասարապես իրացմանը:</p> <p>32. Հաշմանդամների համար գրեթե բացակայում են ադապտացված կրթական և աշխատանքի տեղավորման ծրագրերը:</p> <p>33. Մարզերում որակյալ կրթություն ապահովող բուհերի սակավաթվությունը,</p> <p>34. Բացակայում են կարճ ցիկլով բակալավրիական ծրագրերը, որոնք հնարավորություն կտան մարզերի բնակիչների բակալավրիատի 1-2 կուրսերի կրթական ծրագրերը ստանալ մարզային համալսարաններում, իսկ բարձր կուրսերն ավարտել մայրաքաղաքում:</p> <p>35. Հեռավար կրթության իրականացումն ապահովող տեխնիկական և ծրագրային պայմանների բացակայությունը</p> <p>36. Միջբուհական միացյալ թվային տիրույթի բացակայությունը:</p> <p>37. Որոշ բուհերում ոչ տեղաբնակ ուսանողների համար նախատեսված համալսարանական ենթակառուցվածքների բացակայությունը կամ թույլ զարգացվածությունը:</p> <p>38. Բուհերի պետական ֆինանսավորման և կատարողականի կապակցված չլինելը:</p> <p>39. Ռազմավարական պլանավորման և ծրագրային բյուջետավորման բացակայությունը:</p> <p>40. Հաշվետվողականության և մշտադիտարկման</p>
--	--

	<p>մեխանիզմների և միասնական տեղեկատվական հարթակի բացակայությունը</p> <p>41. Միջազգային դրամաշնորհային և շարժունության ծրագրերի ազդեցության գնահատման բացակայությունը,</p> <p>42. Միջազգային շարժունության ծրագրերի պետական ֆինանսավորման, ֆոնդերի, հիմնարկների բացակայությունը կամ աննշան լինելը:</p> <p>43. Միջազգայնացման ռազմավարության բացակայությունը:</p>
<p>ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>	<p>ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ</p>
<ol style="list-style-type: none"> 1. Հորիզոն-2020 ծրագրի ասոցացված անդամակցությունը 2. Սփյուռքի ներգրավումը գիտահետազոտական նախագծերում 3. Միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցության աճի հեռանկարը 4. Միջազգային ծրագրերի հասանելիությունը 5. Արտերկրի համալսարանների և գիտահետազոտական կառույցների հետ համագործակցության զարգացումը 6. Հասցեական ֆինանսավորման համակարգին անցմամբ բարձրագույն կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ապահովումը 7. Միջազգային համագործակցության ղլորտում արտաքին և ներքին ֆինանսավորման աղբյուրների ավելացումը: 	<ol style="list-style-type: none"> 1. Հանրային ընկալման մեջ բարձրագույն կրթության դերի թերագնահատման միտման պահպանումը և խորացումը: 2. Ուղեղների արտահոսքի տեմպերի պահպանումը կամ ավելացումը: 3. Գիտական հետազոտությունների արդյունքների նկատմամբ մասնավոր հատվածի հետաքրքրվածության ցածր մակարդակի պահպանումը: 4. Ժողովրդագրական բացասական միտումների խորացմամբ դիմորդների թվի կրճատումը: 5. Տնային տնտեսությունների գնողունակության անկումը: 6. Գլոբալ տնտեսությունում զբաղմունքների տեսակների սրընթաց վերափոխումները: 7. Բարձրագույն կրթության կենտրոնացումը Երևանում գնալով խորանալու է, ինչը հանգեցնելու է մարզային բուհերի լուծարմանը՝ անբավարար դիմորդներ և հետևաբար նաև անբավարար ֆինանսավորում ունենալու հետևանքով 8. Շահակիցների կողմից դիմադրությունը փոփոխություններին 9. Քաղաքական պատճառներով միջազգային դրամաշնորհային ծրագրերի կրճատման ռիսկ ԵԱՏՄ երկրներում: 10. Շահակիցների կողմից դիմադրություն փոփոխություններին,

ԳԼՈՒԽ 2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի տեսլականը և առաքելությունը

1. Բարձրագույն կրթության համակարգի **տեսլականն** է ունենալ մրցունակ, ճկուն, արդյունավետ կարգավորվող և ինքնակառավարվող, դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների վրա խարսխված, նորարարական և հետազոտական գործունեությունը խրախուսող բարձրագույն կրթության համակարգ՝ հասանելի հանրության բոլոր խմբերին, որն իր նպաստը կբերի հասարակության ու տնտեսության երկարաժամկետ կայուն զարգացմանը:
2. Բարձրագույն կրթության համակարգի **առաքելությունն** է որակյալ կրթության միջոցով նպաստել ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, մասնագիտական խորը և կիրառական հմտություններով, ստեղծարար և քննադատական մտածողությամբ օժտված, ազգային և միջազգային աշխատաշուկայում մրցունակ անհատների ձևավորմանը, ովքեր իրենց նպաստը կբերեն ՀՀ սոցիալական, մշակութային, տնտեսական և գիտատեխնիկական զարգացմանը:

2. Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության բարեփոխման ռազմավարության նպատակները և երկարաժամկետ զարգացման ծրագրի գործողությունները

Նպատակներ և ենթանպատակներ	Գործողություններ
<p>Նպատակ 1. Բարձրագույն կրթության բովանդակային հենքի արդիականացմամբ հասնել արտաքին փոփոխություններին արձագանքող և փոփոխություններ գեներացնող բարձրագույն կրթության համակարգի կայացմանը:</p>	
<p>Նպատակ 1.1. Նպաստել բուհերում կրթական ծրագրերի բարեփոխումներին</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բարձրագույն կրթության մասնագիտությունների որոշման և պարբերական վերանայման ընթացակարգերի սահմանում՝ հիմքում ունենալով պետության առաջնահերթությունները, աշխատաշուկայի կարիքները, զարգացման միտումները և միջազգային դասակարգիչները: 2. Բարձրագույն կրթության մասնագիտությունների ոլորտների որակավորումների շրջանակի մշակման, ներդրման ու վերանայման սկզբունքների և ընթացակարգերի ձևավորում: 3. Բարձրագույն կրթության մասնագիտությունների ոլորտների շրջանակի ներդրում: 4. Բարձրագույն կրթության մասնագիտությունների սահմանման և վերանայման նպատակով միասնական տեղեկատվական համակարգի ձևավորում: 5. Բուհերում վերջնարդյունքների վրա հիմնված մրցունակ, մոդուլային կառուցվածքով կրթական ծրագրերի մշակման, ներդրման և մշտադիտարկման միասնական սկզբունքների և չափանիշների մշակում: 6. Որակավորումների ազգային շրջանակին, մասնագիտությունների ոլորտային շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող կրթական ծրագրերի մշակման և ներդրման խթանում:

	<ol style="list-style-type: none"> 7. Ծրագրային հավատարմագրման ընթացակարգերի, չափանիշների ու ցուցիչների հստակեցում և գործընթացի կազմակերպում: 8. Անհատական կրեդիտային բեռնվածքով ծրագրերի ներդրման խթանում: 9. Կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման ու գնահատման փուլերում արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը երաշխավորող կառուցակարգերի ներդրում: 10. Գործատուների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման խթանում՝ շրջանավարտների զբաղվածությունակության թիրախավորմամբ: 11. Աշխատաշուկայի կարիքների ամենամյա մշտադիտարկման միասնական տեղեկատվական համակարգի մշակում:
<p>Նպատակ 1.2. Բարեփոխել բուհ ընդունելության և ներքին շարժունության գործընթացները</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ըստ մասնագիտությունների ընդունելության տեղերի հատկացման նոր սկզբունքների մշակում՝ թիրախավորելով պետության առաջնահերթությունները, աշխատաշուկայի առկա պահանջարկը և միտումները: 2. Ընդունելության կառուցակարգերի վերափոխում՝ թիրախավորելով բուհերի միջև հավասար մրցակցային պայմանների ապահովումը և բուհերի կողմից իրենց ուսանողներին ազատորեն ընտրելու հնարավորության ընձեռումը: 3. Ներքին շարժունության խթանման և անհատականացված կրեդիտային կառուցվածքով ծրագրերին անցումն ապահովելու նպատակով հավատարմագրված բուհերի միջև միևնույն վերջնարդյունքներն ապահովող դասընթացների կրեդիտների փոխճանաչման կառուցակարգերի ներդրում: 4. Հայաստանյան բուհերի միջև կրկնակի և համատեղ որակավորում շնորհող կրթական ծրագրերի ներդրման և իրականացման կառուցակարգերի մշակում:

<p>Նպատակ 1.3. Խթանել դասավանդման, ուսումնառության, գնահատման մոտեցումների արդիականացումը բուհերում</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բարձրագույն կրթության բոլոր աստիճանների կրթական ծրագրերում կիրառական, հետազոտական և նորարարական բաղադրիչների ավելացում: 2. Բուհերի կողմից դասավանդման, ուսումնառության և գնահատման առաջավոր փորձի շարունակական ուսումնասիրման և կրթական գործընթացում ներդրման պահանջների և չափման ցուցիչների սահմանում և ներդրման ֆինանսական խթանների ձևավորում: 3. Դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների միջև կապի ապահովման, մշտադիտարկման, բարելավման պահանջների սահմանում և չափման ցուցիչների ներդրում: 4. Դասավանդվող մոդուլներից ուսանողների բավարարվածության գնահատման կառուցակարգերի ներդրում:
<p>Նպատակ 1.4. Նպաստել բուհերում կրթական ծրագրերի իրականացման ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բուհերի ՏՀՏ հազեցվածության մակարդակի բարձրացում և կրթական գործընթացում ՏՀՏ կիրառման ընդլայնում: 2. Համալսարանական հետազոտական կենտրոնների և տեխնիկապես հազեցած լաբորատորիաների հիմնում: 3. Բուհերին հետազոտական պատվերների տրամադրման և կրթական գործընթացում հետազոտությունների արդյունքների ինտեգրման կառուցակարգերի ներդրում: 4. Բուհերի գրադարանային ֆոնդի և ենթակառուցվածքների արդիականացում, միջբուհական գրադարանային համագործակցության խթանում : 5. Բուհերում՝ ըստ մասնագիտական պրոֆիլի առանձնահատկությունների ուսանող-դասախոս, ուսանող-ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմ հարաբերակցության նոր չափանիշների սահմանում: 6. Բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության, առաջխաղացման, մասնագիտական և մանկավարժական

	<p>կարողությունների գնահատման, որակավորման բարձրացման և ՊԴ սերնդափոխության կառուցակարգերի ներդրում:</p> <ol style="list-style-type: none"> 7. Կրթական գործընթացում համապատասխան ոլորտներից հրավիրյալ մասնագետների ներգրավման տեսակարար կշռի ավելացում: 8. Բուհերում վարչական անձնակազմի կառավարչական ունակությունների բարձրացում՝ վարչական անձնակազմին ներկայացվող պահանջների խստացմամբ:
<p>Նպատակ 1.5. Նպաստել բուհերում կրթական ծրագրերի որակի ապահովման համակարգի զարգացմանը</p>	<ol style="list-style-type: none"> 1. Կրթական ծրագրերի որակի ապահովման ներքին և արտաքին համակարգերի զարգացում: 2. Ներքին և արտաքին շահակիցների կողմից կրթական ծրագրերի որակի պարբերական գնահատման կառուցակարգերի ներդրում, 3. Կրթական ծրագրի շրջանավարտների հետ հետադարձ կայուն կապի համակարգի ձևավորում և շրջանավարտի կարիերայի հետազոծի մշտադիտարկում: 4. Բարձրագույն կրթության ոլորտում լիցենզավորման, որակի ապահովման և վերահսկողության չափանիշների և չափորոշիչների վերանայում:
<p>Նպատակ 2. Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության բարձրացում:</p>	
<p>Նպատակ 2.1. Բարեփոխել բարձրագույն կրթության կառավարման համակարգը</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բարձրագույն կրթության կառավարման արդյունավետության ցուցանիշների համակարգի մշակում՝ հիմնված հաշվետվողականության և ինքնուրույնության սկզբունքների վրա: 2. Բարձրագույն կրթության կառավարման օպտիմալ մոդելի մշակում (ներառելով բուհերի քանակը, հաշվետվողականության կառուցակարգերը, նրանց նկատմամբ նվազագույն պահանջները՝ ըստ արդյունավետության չափանիշների): 3. Բուհերի վերակազմակերպում և խոշորացում՝ ըստ մշակված մոդելի,

	<p>մասնագիտական պրոֆիլների, բուհերի առաքելությունների նույնականության և համաչափ տարածքային զարգացման առաջնահերթությունների:</p> <ol style="list-style-type: none"> 4. Ըստ սահմանված ցուցանիշների բարձրագույն կրթության կառավարման մշտադիտարկում և բարելավման աշխատանքների ձեռնարկում: 5. Բուհերում ռազմավարական պլանավորման անցնելու պահանջի սահմանում: 6. Բուհերի կառավարման բարձրագույն մարմինների ձևավորման սկզբունքների փոփոխություն: 7. Բուհերում էլեկտրոնային կառավարման համակարգերի աստիճանական ներդրման պահանջների ամրագրում և անցման աջակցում: 8. Բուհերի կողմից իրենց կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հստակեցում, գործառույթների կատարողական ցուցիչների մշակում և կառուցվածքային ստորաբաժանումների արդյունավետության գնահատման չափանիշների ներդրում: 9. Բուհերում կայունության և զարգացման ֆոնդերի ձևավորման պահանջների սահմանում:
<p>Նպատակ 2.2. Ձևավորել բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության մշտադիտարկման և գնահատման ինստիտուցիոնալ հենք</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության չափանիշների և ցուցիչների սահմանում (Key Performance Indicators): 2. Բարձրագույն կրթության համակարգի մշտադիտարկման տեղեկատվական համակարգի ձևավորում: 3. Բուհերի կատարողական ցուցանիշների սահմանում և նախարարություն-բուհ կատարողականի պայմանագրերի կնքում (Performance Contracts): 4. Բուհերի կողմից ըստ կատարողականի հաշվետվությունների

	<p>ներկայացման ընթացակարգերի և ձևաչափերի մշակում և ներդրում:</p>
<p>Նպատակ 2.3. Բարձրացնել բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի արդյունավետությունը:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Պետական բյուջեից բարձրագույն կրթության ֆինանսավորման սկզբունքների վերանայում և աստիճանական անցում ծրագրային բյուջետավորմանը: 2. Բուհերի բազային ֆինանսավորման գերակա ուղղությունների սահմանում՝ նպատակադրելով պետության առաջնահերթությունները: 3. Բուհերի ֆինանսավորման համակարգի վերանայում և ֆինանսավորման փոխկապակցում կատարողականին: Բուհերի կատարողականի հիման վրա լրացուցիչ (բոնուսային) ֆինանսավորման կառուցակարգերի սահմանում: 4. Բուհերի մրցակցային ֆինանսավորման (հետազոտությունների ֆինանսավորման) կառուցակարգերի մշակում և ներդրում:
<p>Նպատակ 2.4. Հասնել բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման ծավալների ավելացմանը</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բարձրագույն կրթության ֆինանսավորման չափերի մերձեցում ՏՀԶԿ անդամ երկրներում ՀՆԱ-բարձրագույն կրթության ծախսեր հարաբերակցությանը : 2. Բուհերի ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցում՝ ներառելով մասնավոր հատվածից նվիրատվությունների և ներդրումների խթանման արտոնությունների տրամադրման կառուցակարգերը: 3. Բուհերի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սկզբունքների և չափանիշների մշակում և ներդրում: 4. Բուհերում ֆանդայզինգի ինստիտուտի խթանում:
<p>Նպատակ 2.5. Բարձրացնել բուհերի սոցիալական պատասխանատվության և հաշվետվողականության մակարդակը:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Բուհերի արտաքին հաշվետվողականության միասնական չափանիշների և ընթացակարգերի ձևավորում: 2. Բուհերի գործունեության թափանցիկության բարձրացում: 3. Բուհերի և դրանց կրթական ծրագրերի համեմատական վերլուծության

	<p>միասնական տեղեկատվական համակարգի գործարկում:</p> <ol style="list-style-type: none"> 4. Բուհերի կատարողական ցուցանիշներում սոցիալական պատասխանատվությանը վերաբերող պարտադիր ցուցանիշների սահմանում: 5. Բուհերի կողմից հանրությանը մատուցվող ծառայություններում շարունակական կրթության և վերաորակավորման ապահովման բաղադրիչի ամրագրում՝ թիրախավորելով սոցիալապես անապահով և խոցելի խմբերին նման ծառայությունների անվճար մատուցումը:
<p>Նպատակ 3. Բարձրագույն կրթության մատչելիության մակարդակի բարձրացում</p>	
<p>Նպատակ 3.1 Ընդլայնել բնակչության սոցիալական բոլոր խմբերի՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ուսանողների ֆինանսավորման կառուցակարգերի բարեփոխում՝ հասցեական ֆինանսավորման համակարգի ներդրմամբ: 2. Ուսանողների ֆինանսավորման թիրախների, ինչպես նաև դրանց միջև համամասնությունների ու առաջնահերթությունների սահմանում: 3. Պետական բյուջեից ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման հասցեականության ապահովման նպատակով առանձին հիմնադրամի կամ այլ կառույցի ձևավորում: 4. Կոռուպցիոն ռիսկերի բացառման նպատակով հիմնադրամի կողմից ուսանողների ուսման վարձի փոխհատուցման հստակ և թափանցիկ սկզբունքների և չափանիշների ներդրում: 5. Ուսանողների ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցող տեղական և արտերկրի հիմնադրամների հետ համագործակցության ձևաչափերի մշակում: 6. Անհատականացված կրթաթոշակների և ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման նոր համակարգի ներդրմամբ ֆինանսավորման հասցեականության մեծացում: 7. Բուհերում ներառական կրթության պայմանների և ենթակառուցվածքների ձևավորում կամ բարելավում:

	<p>8. Հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև բնակչության այլ խոցելի խմբերի ուսանողների համար սոցիալական աջակցության ծրագրերի ավելացում:</p> <p>9. Արտոնյալ պայմաններով ուսանողական վարկերի տրամադրման կառուցակարգերի ներդրում:</p>
<p>Նպատակ 3.2. Տարածքային համաչափ զարգացման համատեքստում ստեղծել բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություններ:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Մարզային համալսարանների ցանցի հիմնում, մարզերում կարճ ցիկլով նախաբակալավրիատի կրթական ծրագրերի իրականացում: 2. Ինտերակտիվ դասավանդման հնարավորությունների զարգացում՝ հեռավար կրթության մատուցման տեղեկատվական տեխնոլոգիական հենքի ձևավորմամբ: 3. Հեռավար կրթության կրթական ծրագրերի մշակում, օնլայն ռեժիմում դասավանդման, ուսումնառության և գնահատման լավագույն փորձառության արդյունքներին համապատասխանող մեթոդաբանության ներդրում: 4. Հեռավար կրթության տրամադրման նպատակով միացյալ թվային տիրույթի ձևավորում՝ ներառյալ բուհական էլեկտրոնային գրադարանային ռեսուրսների միասնական հարթակի գործարկումը: 5. Հանրակացարանային պայմանների բարելավում, ուսանողի կեցության այլ ձևաչափերի (հոսթելներ, հատուկ վարձակալվող կացարաններ և այլն) ներդրում՝ ներառյալ կեցության ֆինանսավորման կառուցակարգերը: 6. Ուսանողներին մատչելի տրանսպորտի և սննդի ծառայությունների մատուցման կառուցակարգերի ներդրում:

Նպատակ 4. Գիտության, կրթության և տնտեսության միջև համագործակցության զարգացում

<p>Նպատակ 4.1. Ստեղծել գիտության զարգացման և կիրառական հետազոտությունների խթանման ինստիտուցիոնալ հիմքեր</p>	<ol style="list-style-type: none"> 1. Մշակել գիտության զարգացման ռազմավարություն՝ թիրախավորելով գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունները, որոնց գծով պետությունն ունի մրցակցային առավելություններ և որոնց շարունակական կատարելագործումը կհանգեցնի պետության սոցիալ-տնտեսական զարգացմանը: 2. Կատարելագործել հետազոտությունների և տեխնոլոգիական նորարարությունների զարգացմանը միտված պետական աջակցության կառուցակարգերը : 3. Ապահովել պետական ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտությունների արդյունքների կիրառելիությունը և համապատասխանությունը տնտեսության տարբեր ճյուղերի արդի կարիքներին և զարգացման միտումներին: 4. Մշակել նորաստեղծական կլաստերների զարգացման օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքեր՝ միավորելով արդյունաբերական ձեռնարկությունների, հետազոտական կենտրոնների, բարձրագույն ուսումնական հաստատությունների տեխնոլոգիական և ինտելեկտուալ ներուժը և ֆինանսական ռեսուրսները՝ համալսարաններ-ձեռնարկություններ փոխգործակցության մեջ ապահովելով սոցիալական գործընկերության սկզբունքի իրացումը: 5. Մշակել և ներդնել մասնավոր հատվածի կողմից համալսարաններում իրականացվող հետազոտությունների ֆինանսավորման չափով հարկերից ազատման արտոնությունների համակարգ: 6. Ձևավորել գիտահետազոտական կառույցների վերակազմակերպման բուհերի հետ վերամիավորման ինստիտուցիոնալ հենք՝ թիրախավորելով հանրային ռեսուրսների առավել արդյունավետ և օպտիմալ գործադրումը:
---	---

	<p>7. Մշակել գիտահետազոտական կառույցների գործունեության արդյունավետության մշտադիտարկման և գնահատման չափանիշներ ու կառուցակարգեր, ներդնելով արդյունավետության գնահատման այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են՝ R&D գործարքների թիվը, արտոնագրերի լիցենզավորումից համալսարանների եկամուտները, համալսարանական սթարթափների թիվը և այլն:</p>
<p>Նպատակ 4.2. Ձևավորել համալսարանների հետազոտական գործունեության խթանման ինստիտուցիոնալ հենք:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Խթանել գիտահետազոտական գործունեության արդյունքների նկատմամբ պահանջարկը՝ պետության ֆինանսավորման սկզբունքների և կառուցակարգերի վերանայմամբ՝ ֆինանսավորման հիմքում դնելով կատարողականի վրա հիմնված արդյունքները: 2. Ստեղծել կիրառական հետազոտությունների ֆինանսավորման հիմնադրամ՝ իր հաշվետվողականության ու արդյունավետության չափանիշներով, որի միջոցով կֆինանսավորվեն պետության կողմից սահմանված գերակա ոլորտներում իրականացվելիք հետազոտությունները 3. Ձևավորել մրցութային սկզբունքով բուհերի հետազոտական ծրագրերի ֆինանսավորման կառուցակարգեր և պետության համար ռազմավարական կարևորություն ներկայացնող ոլորտներում կադրային ներուժի զարգացման առաջնահերթությունների վերհանմամբ՝ ուղղորդել համալսարանական հետազոտությունների իրականացումը թիրախային ուղղություններով: 4. Զարգացնել գիտահետազոտական կենտրոնների ինստիտուցիոնալ կարողությունները 5. Մշակել հետազոտության արդյունքների առևտրայնացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման կառուցակարգեր: 6. Խրախուսել երիտասարդ գիտնականների ներգրավվածությունը կիրառական և առաջնահերթ սահմանված հետազոտությունների

	ոլորտներում
Նպատակ 5. Հասնել միջազգային կրթական շուկային հայաստանյան բուհերի լիարժեք ինտեգրմանը	
<p>Նպատակ 5.1. Ձևավորել բարձրագույն կրթության միջազգայնացումը խթանող միջավայր</p>	<ol style="list-style-type: none"> 1. Մշակել բարձրագույն կրթության միջազգայնացման առանձին ռազմավարություն՝ ներառյալ ռազմավարական նպատակներին հասնելու գործողությունների, ֆինանսական և ռեսուրսային ծրագրերը: 2. Մշակել ռազմավարական նպատակների իրագործման մշտադիտարկման, գնահատման ընթացակարգեր և ցուցիչներ: 3. Մշակել բուհերի միջազգային գործունեության իրավական կարգավորման նորմերի միասնական փաթեթ, հաշվի առնելով միջազգային համաձայնագրերով ՀՀ ստանձնած հանձնառությունները, ԵԲՏ օրենսդրությանը ՀՀ իրավական կարգավորումների և ընթացակարգերի ներդաշնակեցման անհրաժեշտ ուղղությունները, բարձրագույն կրթության միջազգայնացման ոլորտում օրենսդրական բացերով կամ գերկարգավորումների առկայությամբ պայմանավորված խնդիրները: 4. Մշակել բուհերում միջազգայնացման ռազմավարությունների և արտաքին շարժունությունը խթանող կառուցակարգեր՝ թիրախավորելով ԵԱՏՄ և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում համատեղ ծրագրերի զարգացումը:
<p>Նպատակ 5.2. Բարձրացնել ՀՀ բարձրագույն կրթության միջազգային տեսանելիությունը և գրավչությունը</p>	<ol style="list-style-type: none"> 1. Մշակել միջազգային վարկանիշավորման համակարգերում հայաստանյան բուհերի դիրքավորման /կամ դիրքերի բարելավման/ գործողությունների ծրագիր: 2. Մշակել հայաստանյան բուհերի միջազգային փոխգործակցության զարգացմանը նպաստող կառուցակարգեր: 3. Հայաստանյան բուհերի միջազգային ճանաչելիության բարձրացման,

	<p>բարձրագույն կրթության շուկայում ազգային բրենդի դիրքավորման և առաջնիման նպատակով մշակել առանձին մարքեթինգային ռազմավարություն (ներառյալ նպատակային շուկաները, գովազդատեղեկատվական միջոցառումները)</p> <p>4. Հայաստանյան կրթական ծրագրերի վերաբերյալ օտարերկրյա ուսանողների տեղեկացվածության բարձրացման նպատակով ձևավորել ՀՀ բուհերում ուսանելու հիմնական պայմանները (factsheet), առավելությունները և հնարավորությունները մանրամասն նկարագրող օտարալեզու տեղեկատվական հարթակ</p>
<p>Նպատակ 5.3. Ընդլայնել միջազգային համագործակցությունը բարձրագույն կրթության, հետազոտությունների և նորարարության բնագավառում</p>	<ol style="list-style-type: none"> 1. Մշակել միջազգային գիտական, հետազոտական և նորարարական դրամաշնորհային ծրագրերին հայաստանյան բուհերի մասնակցությունը խթանող միջոցառումների համալիր: 2. Մշակել միջազգային գերազացության կենտրոնների հետ գործընկերային հարաբերությունների ձևավորման և ընդլայնման գործողությունների ծրագիր: 3. Մշակել միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների աճին նպաստող ֆինանսական խթանների համակարգ: 4. Միջազգային շուկայում հայաստանյան բուհերում կատարված հետազոտությունների և մշակումների առևտրայնացման նպատակով ձևավորել ֆանդայզինգի միասնական համակարգ: 5. Միջազգային ասպարեզում հայաստանյան բուհերի կրթական ծրագրերի մրցունակության բարձրացման նպատակով մշակել օտար լեզուներով ուսանողներին առաջարկվող կրթական ծրագրերի բազմազանեցման քաղաքականություն: 6. Խթանել օտար լեզուներով համատեղ և կրկնակի որակավորմամբ կրթական ծրագրերի իրականացումը: 7. Աջակցել կրթական ծրագրերի հավատարմագրմանը միջազգային հայտնի ասոցիացիաների և հավատարմագրող կառույցների կողմից

	այդ կրթական ծրագրերի նկատմամբ վստահության բարձրացման նպատակով,
Նպատակ 5.4. Ավելացնել ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի միջազգային շարժունությունը	<ol style="list-style-type: none"> 1. Խթանել պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական անձնակազմի վերապատրաստումների, միջազգային փոխանակման ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշների աճը: 2. Նպաստել միջազգային փոխանակման ծրագրերում ուսանողների մասնակցությանը՝ նվազագույնի հասցնելով արտաքին շարժունությունը սահմանափակող արգելքները, 3. Մշակել ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի միջազգային շարժունության ֆինանսավորման սկզբունքներ, 4. Մշակել ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի միջազգային շարժունության <i>ազդեցության</i> գնահատման ցուցիչներ, իրականացնել մշտադիտարկում և ձեռնարկել բարելավման միջոցառումներ:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՍՆԵԼՈՒՆ ՄԻՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բարձրագույն կրթության մատչելիության մակարդակի բարձրացումը

Մատչելիությունը բարձրագույն կրթություն ստացող ուսանողների թվի ավելացման կարևորագույն նախապայմաններից է: Այն ենթադրում է բարձրագույն կրթության ստացման հավասար պայմանների ապահովում սոցիալական տարբեր խմբերի համար և նախատեսում է ֆինանսական աջակցության ծրագրերի առկայություն (ցածր եկամուտներ ունեցող, ծնողական խնամքից զրկված և այլ խմբերի համար) ու կրթության ստացման համապատասխան ենթակառուցվածքների ու միջավայրի ապահովում (հաշմանդամություն, որոշակի հիվանդություններ ու լեզվական խնդիրներ ունեցող և ազգային փոքրամասնություններ ներկայացնող անձանց համար):

Գործողություններ

Ուսանողների ֆինանսավորման կառուցակարգերի բարեփոխում՝ հասցեական ֆինանսավորման համակարգի ներդրմամբ:

Ներկայումս գործող ուսանողների ֆինանսական աջակցության համակարգի փոխարեն աստիճանաբար պետք է անցում կատարել հասցեական ֆինանսավորման համակարգին: Ի սկզբանե բոլոր ուսանողները պետք է ընդունվեն վճարովի ուսուցման համակարգ, այնուհետև, ելնելով տարբեր սոցիալական խմբերին պատկանելիությունից և ընդունելության քնությունների ժամանակ ցուցաբերած գնահատականներից, նրանց պետք է տրամադրվեն ուսման վարձավճարների ամբողջական կամ մասնակի փոխհատուցում՝ համապատասխան սոցիալական խմբերին պատկանելիությունը հավաստող

փաստաթղթերի իսկությունը ստուգելու և կարիքավորության աստիճանը որոշելու միջոցով: Ուսանողների կարիքավորության աստիճանը որոշելու համար ուսանողները պետք է ռեյտինգավորվեն ըստ համապատասխան ցուցանիշների: Այդ նպատակով պետք է մշակվեն և ներդրվեն ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման հստակ և բոլորին հասկանալի ու թափանցիկ մեխանիզմներ՝ հաշվի առնելով նաև անձնական տեղեկատվության գաղտնիության պահպանման պահանջները:

Ուսանողների ֆինանսավորման թիրախների, ինչպես նաև դրանց միջև համամասնությունների ու առաջնահերթությունների սահմանում:

Որպես ուսանողների ֆինանսավորման թիրախներ են սահմանվում առաջադիմությունը, կարիքավորությունը, պետության համար գերակա մասնագիտությունների գծով սովորելու ցանկությունը և կեցության պայմանների ապահովումը: Առաջադիմության և կարիքավորության վրա հիմնված կրթաթոշակային ծրագրերին պետք է ուղղվեն ամբողջ ֆինանսավորման 35-ական տոկոսները, գերակա մասնագիտությունների գծով կրթաթոշակային ծրագրին՝ 20%-ը, իսկ կեցության պայմանների բարելավմանը՝ 10%-ը:

Պետական բյուջեից ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման հասցեականության ապահովման նպատակով առանձին հիմնադրամի կամ այլ կառույցի ձևավորում:

Սույն ռազմավարության իրականացման նպատակներից մեկը բարձրագույն կրթության ֆինանսավորման ուղիների բազմազանեցումն է և ուսանողների ընտանիքների ֆինանսական բեռի թեթևացումը: Պետությունը այսօր փոխհատուցում է ուսանողների ուսման վարձերի 14%-ը: Որպես թիրախային ցուցանիշ պետք է սահմանվի ստեղծվող հիմնադրամի միջոցով ուսման վարձերի առնվազն 30%-ի փոխհատուցումը: Տնային տնտեսությունների վրա ուսման

վարձերի բեռը պետք է աստիճանաբար նվազեցվի և հասցվի 50%-ի: Մասնավոր հատվածը ուսանողների նպատակային ֆինանսավորման և հետագայում իրենց մոտ աշխատանքի ընդունման երաշխիքների միջոցով պետք է ֆինանսավորի ուսման վարձերի 20%-ը: Բուհերի եկամուտների մեջ ուսման վարձերի տեսակարար կշիռը աստիճանաբար պետք է նվազեցվի՝ հասնելով 50%-ի, և հակառակը բուհերի ֆինանսավորման այլ աղբյուրները պետք է աճեն (հետազոտություններ, ձեռնարկատիրական գործունեություն և այլն): Ուսման վարձի չափը անմիջականորեն պետք է կախված լինի ուսումնական հաստատության կրթական ծրագրերի որակից: Պետությունը սահմանելու է ուսման վարձավճարների այն միջակայքը, որի սահմաններում կարող է տատանվել տվյալ կրթական ծրագրով իրականացվող ուսուցումը:

Ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման հասցեականությունն ապահովելու համար պետք է ստեղծվի համապատասխան հիմնադրամ: Հիմնադրամի բյուջեն ձևավորվելու է ուղղակի պետական հատկացումների, մասնավոր հատվածի և անհատների կամ բարեգործական հիմնադրամների նվիրատվությունների հաշվին:

Կոռուպցիոն ռիսկերի բացառման նպատակով հիմնադրամի կողմից ուսանողների ուսման վարձի փոխհատուցման հստակ և թափանցիկ սկզբունքների և չափանիշների ներդրում:

Հիմնադրամի գործունեության թափանցիկությունը և անաչառությունը ապահովելու և կոռուպցիոն ռիսկերից զերծ մնալու նպատակով պետք է մշակվի և ներդրվի ուսանողական նպաստների և կրթաթոշակների տրամադրման կարգ, որում հստակ կսահմանվեն այն սկզբունքները և չափանիշները, որոնցով իրականացվելու է ուսանողների հասցեական ֆինանսավորումը:

Ուսանողների ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցող տեղական և արտերկրի հիմնադրամների հետ համագործակցության ձևաչափերի մշակում:

Բացի վերը նշված հիմնադրամից ուսանողների ուսման վարձերի լրիվ կամ մասնակի փոխհատուցումը պետք է իրականացվի նաև տեղական կամ արտասահմանյան այլ հիմնադրամների միջոցով, որոնց հետ համագործակցությունն ընդլայնելու նպատակով պետք է մշակվեն համապատասխան կառուցակարգեր:

Անհատականացված կրթաթոշակների և ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման նոր համակարգի ներդրմամբ ֆինանսավորման հասցեականության մեծացում:

Ուսանողների հասցեական ֆինանսավորման մեխանիզմը նախատեսում է ֆինանսական աջակցության հետևյալ ծրագրերը.

- 1. Մասնագիտական կրթաթոշակային ծրագիր,** որի նպատակն է պետության համար առաջնային նշանակություն ունեցող մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստումը: Պետության համար առաջնային նշանակություն ունեցող մասնագիտությունների ցանկը, կրթաթոշակների քանակը և չափը պետք է սահմանվի ՀՀ կառավարության կողմից՝ հիմք ընդունելով աշխատաշուկայի ներկա պահանջարկը և ապագայի կանխատեսումներն ու միտումները: Միևնույն կրթական ծրագիրն իրականացնող բուհերի միջև մասնագիտական կրթաթոշակային ծրագրերի բաշխումն իրականացվելու է կրթական ծրագրերի որակի գնահատման արդյունքների հիման վրա:
- 2. Ուսանողների ֆինանսական աջակցության ծրագիր:** Այս ծրագրի իրականացման համար նախատեսվում է ֆինանսական աջակցություն

տրամադրել այն ուսանողներին, ում ակադեմիական առաջադիմությունը բարձր է որոշակի շեմից և ովքեր ունեն ֆինանսական օգնության կարիք:

3. Սոցիալապես խոցելի և ուսանողների առանձին խմբերի համար նախատեսված նպաստների ծրագիր, որի շրջանակներում ֆինանսական օգնություն (ամբողջ ուսման վարձի կամ դրա մի մասի չափով) կտրամադրվի այն ուսանողներին, ովքեր կհաղթահարեն ՀՀ կառավարության կողմից սահմանված ակադեմիական առաջադիմության և սոցիալական անապահովության որոշակի շեմերը: Այդ նպատակով կարող է ստեղծվել ուսանողի կամ նրա ընտանիքի ֆինանսական վիճակի գնահատման համակարգ՝ հիմնված բազմակողմանի տեղեկատվության վերլուծության և այն հավաստող փաստաթղթերի հավաքագրման վրա:

4. Առաջադիմության որոշակի շեմը հաղթահարած ուսանողների խրախուսման ծրագիր, որը գերազանցության կրթաթոշակներ կտրամադրի ուսանողներին՝ անկախ նրանց ֆինանսական վիճակից և կուրսից:

5. Ուսանողների սոցիալական աջակցության ծրագրերում պետք է ներառել նաև կացարանով ապահովումը, անվճար կամ մասնակի փոխհատուցմամբ տրանսպորտային միջոցների ծառայությունների ապահովումը, անվճար կամ ցածր գնով սննդի ապահովումը: Ավագ ու միջնակարգ դպրոցներում, նախնական և միջին մասնագիտական հաստատություններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար, ովքեր ցանկանում են իրենց ուսումը շարունակել բուհերում պետք է ապահովել անվճար նախապատրաստական դասընթացներ:

Բուհերում ներառական կրթության պայմանների և ենթակառուցվածքների ձևավորում կամ բարելավում:

Տեղական և արտասահմանյան փորձը վկայում է, որ հաշմանդամություն և հատուկ կարիքներ ունեցող շրջանավարտների աշխատանքի տեղավորման

հնարավորությունները ուղղակիորեն կախված են ադապտացված կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների կողմից մասնագիտական կողմնորոշման, ուսանողների սոցիալ-հոգեբանական ուղեկցման, աշխատանքի տեղավորման և հետդիպլոմային աջակցության ծրագրերի առկայության, ֆիզիկական (ճարտարապետական), տեղեկատվական, ուսումնամեթոդական մատչելիության և հաշմանդամություն ունեցող անձանց հետ բուհերի անձնակազմի աշխատանքի հմտությունների առկայությունից: Այդ առումով հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող ուսանողների կրթության մատչելիության և որակի ապահովման նպատակով պետք է իրականացվեն հետևյալ միջոցառումները.

- մասնագիտական կողմնորոշման և բարձրագույն կրթության ստացման նախապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում,
- ադապտացված կրթական ծրագրերի և ուսուցման մեթոդների առկայություն,
- ուսուցման հատուկ պայմանների ստեղծում և ուղեկցում, բարձրագույն կրթության ծրագրերի հաջող յուրացման նպաստում,
- աշխատանքի տեղավորման աջակցություն և հետդիպլոմային ուղեկցում:

Արտոնյալ պայմաններով ուսանողական վարկերի տրամադրման կառուցակարգերի ներդրում:

Ուսանողների ընտանիքների ֆինանսական բեռը թեթևացնելու նպատակով պետք է մշակվեն ուսանողների վարկավորման հստակ կառուցակարգեր, որոնցով պետք է սահմանվեն ուսանողական վարկերի տրամադրման պայմանները, այն է՝ ուսանողական վարկի նվազագույն և առավելագույն չափը, դրանց տոկոսադրույքները, պետության կողմից տոկոսագումարների սուբսիդավորման չափը, վարկի մայր գումարի և տոկոսագումարների վճարման սկիզբը և ավարտը, պարբերականությունը, վճարման հետաձգման համար

անհրաժեշտ պայմանները և այլն: Ուսանողական վարկի մայր գումարի վերադարձման ժամանակը պետք է կապված լինի ուսանողի կողմից աշխատանքի անցնելուց հետո եկամտի որոշակի մակարդակի հասնելու հետ: Ուսանողական վարկի մարմանը պետք է ուղղվի շրջանավարտի ամսական եկամուտների որոշակի տոկոսը: Պետությունը պետք է որոշակի մեխանիզմներով երաշխավորի ֆինանսական հաստատությունների կողմից արտոնյալ պայմաններով տրամադրված վարկի վերադարձը ուսանողների կողմից:

2. Տարածքային համաչափ զարգացման համապեքսություն երկրի բոլոր համայնքների բնակիչների համար բարձրագույն կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ձևավորումը

Ներկայումս Հայաստանի Հանրապետության բուհերի և ուսանողների 80%-ից ավելին կենտրոնացված են Երևան քաղաքում: Դա հանգեցնում է մի կողմից ռեսուրսների անբավարարությանը մայրաքաղաքում և մյուս կողմից թերբեռնվածությանը մարզերում: Միևնույն ժամանակ ֆինանսական միջոցների նվազման արդյունքում մարզային բուհերը բախվելու են լուրջ խնդիրների: Մարզերի բնակիչների կողմից բարձրագույն կրթության ստացման հավասար հնարավորությունների ապահովումը ենթադրում է մարզային համալսարանների առկայություն, ինչը միևնույն ժամանակ լուծում է նաև համաչափ տարածքային զարգացման խնդիրը:

Գործողություններ

Մարզային համալսարանների ցանցի հիմնում, մարզերում կարճ ցիկլով նախաբակլավրիարի կրթական ծրագրերի իրականացում:

Յուրաքանչյուր մարզում պետք է գործի մեկ բազմապրոֆիլ համալսարան՝ ստեղծված ներկայումս գործող համալսարաններից մեկի բազայի վրա, որը

կապահովի առնվազն բակալավրիական ամբողջական կամ կարճ ցիկլով կրթություն: Վերանում են Երևանյան համալսարանների մարզային մասնաճյուղերը: Նոր ստեղծվող մարզային համալսարանների մասնագիտությունները և կրթական ծրագրերը պետք է համապատասխանեն մարզի տնտեսության կառուցվածքին, համալսարանի ներուժին և հնարավորություններին, ինչպես նաև մարզերի զարգացման ռազմավարական ծրագրերին: Մարզային համալսարանների վարձավճարները պետք է ավելի ցածր լինեն Երևանում գործող համալսարանների կրթական ծրագրերի վարձավճարներից:

Ինտերակտիվ դասավանդման հնարավորությունների զարգացում՝ հեռավար կրթության մատուցման տեղեկատվական տեխնոլոգիական հենքի ձևավորմամբ:

Բարձրագույն կրթության աշխարհագրական մատչելիության ապահովման նպատակով բուհերում աստիճանաբար պետք է ներդրվեն ինտերակտիվ դասավանդման հնարավորություններ: Դրա համար պետք է տարեկան որոշակի գումար հատկացնել տեխնիկական հագեցման և հեռահար դասավանդման կարողությունների զարգացման նպատակով:

Հեռավար կրթության կրթական ծրագրերի մշակում, օնլայն ռեժիմում դասավանդման, ուսումնառության և զնահատման լավագույն փորձառության արդյունքներին համապատասխանող մեթոդաբանության ներդրում:

Կրթական ծրագրերը պետք է մշակվեն այնպես, որ հնարավոր լինի կազմակերպել նաև հեռավար կրթությունը, իսկ դասավանդումն իրականացնել օնլայն ռեժիմում: Անհրաժեշտության դեպքում հեռահար ուսուցման համար պետք է մշակվեն առանձին կրթական ծրագրեր, որոնք հաշվի կառնեն օնլայն դասավանդման առանձնահատկությունները և նրբությունները:

Հեռավար կրթության տրամադրման նպատակով միացյալ թվային տիրույթի ձևավորում՝ ներառյալ բուհական էլեկտրոնային գրադարանային ռեսուրսների միասնական հարթակի գործարկումը:

Հեռահար ուսուցման կազմակերպման համար բուհերը պետք է զարգացնեն իրենց էլեկտրոնային գրադարանների հզորությունները, ունենան համապատասխան սերվերներ էլեկտրոնային շտեմարաններ ուսանողների մուտքը անխոչընդոտ կազմակերպման համար: Բացի դրանից անհրաժեշտ է ստեղծել միասնական էլեկտրոնային տիրույթ որտեղ կտեղադրվեն դասախոսության նյութերը, առաջադրանքները, իսկ ուսանողները կստանան անհատական առաջադրանքներ և կգնահատվեն դրանց կատարման համար: Հետագայում նախատեսվում է նաև միջբուհական միասնական գրադարանային տիրույթի ստեղծումը:

Հանրակացարանային պայմանների բարելավում, ուսանողի կեցության այլ ձևերի (հոսթելներ, հափուկ վարձակալվող կացարաններ և այլն) ներդրում՝ ներառյալ կեցության ֆինանսավորման կառուցակարգերը

Բարձրագույն կրթության մատչելիության ապահովման բաղադրիչներից մեկը Երևանում կամ այլ մարզերում սովորել ցանկացող ուսանողների համար բնակարանային խնդրի լուծումն է: Այդ նպատակով պետք է հատկացվեն նպաստներ ուսանողների կեցության ապահովման համար: Պետք է մշակվեն նաև հստակ կառուցակարգեր, որտեղ կամրագրվեն այն նորմերը և սկզբունքները, որոնցով իրականացվելու է կեցության պայմանների ֆինանսավորումը: Դրանցում պետք է ամրագրվեն այն առավելագույն գումարը, որը կհատկացվի մեկ ուսանողին կեցության ապահովման նպատակով, ինչպես նաև մեկ ուսանողին հատկացվող բնակարանի կամ այլ կացարանների նվազագույն մակերեսները: ՀՀ Կառավարությունը պետք է սահմանի բուհերի

հանրակացարանային տնտեսության նվազագույն ծավալ՝ ելնելով ուսանողների թվաքանակից, ինչպես նաև մեկ ուսանողի հաշվով նվազագույն բնակելի մակերես:

3. Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության բարձրացումը

Բարձրագույն կրթության կառավարման համակարգը ներառում է ՀՀ ԿԳՆ-ը, ԿԳՆ կից կառույցները, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը, Կրթության ազգային ինստիտուտը, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը, Գիտության պետական կոմիտեն, Բարձրագույն որակավորման հանձնաժողովը, ԿԳՆ ԿԾԿ-ը, Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոն հիմնադրամը, և բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները: Բարձրագույն կրթության կառավարման համակարգի բարելավումը ենթադրում է բարձրագույն կրթության կառավարման մարմինների, կառուցվածքի, գործառույթների, պատասխանատվության և լիազորությունների վերասահմանում՝ ելնելով հետևյալ սկզբունքներից.

- *Թափանցիկություն.* Կառավարման մարմինների կառուցվածքը, գործառույթները, գործունեության շրջանակը, գործողությունների պլանները և հաշվետվությունները պետք է հստակ և հասանելի լինեն շահակիցների համար,
- *Հաշվետվողականություն.* Բարձրագույն կրթության կառավարման օղակների հաշվետվողականության մեխանիզմները պետք է հստակ սահմանված լինեն, ունենան կատարողականի ցուցիչներ, երկարաժամկետ և տարեկան պլաններ: Կառավարման մարմինների գործառույթները կարող են հակակշռել կամ փոխլրացնել միմյանց՝ կախված համակարգի բնականոն գործունեության պայմանից,

- *Օպտիմալություն*. Կառավարման մարմինների կառուցվածքը պետք է լինի հնարավորինս օպտիմալ՝ ապահովելով բոլոր ստորաբաժանումների և մարմինների կողմից համակարգի համար ավելացված արժեքի ստեղծման պայմանը՝ նավագագույն ծախսերի կատարմամբ,
- *Նպատակայնություն*. Կառավարման մարմինների ձևավորումը/գոյությունը պետք է հիմնավորված լինի ՀՀ-ում բարձրագույն կրթության զարգացմանը նրանց մասնակցությամբ: Հետևաբար այդ մարմինների ձևավորումը/գոյությունը պետք է լինի թիրախավորված՝ ըստ ռազմավարական ուղղությունների իրականացմանը և համակարգի բնականոն աշխատանքի ապահովման,
- *Անկախություն և անաչառություն*. Կառավարման մարմինների լիազորությունների և պատասխանատվության շրջանակը պետք է մշակվի այնպես, որպեսզի ապահովվի նրանց անկախությունը և ինքնուրույնությունը, միաժամանակ ստեղծելով հակակշռող մեխանիզմներ՝ համակարգը չարաշահումներից զերծ պահելու համար:

Գործողություններ

Բարձրագույն կրթության կառավարման արդյունավետության ցուցանիշների համակարգի մշակում՝ հիմնված հաշվետվողականության և ինքնուրույնության սկզբունքների վրա:

Բարձրագույն կրթության կառավարման արդյունավետության ցուցանիշների համակարգի մշակումը ենթադրում է բարձրագույն կրթության կառավարման բոլոր մարմինների համար կատարողականի ցուցիչների սահմանում և հաշվետվողականության մեխանիզմների մշակում՝ ելնելով սույն ռազմավարության կատարման, ինչպես նաև սույն ռազմավարությունից բխելով յուրաքանչյուր կառավարման մարմնի ռազմավարական նպատակների իրականացման անհրաժեշտությունից: Կատարողականի ցուցիչները հիմք են

հանդիսանալու տարեկան հաշվետվությունների կազմման և այդպիսով կատարողականի գնահատման համար և կապակցվելու և ֆինանսավորման մեխանիզմներին: Վերջինս նշանակում է, որ կախված կատարողական արդյունքներից և ռազմավարական նպատակների իրականացումից կարող է ավելացվել և նվազեցվել կառավարման մարմնի գործունեության պետական ֆինանսավորումը:

Բարձրագույն կրթության կառավարման օպտիմալ մոդելի մշակում (ներառելով բուհերի քանակը, հաշվետվողականության կառուցակարգերը, նրանց նկատմամբ նվազագույն պահանջները՝ ըստ արդյունավետության չափանիշների):

Ելնելով օպտիմալության սկզբունքից անհրաժեշտ է բարձրագույն կրթության կառավարման համակարգի համար ապահովել առավելագույն արժեքի ստեղծումը՝ նվազագույն ծախսերով: Այդ նպատակով անհրաժեշտ է տնտեսական և սոցիալական իրավիճակից և ռազմավարական նպատակներից ելնելով մշակել կառավարման օպտիմալ մոդել, որը, ի թիվս այլ հարցերի կներառի նաև հետևյալ հարցերի պատասխանները.

- Վերլուծել կառավարման մարմինների՝ առանձին իրավական կարգավիճակ ունենալու անհրաժեշտությունը (կամ անհրաժեշտության բացակայությունը) և որոշել կառավարման մարմինների, ստորաբաժանումների, անձնակազմի օպտիմալ քանակը,
- Բուհերի դասակարգման համակարգի մշակում և բուհերի օպտիմալ քանակի մշակում՝ ելնելով տնտեսությանն անհրաժեշտ մասնագետների պահանջարկի վերլուծությունից, բուհերի առաքելություններից, համաչափ տարածքային զարգացման առաջնահերթություններից և ակադեմիական, գիտական միջավայրի կարիքներից,
- Սահմանել կառավարման մարմինների միջև փոխադարձ կապերը, հաշվետվողականության մեխանիզմները, հակակշռող մեխանիզմները,

շահադրդման մեխանիզմները՝ միաժամանակ ապահովելով նրանց գործունեության ինքնուրույնությունը:

Բարձրագույն կրթության կառավարման մարմինների և Բուհերի վերակազմակերպում և խոշորացում՝ ըստ մշակված մոդելի, մասնագիտական պրոֆիլների, բուհերի առաքելությունների նույնականության և համաչափ տարածքային զարգացման առաջնահերթությունների:

Բարձրագույն կրթության կառավարման մարմինների և բուհերի վերակազմակերպում՝ ելնելով նախորդ գործողությամբ մշակված մոդելից: Մոդելու հաշվի են առնվելու բուհերի մասնագիտական պրոֆիլները, բուհերի դասակարգումը, տնտեսությունում մասնագետների պահանջարկը, բուհերի առաքելությունների նույնականությունը և համաչափ տարածքային զարգացման առաջնահերթությունները: Կարևոր է նշել, որ վերակազմակերպման և խոշորացմանը գործընթացը պետք է լինի պլանավորված, բանակցությունների հիման վրա, ապահովելով միավորվող կողմերի մշակույթների և արժեքների համապատասխանությունը, փոխլրացման և արդյունավետության բարձրացման, շահակիցների ներգրավվածության և շահերի հավասարակշռման սկզբունքները:

Ըստ սահմանված ցուցանիշների բարձրագույն կրթության կառավարման մշտադիտարկում և բարելավման աշխատանքների ձեռնարկում:

Բարձրագույն կրթության կառավարման մարմինները պետք է հետևեն հաշվետվողականության սահմանված մեխանիզմներին և կատարողականի ցուցիչների վերաբերյալ տարեկան հաշվետվությունների կազմմանը: Վերջինս, անհրաժեշտության դեպքում նաև դիտարկման այցերի արդյունքների հետ մեկտեղ կապահովի բարձրագույն կրթության կառավարման մարմինների մշտադիտարկումը՝ ապահովելով նրանց հետագա գործունեության բարելավման նպատակով որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկատվական հենք:

Բուհերում ռազմավարական պլանավորման (կառավարման) անցնելու պահանջի սահմանում:

Բուհերը, 21-րդ դարում գործող բոլոր կազմակերպությունների նման պետք է իրականացնեն ռազմավարական կառավարում՝ վերլուծեն իրենց դիրքը, սահմանեն տեսլական, դրանից բխող ռազմավարական նպատակներ, վերջիններիս իրականացման համար կազմեն տարեկան պլաններ, սահմանեն կատարողականի ցուցիչներ: Ռազմավարական պլանավորման անհրաժեշտությունը պայմանավորված է մրցակցության մեծացմամբ և արտաքին միջավայրի գործոնների և պահանջների փոփոխությանը բուհերի արձագանքման ճկունությամբ:

Բուհերի կառավարման բարձրագույն մարմինների ձևավորման սկզբունքների փոփոխություն:

Ի թիվս կառավարման այլ մարմինների գործունեության բարելավմանը, անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել բուհերի կառավարման մարմինների ձևավորման սկզբունքներին: Անհրաժեշտ է մշակել բուհերի կառավարման մարմինների հնարավորինս օպտիմալ կառուցվածք և ստեղծել անհրաժեշտ մեխանիզմներ՝ բուհերի կառավարմանը և ռազմավարական որոշումներին կառավարման մարմինների իրական մասնակցության ապահովման համար: Թեպետ բուհերի կառավարման մարմինների ձևավորման և բուհի թոփ մենեջմենթի գործունեության վերահսկողության միասնական ունիվերսալ մոդելներ չկան և դրանք էապես կախված են երկրի կրթական համակարգի մոդելից (անգլո-սաքսական, գերմանական, եվրոպական և այլն), բուհի ֆինանսավորման ծավալում կառավարության, համայնքի (գործարար համայնք, բարեգործական և այլ ֆոնդեր) ֆինանսավորման տեսակարար կշռից ու բուհական համակարգում արմատավորված հաշվետվողականության ձևաչափերից, սակայն առկա է սկզբունքային կոնսենսուս առ այն, որ բուհերը

պետք է լինեն մաքսիմալ անկախ և մաքսիմալ թափանցիկ: Այս առումով ՀՀ ապագա բարձրագույն կրթական համակարգում կառավարման մարմինների ձևավորման սկզբունքներում պետք է դնել նաև բուհերի կառավարման մարմինների ապաքաղաքականացումը և կառավարման մարմիններին վերահսկողական գործառույթի հատկացումը: Իբրև օպտիմալ մոդել կարող է հանդիսանալ 4 խումբ շահառուներից խորհուրդների ձևավորումը՝ ուսանողներ, դասախոսներ, շրջանավարտներ և գործատուներ:

Բուհերում էլեկտրոնային կառավարման համակարգերի աստիճանական ներդրման պահանջների ամրագրում և անցման աջակցում:

21-րդ դարի տեխնիկական զարգացման և բնական միջավայրի պահպանության (թղթի քիչ օգտագործմամբ) հրամայականն է էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը: Էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը պետք է ուղեկցվի օգտագործողների ուսուցմամբ՝ շահակիցներին ներկայացնելով համակարգի օգտակարությունը և գործունեության արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

Բուհերի կողմից իրենց կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հստակեցում, գործառույթների կադրաբաժանային ցուցիչների մշակում և կառուցվածքային ստորաբաժանումների արդյունավետության գնահատման չափանիշների ներդրում:

Բուհերը, բարձրագույն կրթության կառավարման մարմինների նման, պետք է վերլուծեն իրենց կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը: Ելնելով օպտիմալության սկզբունքից անհրաժեշտ է, որ բուհերի ստորաբաժանումները ապահովեն առավելագույն արժեքի ստեղծումը՝ նվազագույն ծախսերով՝ նպաստելով բուհի ռազմավարական նպատակների

իրականացմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է տալ հետևյալ հարցերի պատասխանները.

- Վերլուծել ստորաբաժանումների գործառույթները, նրանց անձնակազմի օպտիմալ քանակը և որակավորումներին ներկայացվող պահանջները, սահմանել ենթակայությունը և հաշվետվողականության մեխանիզմները,
- Սահմանել ստորաբաժանումների միջև փոխադարձ կապերը, հաշվետվողականության մեխանիզմները, հակակշռող մեխանիզմները, շահադրդման մեխանիզմները՝ միաժամանակ ապահովելով նրանց գործունեության ինքնուրույնությունը:

Անհրաժեշտության դեպքում իրականացնել ստորաբաժանումների վերակազմակերպում, ելնելով օպտիմալության սկզբունքից: Այդ գործընթացը պետք է լինի պլանավորված, բանակցությունների հիման վրա, ապահովելով միավորվող կողմերի փոխլրացման և արդյունավետության բարձրացման, շահակիցների ներգրավվածության և շահերի հավասարակշռման սկզբունքները:

Բուհերում կայունության և զարգացման ֆոնդերի ձևավորման պահանջների սահմանում:

Ռազմավարական կառավարմանն անցումը ենթադրելու է զարգացմանը միտված նախագծերի իրականացում, որոնք, բնականաբար կապված են ֆինանսական ծախսերի հետ: Բուհերի զարգացման նախաձեռնությունների ֆինանսավորման, ինչպես նաև կայուն գործունեության ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել կայունության և զարգացման ֆոնդեր, որոնց միջոցները կարող է ձևավորվել և՛ բուհերի բյուջեների մի մասի պարտադիր կուտակումից, և՛ արտաքին ֆինանսավորումից:

4. Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության

մշտադիտարկման և գնահատման ինստիտուցիոնալ հենքի ձևավորումը

Բարձրագույն կրթության ամբողջ համակարգը պետք է ունենա հաշվետվողականության և մշտադիտարկման մեխանիզմներ: Այդ մեխանիզմները պետք է ապահովեն բարձրագույն կրթության ոլորտում գործունեության վերաբերյալ արժանահավատ, հավաստի և լիարժեք անհրաժեշտ տեղեկատվությանը հավաքագրումը, մշակումը և դրա հիման վրա որոշումների կայացումը: Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության գնահատումը և մշտադիտարկումը պետք է իրականացվեն հստակ պարբերականությամբ, շահակիցների համար հասկանալի և ընդունելի, պլանավորված ձևաչափով և պետք է բավարար հիմք լինեն ռազմավարական որոշումների կայացման և բարեփոխումների համար: Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության մշտադիտարկումը և գնահատումը պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա.

- *լիարժեքություն*. մշտադիտարկման և գնահատման գործընթացը պետք է ապահովի բարձրագույն կրթության համակարգի վերաբերյալ ամբողջական, լիարժեք տեղեկատվության ստացումը: Ստացված տեղեկատվությունը պետք է լինի ոչ ավելին և ոչ պակաս, քան անհրաժեշտ է ռազմավարական որոշումներ կայացնելու և բարեփոխումների առաջարկությունների ներկայացնելու համար,
- *հավասարություն*. բարձրագույն կրթության միևնույն մակարդակում գտնվող կառույցներից պետք է հավաքագրվի նույնական տեղեկատվություն (օրինակ՝ բոլոր պետական բուհերից պետք է հավաքագրի նույնական տեղեկատվություն), ապահովելով տեղեկատվության համեմատելիությունը,

- կիրառականություն. մշտադիտարկման արդյունքները և հավաքագրված տեղեկատվությունը պետք է կիրառական լինի հետագա որոշումների կայացման համար,
- թափանցիկություն. մշտադիտարկման և գնահատման արդյունքները պետք է հասանելի և հասկանալի լինեն շահակիցների համար,
- անաչառություն. հավաքագրված տեղեկատվության ներկայացումը և ամբողջ մշտադիտարկման և գնահատման գործընթացը պետք է իրականացվի անաչառ, առանց նախապաշարմունքների և արդյունքների վերաբերյալ նախապես ձևավորված ակնկալիքների:

Գործողություններ

Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության չափանիշների և ցուցիչների սահմանում (Key Performance Indicators):

Բարձրագույն կրթության համակարգում գործող կառույցները (պետական և մասնավոր բուհեր և այլն) պետք է ունենան իրենց կատարողականի գնահատման ցուցիչները (Key Performance Indicators - KPI), որոնք պետք է ածանցվեն իրենց ռազմավարական նպատակներից և հիմք են հանդիսանալու հաշվետվությունների համար: Կատարողականի ցուցիչները.

- չափում են առանցքային մուտքային և ելքային գործոնները,
- արտացոլում են կազմակերպության ռազմավարական նպատակները և առանցքային գործառույթները,
- չափում են բարձր առաջնահերթություն ունեցող գործառնությունները,
- չափում են կազմակերպության՝ շահակիցների համար կարևոր և նշանակալի բնութագրերը,

- չափում են կազմակերպության կատարողականն այն ոլորտներում, որոնք պետք է հաջողված լինեն կազմակերպության գոյատևման և մրցունակության ապահովման համար:
- Կատարողականի ցուցիչները պետք է համապատասխանեն հետևյալ բնութագրիչներին.
- կապված լինեն կազմակերպության ռազմավարական նպատակների հետ,
- լինեն արդիական,
- լինեն ճշգրիտ,
- լինեն հասկանալի,
- տան հստակ պատկերացում կազմակերպության կատարողականի վերաբերյալ:

Նշված ցուցիչների մշակումը պետք է իրականացվի հետևյալ սխեմայով.

1. նպատակների սահմանում,
2. առանցքային հաջողության գործոնների (Critical Success Factors - CSF) սահմանում՝ հիմնված նպատակների վրա,
3. առանցքային հաջողության գործոնների հիման վրա կատարողականի ցուցիչների (KPI) սահմանում,
4. չափումներ և տեղեկատվության հավաքում,
5. ցուցիչների հաշվարկում:

Բարձրագույն կրթության համակարգի մշտադիտարկման տեղեկատվական համակարգի ձևավորումը

Բարձրագույն կրթության համակարգի վերաբերյալ տեղեկատվական բազան պետք է լինի միասնական և ունիֆիկացված: Սա նշանակում է, որ հավաքվող տեղեկատվությունը պետք է նույնական լինի միևնույն մակարդակում գործող բոլոր կառույցների համար (օրինակ՝ միևնույնը բոլոր պետական համալսարանների համար) և պետք է բավարար լինի որոշումների կայացման

համար: Այն չպետք է պարունակի ավելորդ տեղեկատվություն և չպետք է պակաս լինի անհրաժեշտ ծավալից: Կարևոր է ընդգծել, որ տեղեկատվական բազան պետք է լինի այնքան համապարփակ, որ ներառի այն ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է տարբեր կառույցների հաշվետվողականության համար: Օրինակ՝ տեղեկատվական բազայում հավաքագրված տեղեկատվությունը, ի թիվս այլ հաշվետվությունների, պետք է բավարար լինի հավատարմագրման համար անհրաժեշտ տվյալներն ունենալու, Համաշխարհային բանկին և այլ միջազգային կառույցներին վիճակագրական տվյալներ տալու համար: Կարևոր է, որ պահպանվի տեղեկատվության հավաստիության, ամբողջականության և արդիականության սկզբունքները:

Բուիերի կատարողական ցուցանիշների սահմանում և նախարարություն-բուի կատարողականի պայմանագրերի կնքում (Performance Contracts):

Բուիերի կատարողականի ցուցիչներից պետք է աժանցվեն նրանց ֆինանսավորումը և բարեփոխումների ծրագրերը: Բուիերի կատարողականի ցուցիչների սահմանումից հետո, պետք է կատարողականի պայմանագրեր (Performance Contracts) կնքվեն բուիերի և նախարարության միջև, որտեղ կթիրախավորվեն կատարողականի ցուցանիշների մակարդակները՝ բանակցությունների միջոցով: Կատարողականի պայմանագրերը սովորաբար կնքվում են երեք տարով: Յուրաքանչյուր տարվա ավարտին բուիերը նախարարությանն են ներկայացնում իրենց կատարողականի հաշվետվությունները, որոնց հիման վրա որոշվում են բուիերի բարեփոխումների ուղղությունները: Երեք տարին մեկ անգամ նախարարությունը վերանայում է բուիերի ֆինանսավորման ծավալները՝ ելնելով կատարողականի ցուցանիշներից:

Բուհերի կողմից ըստ կատարողականի հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերի և ձևաչափերի մշակում և ներդրում

Կատարողականի ցուցիչների սահմանումից և կատարողականի պայմանագրերի կնքումից զատ, անհրաժեշտ է սահմանվել նաև տարեկան հաշվետվությունների ներկայացման ընթացակարգը և ձևաչափերը: Սա հնարավորություն կտա առավելագույնս հասկանալի և թափանցիկ դարձնել հաշվետվողականության գործընթացը և համեմատելի արդյունքներ ստանալ:

5. Բարձրագույն կրթական հաստատությունների պետական ֆինանսավորման համակարգի արդյունավետության բարձրացումը և ֆինանսավորման ծավալների ավելացումը

Բացի բարձրագույն կրթության համակարգում գործունեության չափելիության, կատարողականի գնահատման մեխանիզմների մշակումը, անհրաժեշտ է նաև կատարողականը կապակցել ֆինանսավորման ծավալների հետ՝ շահադրման մեխանիզմների ստեղծման նպատակով: Ֆինանսավորման համակարգի բարեփոխման արդյունքում պետք է ստեղծվի այնպիսի համակարգ, որում գործում են ֆինանսական խթաններ և որում պետական ֆինանսավորման ծավալը կախված է կատարողական ցուցանիշներից: Ֆինանսավորման համակարգի բարեփոխումները պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա.

- նպատակայնություն. պետական ֆինանսավորման համակարգը պետք է լինի նպատակային և թիրախավորված՝ հաշվի առնելով պետության և բարձրագույն կրթության զարգացման առաջնահերթությունները,
- թափանցիկություն. ֆինանսավորման առաջնահերթությունները, որոշումների հիմքերն ու արդյունքները պետք է հասանելի և հասկանալի լինեն շահակիցների համար,

- անաչառություն. ֆինանսավորման համակարգը պետք է ապահովի բոլոր կողմերի համար անաչառ որոշումների կայացումը և հավասար հնարավորությունների ստեղծումը,
- հիմնավորվածություն. ֆինանսավորման որոշումները պետք է լինեն հիմնավոր և ընդունելի շահակիցների համար:

Ֆինանսավորման ծավալներն ամբողջ աշխարհում բարձրագույն կրթության և ընդհանրապես կրթության գնահատման ցուցիչներից են: Բարձրագույն կրթության ֆինանսավորման ծավալների ավելացումը պետք է ապահովի բարձրագույն կրթության համակարգի զարգացումն ու կայունությունը: Բարձրագույն կրթության ֆինանսավորման ավելացումը պետք է լինի նպատակային և ուղղված լինի բարձրագույն կրթության այնպիսի խնդիրների լուծմանը, որոնք համակարգի համար կապահովեն առավելագույն արդյունք: Հարկ է նաև հաշվի առնել, որ ֆինանսավորման ծավալը պետք է լինի այնպիսին, որ կարողանա ստեղծել շահադրժման մեխանիզմներ: Ֆինանսավորման ծավալների ավելացման հիմքում պետք է դնել հետևյալ սկզբունքները.

- նպատակայնություն. ֆինանսավորման ծավալների ավելացումը պետք է լինի նպատակային և թիրախավորված՝ հաշվի առնելով պետության և բարձրագույն կրթության զարգացման առաջնահերթությունները,
- թափանցիկություն. շահակիցների համար պետք է հասկանալի և ընդունելի լինեն այն թիրախային ուղղությունները, որոնցում ավելացվում է պետական ֆինանսավորումը,
- հիմնավորվածություն. ֆինանսավորման ծավալների ցանկացած փոփոխություն պետք է լինի հիմնավորված և հիմնված լինի տեղեկացված որոշումների վրա:

Գործողություններ

Պետական բյուջեից բարձրագույն կրթության ֆինանսավորման սկզբունքների վերանայում և աստիճանական անցում ծրագրային բյուջեփոփոխումներ

Բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման մեխանիզմները պետք է վերանայվեն և կապակցվեն կատարողական ցուցանիշների, պետական և բարձրագույն կրթության զարգացման առաջնահերթությունների հետ: Անցումը ծրագրային բյուջեփոփոխումն հնարավորություն կտա ֆինանսավորել թիրախային գործողությունները և ծրագրերը, որոնք բարձրագույն կրթության համակարգի համար կապահովեն առավելագույն արդյունք:

Բուհերի բազային ֆինանսավորման գերակա ուղղությունների սահմանում՝ նպատակադրելով պետության առաջնահերթությունները

Ֆինանսավորման մեխանիզմների մշակումից զատ անհրաժեշտ է սահմանվել պետության գերակայությունները բարձրագույն կրթության ոլորտում, որոնք հաշվի կառնվեն ֆինանսավորման ծավալների որոշման ժամանակ: Պետության առաջնահերթությունները կարող են կապված լինել մասնագիտությունների, տարածքային զարգացման, սոցիալական թիրախների և այլ հանգամանքների հետ:

Բուհերի ֆինանսավորման համակարգի վերանայում և ֆինանսավորման փոխկապակցում կատարողականին: Բուհերի կատարողականի հիման վրա լրացուցիչ (բոնուսային) ֆինանսավորման կառուցակարգերի սահմանում

Բուհերի ֆինանսավորումը, բացի պետական առաջնահերթությունների վրա հիմնված լինելուց, պետք է հաշվի առնի նաև բուհերի կատարողականները, որը նկարագրված է Նպատակ 2.2-ում: Բուհերի կատարողականի նպատակադրումը ֆինանսավորման ծավալների որոշման ժամանակ կապահովի բուհերի

նյութական շահադրդման մեխանիզմների ստեղծումը և խթան կհանդիսանա նրանց գործունեության բարելավման համար:

Բուհերի մրցակցային ֆինանսավորման (հեղափոխությունների ֆինանսավորման) կառուցակարգերի մշակում և ներդրում

Բացի բազային և լրացուցիչ ֆինանսավորման հնարավորություններից բուհերը պետք է հնարավորություն ունենան դիմելու առանձին ոլորտներում (օրինակ՝ հետազոտությունների, զարգացման ծրագրերի և այլն) ֆինանսավորում ստանալու պետական ծրագրերի, որոնք պետք է լինեն մրցակցային: Այսպիսի ֆինանսավորման հնարավորությունը պետք է լինի հստակ ձևակերպված, հասանելի և ընկալելի շահակիցների կողմից և պետք է ունենա դիմումներ, գնահատման և մշտադիտարկման գործուն մեխանիզմ:

Բարձրագույն կրթության ֆինանսավորման չափերի մերձեցում ՏՀԶԿ անդամ երկրներում ՀՆԱ-բարձրագույն կրթության ծախսեր հարաբերակցությանը

Բարձրագույն կրթության ծախսերի ծավալները հաշվի են առնչվում մի շարք վարկանշավորման կառույցների կողմից և ներգրավված են միջազգային զեկույցներում, որոնց միջոցով (նաև) արտացոլվում է երկրի կրթության վիճակը: Այդ զեկույցներից են ՏՀԶԿ զեկույցները, Բոլոնիայի զեկույցները (գազաթնաժողովների հաշվետվությունները), որտեղ համեմատվում են երկրներում բարձրագույն կրթության ֆինանսավորման ծավալները: Ֆինանսավորման ծավալների ավելացումը, բացի բարձրագույն կրթության զարգացման հեռանկարներ բացելուց և բարձրագույն կրթության համակարգի կայունության ապահովումից հնարավորություն կտա նաև բարելավել ՀՀ դիրքերը տարբեր միջազգային զեկույցներում: Տվյալ դեպքում գիտելիքահենք տնտեսության հոչակված գերակայության ապահովման համատեքստում ՀՆԱ-բարձրագույն կրթության ծախսեր հարաբերակցությունն անհրաժեշտ է

առնվազն թիրախավորել ՏՀԶԿ անդամ երկրների հարաբերակցության միջակայքում: Ընդ որում, հաշվի առնելով ՀՀ տնտեսության և նշյալ տնտեսությունների անհամադրելի չափերը միանշանակ է, որ անգամ նման հարաբերակցության պայմաններում հնարավոր չէ լիարժեքորեն երաշխավորել այնպիսի արդյունք, ինչպիսին որ ապահովում են վերջինները: Մինչ օրս բյուջետային ֆինանսավորման հիմքում և հատկապես դրա նվազման հիմքում ընկած է եղել այն մտայնությունը, որ կրթության և գիտության նախարարությունը չի կարող հիմնավորել կրթության ծախսերի ավելացման և ՀՆԱ աճի կորելացված լինելու հանգամանքը: Սակայն հարկ է նշել, որ նման կորելացված կապ չի հրապարակվում նաև ՏՀԶԿ անդամ երկրների կողմից: Տվյալ դեպքում միակ հիմնավոր փաստարկը գիտելիքի ֆինանսավորման հետևողական աճի արդյունքում վերջինների ապահովված տնտեսական արդյունքներն են, դրանց քաղաքացիների բարեկեցությունը, ինչպես նաև ՀՆԱ կամ արտահանման մեջ գիտելիքահենք արտադրանքի մասնաբաժինը: Ըստ այդմ նմանատիպ արդյունքների կրկնության եզակի գրավականը կրթության և բարձրագույն կրթության ֆինանսավորման նվազագույն ծավալների պահպանումն են ՏՀԶԿ երկրների թիրախավորած միջակայքում:

Բուհերի ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցում՝ ներառելով մասնավոր հատվածից նվիրատվությունների և ներդրումների խթանման արտոնությունների տրամադրման կառուցակարգերը

Բուհերի ֆինանսավորումը, բացի պետական միջոցներից, պետք է ներառի նաև այլ աղբյուրներից ֆինանսավորման ավելացումը, այդ թվում՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությունից, նվիրատվություններից և այլն: Անհրաժեշտ է նաև ստեղծել բարձրագույն կրթության ոլորտում ներդրումների խթանման մեխանիզմներ: Օրինակ՝ որոշ երկրներում գործում են հարկային արտոնությունների միջոցով ներդրումների խթանման համակարգերը.

պետության համար գերակա ոլորտներում մասնավոր հատվածի կողմից կատարված ներդրումները ծախս են ճանաչվում հաշվապահական փաստաթղթերում և նվազեցվում են շահութահարկից: Բացի այդ հարկատուն կարող է իր կողմից վճարվող հարկերի մի մասը ուղղել պետության համար որևէ գերակա ոլորտի խնդիրների լուծմանը՝ ըստ իր ընտրության (այդ գերակա ոլորտների թվում կարող է լինել նաև բարձրագույն կրթությունը): Ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցումը հնարավորություն կտա ապահովել բուհերի ֆինանսական կայունությունը:

Բուհերի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սկզբունքների և չափանիշների մշակում և ներդրում

Բուհերին պետք է հնարավորություն ընձենվի զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, որը եկամտի ներգրավման լրացուցիչ աղբյուր է: Սակայն այդ ձեռնարկատիրական գործունեությունը չպետք է լինի ցանկացած գործունեություն, այլ այնպիսին, որը համապատասխանում է նաև բուհի առաքելությանը: Այս ոլորտի կարգավորման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել բուհերի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սկզբունքներ և չափանիշներ: Անհրաժեշտության դեպքում այս գործունեությունը կարող է կանոնակարգվել նաև համապատասխան օրենքով:

Բուհերում ֆանդրայզինգի ինստիտուտի խթանում

Ֆանդրայզինգի ինստիտուտի խթանումը հնարավորություն կտա ֆինանսավորել այնպիսի ծրագրեր, որոնք կարևոր և թիրախային են բարձրագույն կրթության շահակիցների համար: Ֆանդրայզինգի ինստիտուտի զարգացումը ֆինանսավորման մեխանիզմների բազմազանեցման մեկ այլ հնարավորություն է

բուհերի համար, որը կապահովի նրանց զարգացումն ու ֆինանսական կայունությունը:

6. Բուհերի սոցիալական պատասխանատվության և հաշվետվողականության մակարդակի բարձրացումը

Բարձրագույն կրթության սոցիալական պատասխանատվության և հաշվետվողականության բարձրացումը հնարավորություն կտա բարձրագույն կրթության ծառայություններն ու բուհերի գործունեությունը ավելի ընկալելի դարձնել հասարակության համար: Մյուս կողմից, բուհերը, բացի իրենց բուն գործունեությունից, որն ամրագրված է նրանց առաքելությամբ, պարտավոր են իրենց ներդրումն ունենալ երկրի այլ հիմնախնդիրների լուծմանը՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (Corporate Social Responsibility - CSR) միջոցառումների միջոցով: Բուհերի սոցիալական պատասխանատվության և հաշվետվողականության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է հիմնվել հետևյալ սկզբունքների վրա.

- թափանցիկություն. բուհերի հաշվետվությունները պետք է հասանելի և հասկանալի լինեն շահակիցների համար,
- նպատակայնություն. բուհերի կողմից իրականացվող սոցիալական պատասխանատվության միջոցառումները պետք է լինեն նպատակային և թիրախավորված՝ ուղղված գերակա խնդիրների լուծմանը,
- մասնակցայնություն. սոցիալական պատասխանատվության միջոցառումներին մասնակցությունը պետք է բաց լինի ներքին շահակիցների համար և խրախուսվի վերջիններիս ակտիվ մասնակցությունը,

- կայունություն. սոցիալական պատասխանատվության միջոցառումները չպետք է կրեն միանգամյա բնույթ, այլ ապահովեն երկարաժամկետ կայուն զարգացում:

Գործողություններ

Բուհերի արտաքին հաշվետվողականության միասնական չափանիշների և ընթացակարգերի ձևավորում

Բուհերի արտաքին հաշվետվողականության չափանիշները պետք է լինեն նույնական, որպեսզի շահակիցների համար լինեն ընկալելի և համեմատելի: Միասնական չափանիշների և ընթացակարգերի մշակումը հնարավորություն կտա նաև ապահովել միևնույն բուհի գործունեության ժամանակագրական համեմատելիությունը:

Բուհերի գործունեության թափանցիկության բարձրացում

Բուհերի գործունեության թափանցիկության բարձրացումը կապված է, նախ է առաջ, կայքերի միջոցով տեղեկատվության տարածման, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցներով հասարակությանը իրենց գործունեության վերաբերյալ իրազեկելու հետ: Գործունեության թափանցիկության բարձրացումը հնարավորություն կտա ստեղծել վստահության և համագործակցային մթնոլորտ, ինչը բուհ-հասարակություն, բուհ-մասնավոր հատված փոխգործակցության հիմքն է:

Բուհերի և դրանց կրթական ծրագրերի համեմատական վերլուծության միասնական տեղեկատվական համակարգի գործարկում

Բուհերի և կրթական ծրագրերի միասնական տեղեկատվական համակարգը պետք է լինի բաց համակարգ, որում կարելի է գտնել բուհի և նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն, այդ թվում, թե տվյալ կրթական ծրագիրը ինչ ելքեր կարող է ապահովել աշխատաշուկայում: Բուհերի և կրթական ծրագրերի միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումը հնարավորություն կտա արտաքին շահակիցներին (դիմորդներ, ծնողներ և այլոք) առցանց ծանոթանալ բուհերի առաջարկներին, համեմատել դրանք և ընտրել իրենց համար լավագույն տարբերակը: Այսպիսով, կապահովվի բուհերի միջև առողջ մրցակցային միջավայրի ձևավորումը: Այսպիսի համակարգի լավագույն օրինակներից մեկը Միացյալ Թագավորության համակարգն է:

Բուհերի կատարողական ցուցանիշներում սոցիալական պատասխանատվությանը վերաբերող պարտադիր ցուցանիշների սահմանում

Բուհերի կողմից սոցիալական պատասխանատվության միջոցառումների խթանման նպատակով անհրաժեշտ է այն ամրագրել նաև կատարողականի ցուցիչներում, որոնց վերաբերյալ բուհերը տարեկան հաշվետվություններ են ներկայացնելու ՀՀ ԿԳՆ, համաձայն Նպատակ 2.2-ում նկարագրված գործողությունների:

Բուհերի կողմից հանրությանը մաքուցվող ծառայություններում շարունակական կրթության և վերաորակավորման ապահովման բաղադրիչի ամրագրում՝ թիրախավորելով սոցիալապես անապահով և խոցելի խմբերին նման ծառայությունների անվճար մաքուցումը

Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի առաջիկա 10 տարում առնվազն 800մլն մարդ ավտոմատացման հետևանքով զրկվելու է աշխատանքից: Բուհերը կարող են այդ աշխատողների վերապրոֆիլավորման համար դասընթացներ/սերտիֆիկացման ծրագրեր կազմակերպել, այդպիսով ապահովելով նոր, վերապրոֆիլավորված մասնագետների մուտքը աշխատաշուկա: Նաև գործազուրկների համար դասընթացների կազմակերպումը (անվճար)՝ աշխատաշուկայի համար պահանջված ոլորտներում կարող է մեծ խթան լինել սոցիալական զարգացմանը և աշխատաշուկայի աշխուժացմանը:

7. Գիտության զարգացման և կիրառական հեղափոխությունների խթանման ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումը

Գիտության, կրթության և տնտեսության միջև փոխաշահավետ համագործակցության ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումը ենթադրում է այնպիսի միջավայրի երաշխավորում, որը նախադրյալներ կստեղծի գիտահետազոտական կառույցների, նորաստեղծական կլաստերների, համալսարանական գիտահետազոտական նախագծերի՝ տնտեսության կոնկրետ ճյուղերի և ոլորտների զարգացմանը միտված մշակումների իրականացման համար և կապահովի արտաքին մարտահրավերներին համարժեքորեն արձագանքելու պետության ներուժի ավելացում: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կապակցումը գիտահետազոտական գործունեության խրախուսման և աջակցության պետական քաղաքականությանը կխթանի

գիտահետազոտական գործունեության զարգացումը՝ նպաստելով գիտության զծով պետության ծախսերի փոխակերպմանը ներդրումների, գիտական և տեխնիկական մշակումների զծով ներդրումների ներգրավման քաղաքականության ակտիվացմանը, կիրառական բնույթ ունեցող հետազոտությունների տեսակարար կշռի ավելացմանը:

Գործողություններ

Մշակել գիտության զարգացման ռազմավարություն՝ թիրախավորելով գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունները, որոնց զծով պետությունն ունի մրցակցային առավելություններ և որոնց շարունակական կատարելագործումը կհանգեցնի պետության սոցիալ-տնտեսական զարգացմանը

Անհրաժեշտ է մշակել գիտության զարգացման այնպիսի ռազմավարություն, որը կթիրախավորի գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունները, կոչված կլինի Հայաստանի Հանրապետության մրցակցային առավելությունների և զարգացման առաջնահերթությունների վերհանմանը, կներառի հստակ կառուցակարգեր մասնավոր հատվածի ընկերությունների ներգրավման և խթանման համար՝ երկարաժամկետ հեռանկարում ապահովելով պետության սոցիալ-տնտեսական զարգացումը և զարգացման կապակցումը պետության քաղաքականության արդյունավետությունից:

Կատարելագործել հետազոտությունների և տեխնոլոգիական նորարարությունների զարգացմանը միտված պետական աջակցության կառուցակարգերը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր երկրում մասնավոր հատվածը դեռևս իր գործունեության արդյունքները չի պայմանավորում հետազոտությունների և

տեխնոլոգիական նորարարությունների ոլորտներում ներդրումներով, անհրաժեշտ է մշակել պետության կողմից վերջիններիս զարգացմանը միտված պետական աջակցության կառուցակարգեր, ինչպես նաև մասնավոր հատվածի ներգրավման աճին միտված գործիքներ, ինչը թույլ կտա առաջիկայում բարձրացնել մասնավոր հատվածի ներգրավվածությունը և նորարարությունների պահանջվածությունը:

Ապահովել պետական ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտությունների արդյունքների կիրառելիությունը և համապատասխանությունը տնտեսության տարբեր ճյուղերի արդի կարիքներին և զարգացման միտումներին

Հանրային ռեսուրսների արդյունավետ կիրառման անհրաժեշտությունից ելնելով՝ անհրաժեշտ է նախքան հետազոտական նախագծերի ֆինանսավորումն ուսումնասիրել ազգային և միջազգային մակարդակներում վերջիններիս արդյունքների կիրառելիության աստիճանը՝ վերհանելով դրանց համապատասխանությունն ազգային տնտեսության կարիքներին, գիտության և տեխնիկայի զարգացման համաշխարհային միտումներին և առաջնահերթություններին: Անհրաժեշտ է մշակել արդյունավետության գնահատման կոնկրետ ցուցիչներ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի իրականացնել վերջին տարիներին պետական ֆինանսավորմամբ հետազոտությունների արդյունքների կիրառելիության գնահատում՝ հետագա ֆինանսավորման ծավալների հստակեցման, ռեսուրսների արդյունավետ գործադրման նպատակով:

Մշակել նորաստեղծական կլաստերների զարգացման օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքեր՝ միավորելով արդյունաբերական ձեռնարկությունների, հետազոտական կենտրոնների, բարձրագույն ուսումնական հաստատությունների տեխնոլոգիական և ինտելեկտուալ ներուժը և ֆինանսական ռեսուրսները՝ համալսարաններ-ձեռնարկություններ փոխգործակցության մեջ ապահովելով սոցիալական գործընկերության սկզբունքի իրացումը

Հաշվի առնելով համաշխարհային միտումները և զարգացած երկրների փորձը՝ անհրաժեշտ է մշակել նորաստեղծական կլաստերների զարգացման ինստիտուցիոնալ հենք, որն իր մեջ կներառի իրավական կարգավորման, կառավարման արդյունավետության գնահատման, արդյունաբերական ձեռնարկությունների, հետազոտական կենտրոնների, բուհերի տեխնոլոգիական և ինտելեկտուալ ներուժի ու ֆինանսական ռեսուրսների միավորման արդյունքում համալսարաններ-ձեռնարկություններ փոխշահավետ համագործակցության զարգացման գնահատման չափանիշները:

Մշակել և ներդնել մասնավոր հատվածի կողմից համալսարաններում իրականացվող հետազոտությունների ֆինանսավորման չափով հարկերից ազատման արդյունությունների համակարգ

Գիտական հետազոտությունների ֆինանսավորման գործում մասնավոր հատվածի ներգրավվածության բարձրացման, ֆինանսավորման ծավալների շեշտակի աճի ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել մասնավոր հատվածի խթանման լծակներ, որոնք առաջիկա հեռանկարում հնարավոր կդարձնեն հետազոտությունների ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում էական փոփոխությունների արձանագրումը և մասնավոր հատվածից հատկացումների համամասնության աճը: Այդ նպատակով անհրաժեշտ է հարկային օրենսդրության բարեփոխում՝ բուհերում իրականացվող հետազոտությունների ֆինանսավորման չափով ընկերություններին հարկերից

ազատման արտոնությունների համակարգի ներդրման ճանապարհով, ինչը ոչ միայն կբարձրացնի մասնավոր հատվածի ձեռնարկությունների սոցիալական պատասխանատվությունը, այլև արդյունավետ կխթաններ կստեղծի գիտահետազոտական կառույցներում ֆինանսական հոսքերի ներգրավման տեսանկյունից:

Ձևավորել գիտահետազոտական կառույցների վերակազմակերպման բուհերի հետ վերամիավորման ինստիտուցիոնալ հենք՝ թիրախավորելով հանրային ռեսուրսների առավել արդյունավետ և օպտիմալ գործադրումը

Հաշվի առնելով ազգային տնտեսության ոչ մեծ ծավալները և հանրային ռեսուրսներն առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու հրամայականը՝ անհրաժեշտ է ձևավորել գիտահետազոտական կառույցների բուհերի հետ վերակազմակերպման ինստիտուցիոնալ հենք, ինչը թույլ կտա առավել արդյունավետ օգտագործել պետության միջոցները, ինչպես նաև հանրապետությունում գործող տարբեր գիտահետազոտական ինստիտուտների տեխնոլոգիական, մարդկային և ֆինանսական ներուժի միավորմամբ՝ երաշխավորել ռեսուրսների օպտիմալ օգտագործում և կարողությունների կրկնօրինակման բացառում: Ելնելով օպտիմալության սկզբունքից՝ անհրաժեշտ է մշակել համապետական մակարդակով գիտահետազոտական կառույցների գործունեության արդյունավետ կառուցվածք՝ առավելագույն հատույց ստանալու, արտաքին մարտահրավերներին համարժեքորեն արձագանքելու և նման կառույցների միջազգային մրցունակության բարձրացման նպատակով:

Մշակել գիտահետազոտական կառույցների գործունեության արդյունավետության մշտադիտարկման և գնահատման չափանիշներ ու կառուցակարգեր՝ ներդնելով արդյունավետության գնահատման ցուցիչներ

Գիտահետազոտական կառույցների գործունեության գնահատման արդյունավետության բարձրացման, ֆինանսավորման ծավալների վերանայման, կոնկրետ ոլորտների զարգացումը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է գիտահետազոտական կառույցների գործունեության արդյունավետության մշտադիտարկման և գնահատման չափանիշների ու կառուցակարգերի մշակումն ու ներդրումը: Մասնավորապես, որպես նման կառույցների գործունեության արդյունավետության ցուցիչներ կարող են հանդես գալ R&D գործարքների թիվը, արտոնագրերի լիցենզավորումից համալսարանների եկամուտները, համալսարանական սթարթափների թիվը և այլն:

8. Համալսարանների հետազոտական գործունեության խթանման ինստիտուցիոնալ հենքի ձևավորումը

Համալսարանների հետազոտական գործունեության խթանման նպատակով անհրաժեշտ է թիրախավորել հետազոտական բաղադրիչը, բուհերի մակարդակով ունենալ գիտության և հետազոտությունների զարգացման ռազմավարություն և գործողությունների պլան, հետազոտական գործունեության զարգացման համար առանձնացված ֆինանսական ռեսուրսներ՝ պետական ֆինանսավորման, մասնավոր հատվածի և միջազգային դրամաշնորհային հիմնադրամների միջոցների բազմազանեցման նպատակով, ինչպես նաև ռազմավարությունների կատարողականի հստակ ցուցիչներ, ինչը թույլ կտա գնահատել ռազմավարության կատարման ընթացքը: Նշված մոտեցումը կնպաստի հետազոտական համալսարանների ներուժի ավելացմանը, համալսարանական հետազոտությունների նկատմամբ պահանջարկի աճին,

բուհերի հետազոտական գործունեության խթանման ինստիտուցիոնալ շրջանակի ձևավորմանը: Համալսարանական հանրույթի հետազոտական գործունեության զարգացման ներուժի թերագնահատումը վտանգում է համալսարանների գիտական ներուժի զարգացումը, սահմանափակում հետազոտությունների արդյունքների առևտրայնացման հնարավորությունները, գիտության և տեխնիկայի ոլորտներում ներդրումների ներգրավման հեռանկարները: Բուհերի հետազոտական բաղադրիչի ուժեղացմամբ անհրաժեշտ է հասնել բուհերի եկամուտների բազմազանեցմանը՝ կրճատելով ուսման վարձի հավաքագրման մակարդակից կախվածությունը և ձևավորելով ֆինանսական կայունության երաշխիքներ: Համալսարանական հետազոտությունների խթանմամբ, հետազոտական ծրագրերի ֆինանսավորման արդյունավետ կառուցակարգերի ներդրմամբ անհրաժեշտ է բուհերը փոխակերպել բարձրագույն ուսումնական և հետազոտական հաստատությունների:

Գործողություններ

Խթանել գիտահետազոտական գործունեության արդյունքների նկատմամբ պահանջարկը՝ պետության ֆինանսավորման սկզբունքների և կառուցակարգերի վերանայմամբ՝ ֆինանսավորման հիմքում դնելով կադարողականի վրա հիմնված արդյունքները

Գիտելիքահեն տնտեսության ձևավորման հիմքերի ստեղծման համար անհրաժեշտ է արմատապես վերանայել գիտության զարգացման ոլորտում պետության քաղաքականությունը և առաջնահերթությունները և մշակել համաշխարհային արդի զարգացումներին և միտումներին համահունչ գիտության զարգացման ռազմավարություն: Պետությունը պետք է հանդես գա գիտահետազոտական գործունեության արդյունքների նկատմամբ պահանջարկ

դրսևորողի դերում՝ թեկուզ սկզբնական շրջանում ստանձնելով հիմնական պահանջարկ դրսևորողի ակտիվ առաքելությունը: Դա թույլ կտա ապահովել հետազոտությունների ոլորտի մուլտիպլիկատիվ աճ՝ նպաստելով հարակից ոլորտների զարգացմանը և մասնավոր հատվածից ներդրումային հոսքերի ներգրավմանը: Տվյալ ոլորտում պետության քաղաքականության փոփոխությունը պետք է ենթադրի նաև ֆինանսավորման չափանիշների փոփոխություն՝ ֆինանսավորման հիմքում դնելով կատարողականի վրա հիմնված արդյունքները:

Սպեղծել կիրառական հետազոտությունների ֆինանսավորման հիմնադրամ՝ իր հաշվետվողականության ու արդյունավետության չափանիշներով, որի միջոցով կֆինանսավորվեն պետության կողմից սահմանված գերակա ոլորտներում իրականացվելիք հետազոտությունները

Հաշվի առնելով կիրառական հետազոտությունների կարևորությունն ազգային տնտեսության մրցունակության ամրապնդման, գիտություն-կրթություն-տնտեսություն փոխկապվածությունը և դրա արդյունավետ կազմակերպման կարևորությունն անհրաժեշտ է մշակել կիրառական հետազոտությունների ֆինանսավորման հիմնադրամ, որը բացի պետական ֆինանսավորումից կհամալրվի նաև մասնավոր հատվածի ներարկումներով: Սա անհրաժեշտ է մասնավոր հատվածի ներգրավվածության երաշխավորման, հետազոտությունների կիրառական բաղադրիչի ուժեղացման, ինչպես նաև գիտահետազոտական կառույցների սոցիալական պատասխանատվության տեսանկյունից: Հիմնադրամի գործունեության հիմքում պետք է ընկած լինեն հաշվետվողականության ու արդյունավետության չափանիշները, որոնց գնահատումը պետք է իրականացվի հստակ ցուցիչներով:

Ձևավորել մրցութային սկզբունքով բուհերի հետազոտական ծրագրերի ֆինանսավորման կառուցակարգեր և պետության համար ռազմավարական կարևորություն ներկայացնող ոլորտներում կադրային ներուժի զարգացման առաջնահերթությունների վերհանմամբ՝ ուղղորդել համալսարանական հետազոտությունների իրականացումը թիրախային ուղղություններով

Անհրաժեշտ է մշակել բուհերի հետազոտական ծրագրերի ֆինանսավորման նոր կառուցակարգեր, որոնք հաշվի կառնեն պետության զարգացման ռազմավարական առաջնահերթությունները, փոխկապակցված կլինեն տնտեսական զարգացման գերակայությունների հետ՝ հիմքեր ստեղծելով գիտելիքահեն տնտեսության զարգացման համար: Թիրախային ուղղությունների ճիշտ ընտրությունը թույլ կտա ապահովել ռեսուրսների առավել օպտիմալ տեղաբաշխում և ստանալ գիտահետազոտական գործունեության արդյունքների առավել մեծ հատույց:

Զարգացնել գիտահետազոտական կենտրոնների ինստիտուցիոնալ կարողությունները

Բուհերի գիտահետազոտական կենտրոնների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է բուհի գիտության զարգացման ռազմավարությամբ ամրագրել գիտահետազոտական կենտրոնների առաքելությունը, նրանց հետազոտությունների առաջնահերթ ուղղությունները կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, ձևավորել գիտահետազոտական կենտրոններում կադրային ներուժի զարգացման խթաններ՝ վարձատրության դիվերսիֆիկացված համակարգի ներդրման, ըստ կատարողական արդյունքների ցուցիչի վարձատրության, ըստ միջազգային համատեղ նախագծերում մասնակցության ցուցանիշների և այլն: Գիտահետազոտական կենտրոնների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը ենթադրում է նաև գործունեության բարենպաստ

միջավայրի ստեղծում, այդ թվում՝ տեխնիկական հագեցվածություն, լաբորատոր փորձակոնստրուկտորական ժամանակակից սարքավորումների և նյութերի, գրադարանային շտեմարանների առկայություն, միջազգային ծրագրերում գիտահետազոտական կենտրոնների աշխատակիցների մասնակցության ապահովում և այլն:

Մշակել հեղազոտության արդյունքների առևտրայնացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման կառուցակարգեր

Բուհերի եկամուտների բազմազանեցման, գործունեության ֆինանսական կայունության, ազգային և միջազգային հարթակներում բուհերի հետազոտական գործունեության արդյունքների ճանաչելիության և միջազգային վարկանիշային համակարգերում դիրքերի բարելավման, տնտեսության մասնավոր հատվածի հետ արդյունավետ փոխգործակցության զարգացման համար անհրաժեշտ է մշակել հետազոտության արդյունքների առևտրայնացման կառուցակարգեր, ընդ որում՝ բուհերի ֆինանսավորումը կապակցելով նաև հետազոտության արդյունքների առևտրայնացման մակարդակի հետ:

Խրախուսել երիտասարդ գիտնականների ներգրավվածությունը կիրառական և առաջնահերթ սահմանված հեղազոտությունների ոլորտներում

Բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի անցնցում սերնդափոխության, գիտական հետազոտություններում երիտասարդ գիտնականների ներգրավման, գերակա ոլորտներում հետազոտությունների աշխուժացման նպատակով անհրաժեշտ է մշակել երիտասարդ գիտնականների ներգրավվածության խրախուսման հայեցակարգային մոտեցումներ: Նման քաղաքականությունը նախադրյալներ կստեղծի հետազոտություններում ներգրավված երիտասարդ գիտնականների համամասնության փոփոխության, միջազգային

դրամաշնորհային նախագծերում բարձր որակավորում ունեցող երիտասարդ մասնագետների ներգրավման, ինչպես նաև երիտասարդ գիտնականների խրախուսման միջազգային նախագծերում վերջիններիս մասնակցությունը երաշխավորելու համար: Հետազոտական գործունեության խրախուսումը հնարավոր է որակավորման բարձրացման, միջազգային գիտաժողովներին, վերապատրաստումներին և միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցության, համաշխարհային ճանաչում ունեցող գիտական հանդեսներում հետազոտությունների արդյունքների հրապարակման և այլ եղանակներով: Խրախուսման եղանակ կարող է լինել նաև երիտասարդ գիտնականների հետազոտությունների արդյունքների եռալեզու միասնական հարթակի ձևարումը, ինչը թույլ կտա բարձրացնել երիտասարդ գիտնականների հետազոտությունների արդյունքների հասանելիությունը միջազգային գիտական հանրույթի համար և կընդլայնի համատեղ հետազոտություններում և միջազգային ծրագրերում ներգրավման վերջիններիս հնարավորությունները:

9. Զևավորել բարձրագույն կրթության միջազգայնացումը խթանող միջավայր

Բարձրագույն կրթության միջազգայնացումը խթանելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան բարենպաստ միջավայր: Վերջինս ներառում է իրավական կարգավորումները, ֆինանսական ապահովվածությունը, միջազգայնացման ոլորտում սահմանված ռազմավարությունը և համապատասխան կառուցակարգերը: Միջազգայնացումը խթանող միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

- թափանցիկություն. Միջազգային գործունեությունը պետք է լինի թափանցիկ բոլոր շահակիցների համար, ինչը կնպաստի վստահության մթնոլորտի ձևավորմանը,

- ներգրավվածություն. Շահակիցների ներգրավվածությունը պետք է կարևորվի միջազգայնացման բոլոր ասպեկտներում,
- կայունություն. Միջազգային գործունեությունը պետք է ոչ թե հիմնված լինի պատահական համագործակցությունների վրա, այլ երկարատև, փոխաշահավետ փոխգործակցության վրա,
- նպատակայնություն. Միջազգային գործունեությունը պետք է կապակցված լինի ռազմավարական նպատակների հետ և ուղղված լինի այնպիսի ոլորտների միջազգայնացմանը, որոնք սահմանվել են որպես առաջնահերթություն:

Գործողություններ

Մշակել բարձրագույն կրթության միջազգայնացման առանձին ռազմավարություն՝ ներառյալ ռազմավարական նպատակներին հասնելու գործողությունների, ֆինանսական և ռեսուրսային ծրագրերը

Բոլորնիայի հաշվետվություններում, բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարության առկայությունը հաշվետվության մեջ ներառված գործոններից մեկն է: Միջազգայնացման ռազմավարության մշակումը կարևոր է այն առումով, որ սահմանվի պետության համար միջազգայնացման թիրախային ուղղությունները, դրանց հասնելու միջոցները և ֆինանսական ռեսուրսները: Վերջինս միջազգայնացման խթանման համար առաջնային գործոն է, քանի որ միջազգայնացումը ինքնին պահանջում է ֆինանսական ներդրումներ:

Մշակել ռազմավարական նպատակների իրագործման մշտադիտարկման, գնահատման ընթացակարգեր և ցուցիչներ

Բացի միջազգայնացման ոլորտում ռազմավարական նպատակներ սահմանելուց, դրանց իրագործման միջոցները և ֆինանսավորման աղբյուրները նախանշելուց, անհրաժեշտ է նաև մշակել ռազմավարական նպատակների իրագործման

մշտադիտարկման, գնահատման ընթացակարգեր և ցուցիչներ: Վերջինս, նախ և առաջ, հնարավորություն կտա միջազգայնացման ռազմավարության իրագործման վերաբերյալ ունենալ համեմատելի արդյունքներ և հայտնաբերել և կանխել այս ոլորտում բացթողումները:

Մշակել բուհերի միջազգային գործունեության իրավական կարգավորման նորմերի միասնական փաթեթ, հաշվի առնելով միջազգային համաձայնագրերով ՀՀ ստանդնաժ հանձնառությունները, ԵՄՏ օրենսդրությանը ՀՀ իրավական կարգավորումների և ընթացակարգերի ներդաշնակեցման անհրաժեշտ ուղղությունները, բարձրագույն կրթության միջազգայնացման ոլորտում օրենսդրական բացերով կամ գերկարգավորումների առկայությամբ պայմանավորված խնդիրները

Միջազգայնացման ոլորտում իրավական լիարժեք կարգավորումը հնարավորություն կտա բուհերին խուսափել հաշվետվողականության և այս ոլորտում թերացումներից, որոնք ծագում են իրավական կարգավորում չունենալու կամ թերի ունենալու պարագայում: Այն նաև կապահովի միջազգային իրավական փաստաթղթերի կիրառումը ՀՀ-ում՝ ենթաօրենսդրական ակտերի մշակման միջոցով: Հարկ է նշել, որ որպես Բոլոնիայի գործընթացի երկիր, ՀՀ-ը պարտավոր է հետևել այն թիրախներին, որոնք սահմանվել են Բոլոնիայի գործընթացում, որոնցից մեկը ուսանողների 20% շարժունությունն է:

Մշակել բուհերում միջազգայնացման ռազմավարությունների և արտաքին շարժունությունը խթանող կառուցակարգեր՝ թիրախավորելով ԵԱՏՄ և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում համապետ ծրագրերի զարգացումը

Բացի բարձրագույն կրթության միջազգայնացման՝ պետության կողմից մշակված ռազմավարությունից (մակրո մակարդակ), անհրաժեշտ է նաև, որ միջազգայնացման ռազմավարություններ մշակվեն նաև բուհերի կողմից (միկրո

մակարդակ): Սա հնարավորություն կտա պետության համար սահմանված նպատակների իրականացումը տրոհել առանձին կատարողների միջև, բուհերի համար սահմանել միջազգայնացման առաջնահերթ ասպեկտները և այդ ուղղությամբ ծավալել համակարգված գործունեություն: Բացի ռազմավարական նպատակների սահմանումից անհրաժեշտ է նաև խթանել շարժունությունը թիրախային երկրների և գործընկերների հետ:

10. Բարձրացնել ՀՀ բարձրագույն կրթության միջազգային տեսանելիությունը և գրավչությունը

Միջազգային գործունեությունը խթանելու նպատակով անհրաժեշտ է նաև բարձրացնել ՀՀ բարձրագույն կրթության միջազգային տեսանելիությունը և գրավչությունը, ստեղծել/ձևավորել մրցակցային առավելություններ, ընդգրկվել հեղինակավոր վարկանիշավորման համակարգերում, մարքեթինգային քայլեր ձեռնարկել ՀՀ բարձրագույն կրթության արդյունքների տեսանելիության բարձրացման համար: Բարձրագույն կրթության տեսանելիության և գրավչության բարձրացումը հնարավորություն կտա ավելի մեծ թվով օտարերկրյա ուսանողներ ներգրավել, ինտեգրվել միջազգային կրթական շուկային՝ այդպիսով դիվերսիֆիկացնելով բուհերի ֆինանսավորման աղբյուրները: Բարձրագույն կրթության միջազգային տեսանելիության բարձրացման համար անհրաժեշտ է հետևել մի շարք սկզբունքների.

- մասնակցայնություն և ներգրավածություն. տեսանելիության բարձրացման միջոցառումներին պետք է նայել շահակիցների տեսանկյունից և ներգրավել նրանց կարիքների բացահայտման, այս ուղղությամբ միջոցառումների բոլոր գործողություններում,

- թիրախավորվածություն. մարքեթինգային բոլոր քայլերը պետք է լինեն թիրախավորված՝ ըստ լսարանների և թիրախային խմբերի՝ առավելագույն արդյունք և արդյունավետություն ապահովելու նպատակով,
- մատչելիություն. բոլոր մարքեթինգային նյութերը և միջոցառումները պետք է մատչելի և ընկալելի լինեն թիրախային խմբերի համար:

Գործողություններ

Մշակել միջազգային վարկանիշավորման համակարգերում հայաստանյան բուհերի դիրքավորման /կամ դիրքերի բարելավման/ գործողությունների ծրագիր

Վարկանիշավորման համակարգերում ընդգրկված լինելը հնարավորություն է տալիս տեսանելի և կանխատեսելի լինել շահակիցների համար: Այն նաև հնարավորություն է տալիս արտաքին շահակիցներին պատկերացում կազմել բարձրագույն կրթության մասին և ըստ այդմ ձևավորել իրենց ակնկալիքները: Հետևաբար, վարկանիշավորման համակարգերում ընդգրկվելը պետք է լինի կարևոր թիրախներից մեկը միջազգայնացման ասպարեզում, որի համար անհրաժեշտ է մշակել համալիր միջոցառումների ցանկ, հետևել դրանց կատարմանն ու գործունեության բարելավմանը:

Մշակել հայաստանյան բուհերի միջազգային փոխգործակցության զարգացմանը նպաստող կառուցակարգեր

Միջազգային փոխգործակցության խթանման համար անհրաժեշտ է ստեղծել այդ փոխգործակցությունը խթանող միջավայր, նվազեցնել բյուրոկրատիան և ապահովել համակարգի թափանցիկությունը՝ պոտենցիալ գործընկերների համար ընկալելի և վստահելի լինելու նպատակով:

Հայաստանյան բուհերի միջազգային ճանաչելիության բարձրացման, բարձրագույն կրթության շուկայում ազգային բրենդի դիրքավորման և առաջնղման նպատակով մշակել առանձին մարքեթինգային ռազմավարություն (ներառյալ նպատակային շուկաները, գովազդատեղեկատվական միջոցառումները)

Հայաստանյան բուհերի ճանաչելիության բարձրացման նպատակով բարձրագույն կրթության շուկայում ազգային բրենդի դիրքավորումը պետք է սկսել ՀՀ բարձրագույն կրթության ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունից և գրավչություն ներկայացնող գործոնների շեշտադրումից: ՀՀ բարձրագույն կրթության բրենդի առաջնղման համար անհրաժեշտ է մշակել և իրագործել մարքեթինգային ռազմավարություն՝ սահմանելով թիրախային խմբերը, գովազդային միջոցառումները և այլն:

Հայաստանյան կրթական ծրագրերի վերաբերյալ օտարերկրյա ուսանողների տեղեկացվածության բարձրացման նպատակով ձևավորել ՀՀ բուհերում ուսանելու հիմնական պայմանները (factsheet), առավելությունները և հնարավորությունները մանրամասն նկարագրող օտարալեզու տեղեկատվական հարթակ

Առցանց հարթակներում ՀՀ բարձրագույն կրթության վերաբերյալ համալիր տեղեկատվության մշակումն ու թարմացումը հնարավորություն կտա հետաքրքրված կողմերին քիչ ջանքերով բավարար տեղեկատվություն ստանալ ՀՀ բուհական համակարգի և առաջարկների վերաբերյալ: Նման հարթակ ունի, օրինակ, Գերմանիան (www.study-in.de), որում զետեղված են Գերմանիայում սովորելու պայմանները, բուհերը, կրթական ծրագրերը, հղումները և դա հնարավորություն է տալիս բարձրացնել բուհերի և նրանց առաջարկների տեսանելիությունը:

11. Ընդլայնել միջազգային համագործակցությունը բարձրագույն կրթության, հետազոտությունների և նորարարության բնագավառում

Բարձրագույն կրթության, հետազոտությունների և նորարարության բնագավառում միջազգային համագործակցությունը միջազգայնացման կարևոր ուղղություններից մեկն է, որը հնարավորություն կտա դիվերսիֆիկացնել ֆուհերի երկամուտները, բարձրացնել ՀՀ բուհերի միջազգային տեսանելիությունը և հեղինակությունը և դառնալ արտաքին շահակիցների համար ցանկալի վայր հետազոտությունների իրականացման և բարձրագույն կրթություն ստանալու համար: Բարձրագույն կրթության, հետազոտությունների և նորարարության բնագավառում միջազգային համագործակցությունը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա.

- թափանցիկություն. հետազոտության արդյունքները և կրթական ծրագրերի մասին տեղեկատվությունը պետք է հասանելի լինեն շահակիցների համար,
- կայունություն. Միջազգային համագործակցությունը հետազոտությունների ոլորտում պետք է հիմնված լինի երկարատև գործըկերային հարաբերությունների վրա և պետք է ապահովվի հետազոտությունների միջազգայնացման ֆինանսական կայունությունը,
- նպատակայնություն. միջազգային հետազոտական ծրագրերը պետք է լինեն թիրախավորված՝ ըստ երկրների համալսարանների առաքելության և առաջնահերթ գործոնների:

Գործողություններ

Մշակել միջազգային գիտական, հետազոտական և նորարարական դրամաշնորհային ծրագրերին հայաստանյան բուհերի մասնակցությունը խթանող միջոցառումների համալիր

Հետազոտությունների և նորարարության բնագավառում միջազգային համագործակցությունը խթանելու նպատակով անհրաժեշտ է մշակել միջոցառումների համալիր ծրագիր՝ օրինակ, բարելավել հետազոտողների՝ նախագծերի դիմում-հայտեր մշակելու և նախագծեր կառավարելու հմտությունները, շահադրդող միջոցառումներ ձեռնարկել միջազգային հետազոտական ծրագրերում ներգրավվածության համար և այլն: Կարևոր է ընդգծել, որ ԵԲԿՏ-ում բուհերի եկամուտների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում միջազգային և տեղական դրամաշնորհային ծրագրերում մասնակցության շնորհիվ ստացվող միջոցները, ինչը անհրաժեշտ է խթանել նաև հայաստանյան բուհերում:

Մշակել միջազգային գերազանցության կենտրոնների հետ գործընկերային հարաբերությունների ձևավորման և ընդլայնման գործողությունների ծրագիր

Միջազգային հետազոտական ցանցերին, գերազանցության կենտրոններին համագործակցությունը մի կողմից հնարավորություն կտա բարելավել հետազոտությունների որակը, հետազոտողների մասնագիտական որակները, մյուս կողմից, բարձրացնել ՀՀ հետազոտական հաստատությունների և բուհերի տեսանելիությունը, զարգացնել գործընկերային կապերը: Սա լայն հնարավորություններ կարող է ստեղծել հետազոտությունների միջազգային ֆինանսավորման և համատեղ հետազոտությունների իրականացման համար:

Մշակել միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների աճին նպաստող ֆինանսական խթանների համակարգ

Միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների քանակը, նախ և առաջ, վկայում է որակյալ հետազոտություններ ունենալու մասին, ինչը կարևոր գործոն է հետազոտության միջազգայնացման համար: Հարկ է ընդգծել, որ միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումները հիմնականում բավականին ծախսատար են, ինչը կարող է հետազոտողներին հետ պահել միջազգային ամսագրերում հրապարակումներ ունենալուց: Հետևաբար, անհրաժեշտ է խթանել միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումները՝ հետազոտությունների որակի խթանման և ֆինանսական աջակցության միջոցով:

Միջազգային շուկայում հայաստանյան բուհերի կադրավաճ հետազոտությունների և մշակումների առևտրայնացման նպատակով ձևավորել ֆանդրայզինգի միասնական համակարգ

Հաճախ հետազոտությունների առևտրայնացման համար անհրաժեշտ են լինում նախնական ներդրումներ: Վերջիններիս հայթայթման համար անհրաժեշտ է ունենալ ֆոնդեր, հիմնադրամներ կամ ֆանդրայզինգի համակարգ, որի միջոցով հետազոտողները մրցակցային հիմունքներով կարող են ֆինանսավորում ստանալ իրենց հետազոտական արդյունքների առևտրայնացման համար:

Միջազգային ասպարեզում հայաստանյան բուհերի կրթական ծրագրերի մրցունակության բարձրացման նպատակով մշակել օտար լեզուներով ուսանողներին առաջարկվող կրթական ծրագրերի բազմազանեցման քաղաքականություն

Օտար լեզուներով կրթական ծրագրերի մշակումը հնարավորություն կտա ՀՀ բարձրագույն կրթությունը հասանելի դարձնել օտարերկրյա ուսանողների

համար: Հարկ է ընդգծել, որ օտարալեզու ծրագրերը պետք է ունենան նաև որակյալ բովանդակությունը և լինեն հավատարմագրված (ցանկալի է արտասահմանյան համատարմագրող գործակալությունների կողմից), օտարերկրացի ուսանողների համար գրավիչ լինելու համար:

Խթանել օտար լեզուներով համարել և կրկնակի որակավորմամբ կրթական ծրագրերի իրականացումը

Համատեղ և կրկնակի որակավորմամբ կրթական ծրագրերի իրականացումը նպաստում է միջազգայնացման միաժամանակ մի քանի ուղղությունների զարգացմանը. ուսանողների շարժունությանը, միջազգային գործընկերային կապերի ընդլայնմանը, օտարալեզու կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, ինչպես նաև ՀՀ բուհերի միջազգային տեսանելիության բարձրացմանը: Համատեղ և կրկնակի որակավորմամբ կրթական ծրագրերը նաև որակի նոր նշածող են սահմանում, որը շահադրդող գործոն և բենչմարքինգի հիմք կարող է լինել նաև մյուս կրթական ծրագրերի բարելավման համար:

Աջակցել կրթական ծրագրերի հավաքարմագրմանը միջազգային հայտնի ասոցիացիաների և հավաքարմագրող կառույցների կողմից այդ կրթական ծրագրերի նկատմամբ վստահության բարձրացման նպատակով

Միջազգային հայտնի ասոցիացիաների կողմից միջազգային հավատարմագրումը (ինստիտուցիոնալ և ծրագրային), հնարավորություն կտա ՀՀ բարձրագույն կրթությունը ավելի վստահելի, կանխատեսելի և գրավիչ դարձնել արտաքին շահակիցների, մասնավորապես՝ օտարերկրացի ուսանողների համար: Միջազգային հավատարմագրումը հնարավորություն կտա նաև որակի առավել բարձր նշածող սահմանել և ստանալ միջազգային

փորձագետների խորհուրդները՝ բարձրագույն կրթության և հետազոտության բարելավման համար:

12. Ավելացնել ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի միջազգային շարժունությունը

Ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի շարժունությունը միջազգայնացման ուղղություններից մեկն է, որի մակարդակը կարևոր չափանիշ է նաև Բոլոնիայի հաշվետվություններում: Ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի շարժունությունը հնարավորություն է տալիս հաստատել և զարգացնել գործընկերային կապերը, մեծացնել միջազգային կրթական շուկայում ինտեգրման մակարդակը, բարձրացնել բուհերի տեսանելիությունը և նպաստել որակյալ միջազգային ծառայությունների մատուցմանը: Ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի շարժունությունը պետք է խարսխված լինի մի շարք հիմնարար սկզբունքների վրա.

- մասնակցայնություն. շարժունության բոլոր փուլերում անհրաժեշտ է ապահովել շահակիցների ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը՝ վստահության մթնոլոր ձևավորելու համար,
- թափանցիկություն. միջազգային շարժունության ծրագրերը պետք է լինեն թափանցիկ բոլոր շահակիցների համար,
- կայունություն. միջազգային շարժունությունը պետք է ոչ թե հիմնված լինի պատահական համագործակցությունների վրա, այլ երկարատև, փոխշահավետ փոխգործակցության վրա և պետք է հետևել ծրագրերի ֆինանսական կայունության ապահովմանը,
- նպատակայնություն. միջազգային շարժունության ծրագրերը պետք է լինեն թիրախավորված՝ ըստ երկրների համալսարանների առաքելությունների նմանության և այլ առաջնահերթ գործոնների,

- մատչելիություն. Միջազգային շարժունության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է մատչելի և ընկալելի լինի թիրախային խմբերի համար:

Գործողություններ

խթանել պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական անձնակազմի վերապատրաստումների, միջազգային փոխանակման ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշների աճը

Պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական անձնակազմի միջազգային շարժունության ծրագրերը հնարավորություն կտան մի կողմից խթանել միջազգային գործըկերային կապերի ընդլայնումն ու կայունացումը, մյուս կողմից հնարավորություն կտան բարելավել նրանց մասնագիտական որակները միջազգային փորձ ձեռք բերելու միջոցով: Վարչական անձնակազմի փոխանակման ծրագրերը նրանց վերապատրասման, ինչպես նաև միջազգային փորձի տեղայնացման լայն հնարավորություններ են ընձեռում:

Նպաստել միջազգային փոխանակման ծրագրերում ուսանողների մասնակցությանը՝ նվազագույնի հասցնելով արտաքին շարժունությունը սահմանափակող արգելքները

Ուսանողների միջազգային շարժունության խթանման համար անհրաժեշտ է կրճատել բյուրոկրատիան, բացառել իրավական արգելքները և իրականացնել տեղեկատվության տարածման համալիր միջոցառումների՝ իրազեկվածության բարձրացման և ուսանողների շահադրդման նպատակով:

Մշակել ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի միջազգային շարժունության ֆինանսավորման սկզբունքներ

Շարժունության ծրագրերը պահանջում են ֆինանսական ներդրումներ, ուստի ֆինանսական միջոցների ներգրավման համար անհրաժեշտ է մշակել սկզբունքներ և մեխանիզմներ: Հետաքրքրված ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի համար պետք է ստեղծել միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցելու հավասար հնարավորություններ:

Մշակել ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի միջազգային շարժունության ազդեցության գնահատման ցուցիչներ, իրականացնել մշտադիտարկում և ձեռնարկել բարելավման միջոցառումներ

Միջազգային փոխանակման և շարժունության ծրագրերի իրականացումը ինքնանպատակ չէ. դրանք պետք է ապահովեն որոշակի դրական ազդեցություն բարձրագույն կրթության համակարգի վրա, սկսած որակի նոր չափանիշների սահմանումից մինչև աշխատանքային մշակույթի փոփոխությունը: Հետևաբար, կարևոր է գնահատել այդ ծրագրերի արդյունավետությունը՝ ըստ բարձրագույն կրթության համակարգի վրա իրենց ազդեցությամբ: Այդ նպատակով պետք մշակել ցուցիչների համակարգ, իրականացնել մշտադիտարկումներ և հրապարակել հաշվետվություններ, ներկայացնել արդյունքների բարելավման առաջարկություններ:

13. Բուհերում կրթական ծրագրերի բարեփոխումներին նպաստումը

Բուհերի կրթական ծրագրերի խնդիրը և դրանց մերձեցումը Բոլոնիայի գործընթացում ներառված երկրների կրթական հաստատությունների ծրագրերին և աշխատաշուկայի պահանջներին եղել և մնում է բուհերի և բարձրագույն

կրթական համակարգի առավել խոցելի կողմերից մեկը: Ընդ որում հարկ է նշել, որ բուհերի ճնշող մեծամասնությունը դեռևս ծրագրային հավատարմագրում չունեն, իսկ հավատարմագրման ընթացակարգերը չեն կարող իրապես նպաստել դրանց որակի բարձրացմանն ու դեպի աշխատաշուկա թիրախավորվածության բարձրացմանը: Խնդիրն ավելի է բարդանում բուհ-գործատուներ կապերի ոչ բավարար արդյունավետության, ստացված որակավորում-աշխատատեղ կապի բացակայության և աշխատաշուկայում բացառությամբ սահմանափակ թվով մասնագիտությունների՝ մասնագիտությունների գծով բարձրագույն մասնագիտական կրթության, դրա որևէ աստիճանի նկատմամբ գործատուների կողմից ներկայացվող պահանջի բացակայության տոտալ բնույթ կրելու հետ: Ընդ որում մեր դիտարկումները փաստում են, որ բուհերը հաճախ չեն էլ տիրապետում աշխատաշուկայի մասնագիտական պահանջներին և նպատակադրում են վերջնարդյունքներ որոնք բացարձակապես պահանջարկված չեն, չեն նպատակադրում վերջնարդյունքներ, որոնք տրե՛նդային են, իրականացնում են այնպիսի մասնագիտությունների կրթական ծրագրեր, որոնք բացարձակապես պահանջարկված չեն: Այս խնդրի լուծումը համալսարաններից պահանջում է հետազոտական ներուժ, հմտություններ և տեխնոլոգիական միջոցներ, ինը բնույթով լինելով ծախսատար ներկայումս հասու չէ բուհերից շատերին: Այդ պայմաններում բուհերը կրթական ծրագրեր մշակելիս կամ հստակեցնելիս հաճախ սահմանափակվում են փոքր ընտրանքի ուսումնասիրման արդյունքներով (որոշներն ընդհանրապես չեն ուսումնասիրում), չեն ունենում կրթական ծրագրերի մշտադիտարկման և հետադարձ կապի ապահովման տեղեկատվական համակարգեր: Սա բերում է «դիպլոմավորված գործազուրկների» թվի ավելացմանը՝ հասարակության մեջ խորացնելով բարձրագույն կրթության որակի, արժեքավորության և ընդհանրապես անհրաժեշտության առնչությամբ ձևավորված բացասական կարծիքը: Խնդիր

լուծումը պահանջում է համալսարանների և բարձրագույն կրթության ոլորտի մյուս սուբյեկտների ջանքերի համատեղում:

Ըստ էության խիստ անհրաժեշտություն է, որ կառավարությունը մասնագիտություններ որոշելիս և բուհերը նման մասնագիտությունների կրթական ծրագրեր մշակելիս առաջնորդվեն որոշակի հստակ ընթացակարգերով և միևնույն ժամանակ իրենց կառավարչական որոշումների կայացման համար տիրապետեն միևնույն տեղեկատվությանը, ինչը կծնավորվի համատեղ ջանքերով:

Գործողություններ

Բարձրագույն կրթության մասնագիտությունների որոշման և պարբերական վերանայման ընթացակարգերի սահմանում՝ հիմքում ունենալով պեդագոգիկ առաջնահերթությունները, աշխատաշուկայի կարիքները, զարգացման միտումները և միջազգային դասակարգիչները

Խիստ անհրաժեշտ է, որ բարձրագույն կրթության մասնագիտությունների սահմանման ընթացքում կառավարությունը տիրապետի էչ միայն միջազգային դասակարգիչներին, կամ բուհերի կողմից արվող առաջարկություններին, այլև ներքին ու միջազգային աշխատաշուկայում ընթացող կառուցվածքային փոփոխություններին և նախորդող ժամանակահատվածներում արձանագրված արդյունքներին: Աշխարհը շատ արագ է վերափոխվում: Տեխնոլոգիական զարգացումն ու արհեստական բանականությունը հիմնովին վերափոխում են մասնագիտություններն ու դրանց ներկայացվող պահանջները: Եվ թյուր է կարծիքը, որ նման փոփոխությունները Հայաստան հասնելու են ավելի ուշ: Այդ վերափոխումների ազդեցությունից ներկայումս անմասն չեն ՀՀ ՏՏ ու հեռահաղորդակցությունների ոլորտը, էներգետիկան, բժշկությունն ու ախտորոշումը, ֆինանսական-վերլուծական հատվածը և մարդու կենսագործունեության բազմաթիվ այլ ոլորտներ: Սա պահանջում է, որ մասնագիտությունների հստակեցման և դրանց ներկայացվող պահանջների

հստակեցման նպատակով ձևավորվեն միասնական փոխկապակցված տեղեկատվական երեք ենթահամակարգեր՝ «Բարձրագույն կրթության մասնագիտությունների սահմանման և վերանայման նպատակով միասնական տեղեկատվական համակարգ», «Աշխատաշուկայի կարիքների ամենամյա մշտադիտարկման միասնական տեղեկատվական համակարգի» և «Բուհերի շրջանավարտների կարիերայի հետազոծի մշտադիտարկման միասնական տեղեկատվական համակարգ», որոնք պարտադիր պետք է կունենան «Մեծ տվյալների մշակման» գործիքակազմ:

Որակավորումների ազգային շրջանակին, մասնագիտությունների ոլորտային շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող կրթական ծրագրերի մշակման և ներդրման խթանում

Բուհերին մրցունակ կրթական ծրագրերի մշակման և իրականացման գործում խթանելու և աջակցություն ցուցաբերելու առումով էական նշանակություն ունեն «խաղի միասնական կանոնների» սահմանումը: Այս առումով ամենաառանցքային խնդիրներն են հանդիսանում բարձրագույն կրթության մասնագիտությունների ոլորտների շրջանակի մշակումն ու ներդրումը և ծրագրային հավատարմագրման ընթացակարգերի, չափանիշների ու ցուցիչների հստակեցումը: Հարկ է նշել, որ բարձրագույն կրթության մասնագիտությունների ոլորտների որակավորումների շրջանակի մշակման աշխատանքներում պետք է ներառված լինեն տվյալ մասնագիտությունների բնագավառում կրթական ծրագրեր իրականացնող բոլոր բուհերը: Տվյալ դեպքում աշխատանքային խմբերի հիմնական խնդիրը պետք է հանդիսանա մասնագիտությունների նկարագրումը, ապագա մասնագետների նվազագույն պահանջվող իմացության (գիտելիքի, հմտությունների և կարողությունների) շրջանակի նկարագրումը և ամենամյա հստակեցումների իրականացումը, այդ իմացության ապահովմանը միտված կրթական վերջնարդյունքների թիրախավորումը: Առանցքային խնդիր է նաև բուհերում վերջնարդյունքների վրա հիմնված մրցունակ, մոդուլային

կառուցվածքով կրթական ծրագրերի մշակման, ներդրման և մշտադիտարկման միասնական սկզբունքների և չափանիշների մշակումն ու որակավորումների ոլորտային նկարագրիչների և կրթական ծրագրերի միջև կապի կառուցակարգերի ներդրումը: Այս աշխատանքների կազմակերպման ուղղությամբ բուհերի շարժառիթների մեծացման նպատակով պետությունը կարող է բուհերին հատկացվող ֆինանսական միջոցներում ներառել բնուսային ֆինանսավորման հատկացումներ, որոնք կտրամադրվեն այն բուհերին ովքեր նկատելի ու չափելի առաջընթաց են ապահովել կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման ու գնահատման փուլերում արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը երաշխավորող կառուցակարգերի ներդրման, ինչպես նաև գործատուների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ: Կարևոր խնդիր է նաև կրթական ծրագրերում տարբեր օրենքներով և որոշումներով բուհերին «պարտադրված» դասընթացների բացառումը, ինչը նույնպես ֆինանսական լուրջ աջակցություն կարող է դառնալ Հայաստանյան բարձրագույն ուսումնական հաստատություններին և խթան հանդիսանալ տնտեսված միջոցները վերոնշյալ կարողությունների կուտակմանը նպատակաուղղելու հարցում:

14. Բուհ ընդունելության և ներքին շարժունության գործընթացների բարեփոխումը

Բարձրագույն կրթության համակարգի առանցքային խնդիրներից մեկը շարունակում է մնալ բուհ ընդունելության անկատար մեխանիզմը, բուհերին հատկացվող կրթական տեղերի չկանոնակարգվածությունն ու հայաստանյան բուհերի ուսանողների սահմանափակ ներքին ու միջազգային շարժունությունը: ՀՀ բուհերը շարունակում են ըստ ավանդույթի պլանավորել, հայցել ու ստանալ կրթական տեղեր, որոնք անընդհատաբար թափուր են մնում և տարեցտարի այդ

թափուր մնացող կրթական տեղերի տեսակարար կշիռը հետևողականորեն ավելանում է: Այս պայմաններում բուհերը մնում են «սպասողական» ռեժիմում՝ պահպանելով այդ կրթական ծրագրերի սպասարկմանը միտված ամբիոնները, դրանց դասավանդող և ուսումնաօժանդակ անձնակազմը: Սա հանգեցնում է բուհերի ֆինանսական միջոցների անարդյունավետ ծախսմանը, որակի կատարելագործման, աշխատակիցների վարձատրության բարձրացման ու շահադրդման միջոցների բացակայությանը՝ դրանց առկայության պայմաններում: Բուհերը հաճախ «վախենալով իրենց չափերի կրճատումից» և միավորման վտանգից նախընտրում են պահպանել նման անարդյունավետ կառուցվածքը՝ իրենց զրկելով արդյունավետության բարձրացման հնարավորությունից, իսկ օպետությանն ու համայնքին՝ որակյալ կրթության տնտեսական էֆեկտից:

Մյուս կողմից ՀՀ բարձրագույն կրթության համակարգում ստեղծված են երկու իրողություններ: Մի կողմից գործում են բուհեր, որոնք իրենց ուսանողին ունակ են ընտրել սեփական «ֆիլտրով» (սեփական քննական համակարգով) և մյուս կողմից բուհեր՝ որտեղ ուսանողն ընդունվում է միասնական քննությունների հանձնման մեխանիզմով, ինչն իրականում դիմորդի գիտելիքի ստուգման անարդյունավետ ձև է: Նման իրավիճակում, եթե բուհերն անգամ ունենան որակյալ կրթական ծրագրեր ու կրթական ռեսուրսներ՝ բավարար չէ ակնկալել, որ կկարողանան իրականացնել որակյալ կրթություն կամ վերջնարդյունքում հասնել բացառապես որակյալ շրջանավարտներ ունենալուն՝ քանի որ ի սկզբանե խախտվել է որակյալ սելեկցիայի պայմանը:

Իսկ ուսանողների թվից բուհերի կախվածությունը հանգեցնում է նրան, որ վերջինների կրթական ծրագրերն ու ուսումնական պլանները այն աստիճան տարբերվեն միմյանցից, որ խոչընդոտեն իրենց կրթական ծրագիրը նախապես ընտրած, սակայն հընթացս այն փոփոխելու ցանկություն ունեցող ուսանողների տեղաշարժին: Այս պրակտիկան էականորեն զսպում է ոչ միայն ուսանողների

ներքին շարժունության հնարավորությունը, այլև թուլացնում է ՀՀ դիրքերը միջազգային փոխանակման ծրագրերում:

Հատկանշական է, որ այս խնդրի լուծումը պահանջում է կամքի դրսևորում ինչպես քաղաքականությունը մշակողի, այնպես էլ բուհերի մոտ:

Գործողություններ

Ըստ մասնագիտությունների ընդունելության փեղերի հափկացման նոր սկզբունքների մշակում՝ թիրախավորելով պետության առաջնահերթությունները, աշխարհաշուկայի առկա պահանջարկը և միտումները

Այս գործողության հնարավորությունը և արդյունավետությունը էապես կախված է նախորդ կետում դիտարկված գործողության (միասնական տեղեկատվական համակարգի ձևավորման) կատարումից: Սակայն տեղեկատվական համակարգը սույլ միջոց է պահանջարկի միտումներին տիրապետելու առումով: Տվյալ դեպքում կարևոր է, որ պետությունն ունենա բարձրագույն կրթության մասնագիտությունների հայտարարված գերակայություններ և հանրակրթության համակարգում ձևավորի մասնագիտական կողմնորոշման արդյունավետ ինստիտուտ, որի ջանքերով հանրակրթությունում ներառված աշակերտների մասնագիտական նախապատվությունները «կուղղորդվեն» դեպի պետության թիրախավորած մասնագիտությունները:

Ընդունելության կառուցակարգերի վերափոխում՝ թիրախավորելով բուհերի միջև հավասար մրցակցային պայմանների ապահովումը և բուհերի կողմից իրենց ուսանողներին ազատորեն ընտրելու հնարավորության ընձեռումը

Առանցքային քայլ է բուհերի միջև դիմորդների ընտրության հավասար մրցակցային պայմանների ապահովումը և շրջանավարտների կարիերայի առումով հավասար պատասխանատվության սահմանումը: Տվյալ դեպքում արդյունավետ գործիք է բուհերին սեփական դիմորդներին ընտրելու


հնարավորության ընձեռումը և կրթական ծրագրի ելքի նկատմամբ խիստ վերահսկողության սահմանումը: Իբրև նմանատիպ վերահսկողության գործիք կարող է հանդիսանալ ոչ թե բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի այլ բացառապես որակավորումը հավաստող փաստաթղթի առկայությամբ աշխատելու պրակտիկայի ներդրումը: Որակավորողի ինստիտուտը բուհի կրթական ծրագրի վերջնական գնահատման արդյունավետ միջոց է բազմաթիվ կրթական մոդելներում:

ՀԱԵԼՎԱԾՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԹՎԵՐՈՎ

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՀՀ ԴԻՐՔԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԵՆԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ «ԳԼՈՐԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐՈՒՄ» 2007-2017 ԹԹ.



Ցուցանիշը	2017-2018	2016-2017	2015-2016	2014-2015	2013-2014	2012-2013	2011-2012	2010-2011	2009-2010	2008-2009	2007-2008
Կրթության քանակը	66	61	55	58	54	51	48	66	73	73	73
Կրթական համակարգի որակը	57	68	84	86	69	79	97	115	105	98	94
Մաթեմատիկայի և գիտության կրթության որակը	33	42	47	69	67	71	81	74	73	76	65
Կառավարման դպրոցների որակը	106	116	115	116	120	127	131	130	125	124	121
Կրթության որակը	61	70	80	84	87	94	105	110	103	106	100
Հետազոտությունների և վերապատրաստման ծառայությունների առկայությունը	82	84	104	120	119	106	114	124	120	125	111
Անձնակազմի վերապատրաստման աստիճանը	96	109	117	119	114	98	105	116	114	117	114
Աշխատանքային ուսուցում	88	95	116	125	115	103	114	123	120	124	116
5-րդ հիմնասյուն. Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	69	71	72	75	77	70	76	91	96	94	95
Վստահություն պրոֆեսիոնալ կառավարման նկատմամբ, 1-7 (լավագույնը)	71	89	93	95	96	91	107	117	115	125	127
Աշխատաշուկայի արդյունավետությունը	51	55	58	74	50	77	34	47	47	45	40
Տաղանդների արդյունավետ օգտագործումը	79	90	93	102	92	30	62	72	72	71	63
Գիտահետազոտական հաստատությունների որակը	88	100	105	105	106	111	107	103	98	101	83
Կազմակերպության ծախսերը հետազոտության և զարգացման վրա	71	92	109	102	109	111	117	127	115	96	110
Համալսարան-արդյունաբերություն համագործակցությունը հետազոտությունների և զարգացման ոլորտում	88	92	111	112	107	122	125	124	114	116	104
Գիտնականների և ինժեներների առկայությունը	48	52	59	75	74	73	87	93	91	80	58
PCT (արտոնագրային համագործակցության պայմանագիր) արտոնագրերը, դիմումներ/միլիոն բնակչություն	57	57	49	53	58	61					
Մրցունակության համաշխարհային ինդեքս	73	92	82	85	79	82	92	98	97	97	93

ՀԱՎԵԼՎԱԾ 2 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ «ԳՆՈՐԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ 2017-2018 ԹԹ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ, ՀՀ-Ի, ԳԻՏԵԼԻՔԱԿԵՆ ՈՐՈՇ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՆԱԽԿԻՆ ԽՍՀՄ ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՈՎ





ՀԱՎԵԼՎԱԾ 3 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
ՀՀ պետական բյուջեի ծախսեր, մլն.դրամ	822054,4	945449,8	935524,6	1001054,3	1044179,6	1152620,0	1246437,4	1305599,5	1376993,0	1360112,3
Կրթության ծախսեր, մլն.դրամ	103681,3	126909,7	99903,2	108432,1	105554,3	108306,8	128027,6	125690,8	128736,9	127594,2
Բարձրագույն կրթության ծախսեր, մլն.դրամ	6668,7	7682,3	7619,4	7798,8	7808,2	8111,4	9795,3	11529,5	12325,6	12131,5
Բարձրագույն կրթության ծախսերի տեսակարար կշիռը կրթության ծախսերում %	6,4	6,1	7,6	7,2	7,4	7,5	7,7	9,2	9,6	9,5



ՀԱՎԵԼՎԱԾ 4 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Տնային տնտեսությունների մեկ առկա անդամի հաշվով միջին ամսական սպառողական ծախսերն ուղղված ուսման վճարներին, դրամ	1221	833	141	167	440	511	214	488	663
Բարձրագույն կրթական հաստատություններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսություններում միջին ամսական ծախսը մեկ սովորողի հաշվով, դրամ	-	-	-	-	24604	27121	31386	31392	28550
Տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով կրթության ծախսերի տեսակարար կշիռը սպառողական ծախսերի կառուցվածքում, %	4,2	3	0,5	0,5	1,3	1,4	0,5	1,1	1,5
Կրթության վրա ծախսերի մասնաբաժինը բնակչության ընդհանուր սպառման նկատմամբ, ըստ քվինտիլային խմբերի									
Ամենաաղքատ	0,7	0,6	0,1	0,2	0,1	0	0,1	0,1	0,2
2-րդ քվինտիլ	1,8	0,9	0,1	0,1	0,5	0	0,2	0,2	0,4
3-րդ քվինտիլ	3	1	0,2	0,1	1,1	0,2	0,2	0,5	1,2
4-րդ քվինտիլ	3,8	1,7	0,1	0,1	1	0,4	0,2	0,9	1,3
5-րդ քվինտիլ	7,3	5,5	0,9	1	1,5	0,5	1	1,7	2




ՀԱՎԵԼՎԱԾ 5 ԲՈՒՀԵՐԻ, ԴՐԱՆՑՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԸ ԵՎ ԲԱՇԽՎԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ


ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԲՈՒՀԵՐԻ ԵՎ ՌԻԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2003-2013 ԹԹ	ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ	ԲՈՒՀԵՐԻ ՌԻԱՆՈՂՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՈՒՀԵՐԻ և ՄԱՐԶԱՅԻՆ ԲՈՒՀԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՈՆՆԵՐԸ																																																													
<p>■ Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը (առաջին աստիճան) — Դրանցում սովորող ուսանողները, 1000 մարդ</p> <table border="1"> <thead> <tr> <th>Տարի</th> <th>Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը (առաջին աստիճան)</th> <th>Դրանցում սովորող ուսանողները, 1000 մարդ</th> </tr> </thead> <tbody> <tr><td>2003</td><td>93</td><td>77,9</td></tr> <tr><td>2004</td><td>88</td><td>85,1</td></tr> <tr><td>2005</td><td>89</td><td>97,8</td></tr> <tr><td>2006</td><td>87</td><td>105,9</td></tr> <tr><td>2007</td><td>85</td><td>112,2</td></tr> <tr><td>2008</td><td>90</td><td>114,4</td></tr> <tr><td>2009</td><td>77</td><td>114,6</td></tr> <tr><td>2010</td><td>74</td><td>111</td></tr> <tr><td>2011</td><td>68</td><td>95,3</td></tr> <tr><td>2012</td><td>65</td><td>90,1</td></tr> <tr><td>2013</td><td>63</td><td>85,9</td></tr> <tr><td>2014</td><td>62</td><td>79,6</td></tr> <tr><td>2015</td><td>60</td><td>84,6</td></tr> <tr><td>2016</td><td>63</td><td>81,7</td></tr> </tbody> </table>	Տարի	Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը (առաջին աստիճան)	Դրանցում սովորող ուսանողները, 1000 մարդ	2003	93	77,9	2004	88	85,1	2005	89	97,8	2006	87	105,9	2007	85	112,2	2008	90	114,4	2009	77	114,6	2010	74	111	2011	68	95,3	2012	65	90,1	2013	63	85,9	2014	62	79,6	2015	60	84,6	2016	63	81,7	<p>■ Երևանում ■ Մարզերում</p> <table border="1"> <thead> <tr> <th>Երկրամաս</th> <th>Պրոցենտ</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Երևանում</td> <td>81%</td> </tr> <tr> <td>Մարզերում</td> <td>19%</td> </tr> </tbody> </table>	Երկրամաս	Պրոցենտ	Երևանում	81%	Մարզերում	19%	<p>■ Երևանում սովորող ուսանողներ ■ Շիրակի մարզում սովորող ուսանողներ ■ Լոռվա մարզում սովորող ուսանողներ ■ Այլ մարզերում սովորող ուսանողներ</p> <table border="1"> <thead> <tr> <th>Երկրամաս</th> <th>Պրոցենտ</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Երևանում սովորող ուսանողներ</td> <td>84%</td> </tr> <tr> <td>Շիրակի մարզում սովորող ուսանողներ</td> <td>7%</td> </tr> <tr> <td>Լոռվա մարզում սովորող ուսանողներ</td> <td>4%</td> </tr> <tr> <td>Այլ մարզերում սովորող ուսանողներ</td> <td>5%</td> </tr> </tbody> </table>	Երկրամաս	Պրոցենտ	Երևանում սովորող ուսանողներ	84%	Շիրակի մարզում սովորող ուսանողներ	7%	Լոռվա մարզում սովորող ուսանողներ	4%	Այլ մարզերում սովորող ուսանողներ	5%
Տարի	Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը (առաջին աստիճան)	Դրանցում սովորող ուսանողները, 1000 մարդ																																																													
2003	93	77,9																																																													
2004	88	85,1																																																													
2005	89	97,8																																																													
2006	87	105,9																																																													
2007	85	112,2																																																													
2008	90	114,4																																																													
2009	77	114,6																																																													
2010	74	111																																																													
2011	68	95,3																																																													
2012	65	90,1																																																													
2013	63	85,9																																																													
2014	62	79,6																																																													
2015	60	84,6																																																													
2016	63	81,7																																																													
Երկրամաս	Պրոցենտ																																																														
Երևանում	81%																																																														
Մարզերում	19%																																																														
Երկրամաս	Պրոցենտ																																																														
Երևանում սովորող ուսանողներ	84%																																																														
Շիրակի մարզում սովորող ուսանողներ	7%																																																														
Լոռվա մարզում սովորող ուսանողներ	4%																																																														
Այլ մարզերում սովորող ուսանողներ	5%																																																														

ՀԱՎԵԼՎԱԾ 6 ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՒՎՈՐՈՒՄ ԴՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹԻՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ


ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՀԱՄԱԽԱՌՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՈՒՄ 2003-2016 ԹԹ.




ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ ՄԵՋ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ 2012-2016 ԹԹ



ԲՈՒՎՈՐՈՒՄ ԴՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՄԱՆ 2012-2017 ԹԹ



ԲՈՒՎՈՐՈՒՄ ԴՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ 2012-2017 ԹԹ



Բարձրագույն պետական ուսումնական հաստատությունների հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի թվաքանակն ըստ գիտության բնագավառի և ըստ գիտական աստիճանի ու կոչման, 2016/2017 ուս. տարի


	Հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմ	նրանցից ունեն՝			
		գիտական աստիճան		կոչում	
		Ընդամենը	դոկտորի	թեկնածուի	պրոֆեսորի
Ֆիզիկամաթեմատիկական	8,5%	16,3%	10,9%	12,4%	11,6%
Քիմիական	2,4%	4,1%	3,7%	3,4%	3,5%
Կենսաբանական	3,1%	4,6%	5,3%	3,2%	4,7%
Երկրաբանական	0,4%	0,5%	0,6%	0,3%	0,5%
Տեխնիկական	11,2%	13,7%	12,6%	9,8%	14,8%
Գյուղատնտեսական	0,8%	1,0%	1,3%	0,6%	1,3%
Պատմական	3,1%	5,2%	3,8%	3,7%	3,7%
Տնտեսագիտական	11,2%	8,1%	13,9%	6,8%	12,1%
Փիլիսոփայական	1,6%	2,2%	1,5%	1,9%	1,7%
Բանասիրական	18,0%	11,0%	17,4%	10,3%	16,0%
Աշխարհագրական	0,9%	1,3%	1,2%	1,3%	1,2%
Իրավաբանական	3,0%	3,8%	2,5%	2,3%	1,7%
Մանկավարժական	8,4%	3,3%	5,9%	6,6%	5,3%
Բժշկական	7,8%	14,4%	7,9%	7,6%	4,9%
Դեղագործական	0,7%	0,5%	0,7%	0,3%	0,6%
Անասնաբուժական	0,8%	2,2%	1,3%	1,5%	1,6%
Արվեստագիտություն	6,8%	1,6%	2,1%	10,6%	4,3%
Ճարտարապետություն	7,0%	2,2%	2,0%	13,9%	5,2%
Հոգեբանություն	2,1%	1,3%	3,1%	1,5%	2,4%
Քաղաքագիտություն	0,8%	1,0%	1,0%	0,8%	0,9%
Ֆիզիկական պատրաստություն	0,3%				0,4%
Սոցիոլոգիա	0,5%	0,8%	0,6%	0,6%	0,6%
Աստվածաբանություն	0,2%	0,6%	0,3%	0,4%	0,3%
Էկոլոգիա	0,1%	0,3%	0,2%	0,1%	0,6%
Ընդամենը	100,0%	9,0%	42,9%	11,0%	32,6%

Բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատությունների հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի թվաքանակն ըստ գիտության բնագավառի և ըստ գիտական աստիճանի ու կոչման, 2016/2017 ուս. տարի


	գիտական աստիճան			կոչում	
	Ընդամենը	դոկտորի	թեկնածուի	պրոֆեսորի	դոցենտի
Ֆիզիկամաթեմատիկական	4,0%	6,1%	6,2%	6,7%	7,8%
Քիմիական	1,4%	3,0%	2,1%	10,0%	2,8%
Կենսաբանական	4,4%	9,1%	5,8%	3,3%	4,3%
Տեխնիկական	2,8%		4,5%		5,0%
Գյուղատնտեսական	0,2%		0,4%		0,7%
Պատմական	4,4%	6,1%	2,5%	3,3%	5,0%
Տնտեսագիտական	15,5%	9,1%	21,0%	13,3%	16,3%
Փիլիսոփայական	5,2%	9,1%	7,4%	10,0%	5,7%
Բանասիրական	14,0%	6,1%	12,8%	10,0%	14,9%
Աշխարհագրական	1,9%	6,1%	1,2%	6,7%	0,7%
Իրավաբանական	12,0%	9,1%	10,3%	3,3%	9,2%
Մանկավարժական	6,8%	6,1%	5,3%	10,0%	5,7%
Բժշկական	20,1%	24,2%	14,0%	10,0%	15,6%
Դեղագործական	0,9%		1,6%		1,4%
Անասնաբուժական	0,7%		0,4%		
Արվեստագիտություն	2,8%		0,8%	6,7%	2,8%
Հոգեբանություն	2,8%	6,1%	3,3%	6,7%	2,1%
Ֆիզիկական պատրաստություն	0,2%		0,4%		
Ընդամենը	100,0%	5,8%	42,4%	5,2%	24,6%

ՀԱՎԵԼՎԱԾ 7 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԻԵՎ ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ


ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԿՐԹԱՎԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՍՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ 2008-2016 ԹԹ




ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԿՐԹԱՎԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՍՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ 2008-2016 ԹԹ




ՀՀ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԹՎՈՒՄ ԿՐԹԱՎԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՍՆՑ ՏԵՍԱՎԱՐԱՐ ԿՇԻՈՒՆԵՐԸ 2016 Թ







ՀՀ ԱՂՔԱՏ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԹՎՈՒՄ ԿՐԹԱՎԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՍՆՑ ՏԵՍԱՎԱՐԱՐ ԿՇԻՈՒՆԵՐԸ 2016 Թ




	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Բարձրագույն կրթությամբ գլխավոր ունեցող տնային տնտեսությունների սպառման մակարդակի գերազանցումն այն տնտեսությունների սպառման մակարդակի համեմատ, որոնք գլխավորում են տարրական կամ թերի միջնակարգ կրթություն ունեցողները (%)	30	36	31	24	34	29	25	19	17



ՀԱՎԵԼՎԱԾ 8 ԿՐԹԱԿԱՆ ՏԵՂԵՐԻ ԳԵՐԱՌԱԶԱՐԿԻ ՊԱՏԿԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 2013-2017 ԹԹ.




ՀԱՎԵԼՎԱԾ 9 ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՆՁԻՆ ԲՈՒՀԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՏԵՂԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ




ՀՎԵԼՎԱԾ 10 ՊԱՀԱՆՋԱՐԿՎԱԾ ԵՆ ԱՐԴՅՈՔ «ԱՌԱՎԵԼ ՊԱՀԱՆՋԱՐԿՎԱԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ բուհերում առավելագույն 15 թափուր տեղ ունեցող մասնագիտությունների մասնաբաժինը 2016-2017 ուս տարվա ընդունելության արդյունքներով թափուր մնացած տեղերում





ՀՀ բուհերում առավելագույն 15 թափուր տեղ ունեցող մասնագիտությունների մասնաբաժինը 2017-2018 ուս տարվա ընդունելության արդյունքներով թափուր մնացած տեղերում



ՀՀ բուհերում առավելագույն 15 թափուր տեղ ունեցող մասնագիտությունների մասնաբաժինը 2017-2018 ուս տարվա ընդունելության արդյունքներով թափուր մնացած տեղերում՝ մեծ խմբերով

- Մասնագիտական մասնավարժություն, լեզու և գրականություն, ըստ լեզուների
- Սերվիս
- Տեղեկատվական համակարգեր, տեխնոլոգիաներ, անվտանգություն
- Լրագրություն
- Թարգմանչական գործ ըստ լեզուների
- Միջազգային հարաբերություններ
- Հայոց լեզու և գրականություն
- Օտար լեզու և գրականություն, ըստ լեզուների
- Հոգեբանություն
- Տարրական մասնավարժություն և մեթոդիկա
- Անզկերեն լեզու և գրականություն
- Ինֆորմատիկա
- Պատմություն
- այլ մասնագիտություններ





ՀԱՎԵԼՎԱԾ 11 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԹՎԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ 2018-2020 ԹԹ.՝ ԸՍՏ ՏԱՐԲԵՐ ՍՑԵՆԱՐՆԵՐԻ¹⁶

Սցենարը	2018/19	2019/20	2020/21	2021/22	2022/23	2023/24	2024/25	2025/26	2026/27	2027/28
B1 ¹⁷	18720	19609	20650	20870	20832	20588	21582	21796	23031	23116
B1+ ¹⁸	19214	21168	22390	22771	22900	22750	24045	24454	26078	26359
B1++ ¹⁹	19463	21970	23290	23760	23983	23889	25350	25873	27717	28113
B1++A ²⁰	19463	26370	27954	28518	28786	28673	30427	31055	33267	33743
B1- ²¹	18232	18111	18986	19068	18891	18573	19309	19362	20272	20203
B1-- ²²	17991	17383	18183	18203	17967	17617	18240	18225	18993	18861
T1- ²³	18509	18446	19370	19332	19014	18608	19154	19012	19636	19387
T1+ ²⁴	18634	19040	20128	20643	20863	20981	22266	22799	24369	24957
T1+A ²⁵	18634	23261	24591	25175	25397	25496	27011	27610	29463	30124

¹⁶ Սցենարները կապված են հետևյալ գործոնների փոփոխություններով՝ ծնելիություն (առաջին դասարան գնացողների թվի փոփոխություններ), միգրացիա և մանկամահացություն (դասարանից դասարան աշակերտների թվի փոփոխություններ), ավագ դպրոց (հանրակրթական դպրոցից ավագ դպրոց անցման ցուցանիշի փոփոխություններ): Սցենարներն առաջադրվել են 2006-2016 թթ. միտումների պահպանման, խորացման և լավարկման համատեքստերում:

¹⁷ Ենթադրությունը հետևյալն է, որ 2011թ-ից սկսած ծնունդների թվի տարեկան միջինում 3 տոկոսով կրճատման տեմպը կպահպանվի (բացառելով վերջին տարիներին անկման տեմպի ուժեղացման միտումը): Մենք այս սցենարում ենթադրում ենք, որ տարեցտարի ծնունդները կպակասեն՝ **տարեկան 3 տոկոս** կայուն տեմպով: Դասարանից դասարան փոխադրման գործակիցը կանխատեսվում է որպես ժամանակահատվածում լինելու և կազմելու է կայուն և կազմելու է կանխատեսված նախորդած այն տարիների միջին ցուցանիշը, որի ընթացքում փոխադրման գործակիցը ստանդարտ շեղումը (սիզման) եղել է նվազագույնը:

¹⁸ Դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում արձանագրվել են տարիներ, երբ ծնունդների թիվը ընթացիկ տարում նախորդ տարվա համեմատ ավելացել է, առավելագույնը 3 տոկոսով: Որպես լավատեսական սցենարի կանխարդյթ, դիտարկվել է իրավիճակ, երբ 2017-ից ծնունդների թիվը **աճում է տարեկան 3 տոկոսով**: Դասարանից դասարան փոխադրման գործակիցը կանխատեսվում է որպես ժամանակահատվածում լինելու և կայուն և կազմելու է B1՝ բազային սցենարով նախատեսված մակարդակից բարձր երկու ստանդարտ շեղման (սիզմայի չափով):

¹⁹ Ենթադրությունը խիստ լավատեսական է: Որպես խիստ լավատեսական սցենարի կանխարդյթ, դիտարկվել է իրավիճակ, երբ 2017-ից ծնունդների թիվը ընդհակառակը **կաճի տարեկան 7 տոկոսով** (դիտարկվող ժամանակահատվածում նմանօրինակ աճի արձանագրման նախադեպեր եղել են, օրինակ՝ 2007 և 2009թթ.վականներին): Դասարանից դասարան փոխադրման գործակիցը կանխատեսվում է որպես ժամանակահատվածում լինելու և կայուն և կազմելու է B1՝ բազային սցենարով նախատեսված մակարդակից բարձր երկու ստանդարտ շեղման (սիզմայի չափով):

²⁰ Ենթադրությունը կատարյալ լավատեսական է: Որպես այս սցենարի կանխարդյթ, դիտարկվել է իրավիճակ, երբ 2017-ից ծնունդների թիվը ընդհակառակը **կաճի տարեկան 7 տոկոսով** (դիտարկվող ժամանակահատվածում նմանօրինակ աճի արձանագրման նախադեպեր եղել են, օրինակ՝ 2007 և 2009թթ.վականներին): Դասարանից դասարան փոխադրման գործակիցը կանխատեսվում է որպես ժամանակահատվածում լինելու և կայուն և կազմելու է B1՝ բազային սցենարով նախատեսված մակարդակից բարձր երկու ստանդարտ շեղման (սիզմայի չափով): Մյուս կողմից ենթադրվում է, որ ավագ դպրոցում հնարավոր կլինի ճեղքում արձանագրել և դրանում աշակերտների ընդգրկվածությունն կաճի: Ենթադրվել է, որ հիմնական դպրոցից ավագ դպրոց փոխադրման գործակիցը կանխատեսվող ժամանակահատվածի համար միջինում կաճի **15 տոկոսային կետով**:

²¹ Ենթադրությունը հետևյալն է, որ ծնունդների թիվը տարեցտարի կկրճատվի ոչ թե նախորդող 10 տարվա միջին տեմպով, այլ 2017թ.-ին 2016-ի համեմատությամբ արձանագրված անկման չափով՝ **տարեկան 7 տոկոսով**: Դասարանից դասարան փոխադրման գործակիցը կանխատեսվում է որպես ժամանակահատվածում լինելու և կայուն և կազմելու է B1՝ բազային սցենարով նախատեսված մակարդակից ցածր երկու ստանդարտ շեղման (սիզմայի չափով):


²² Ենթադրությունը հետևյալն է, որ ծնունդների թիվը տարեցտարի կկրճատվի՝ վերջին տարիներին արձանագրված միտումների պահպանմամբ, այն է՝ անկումը կխորանա և սույն ցուցանիշը կկազմի **տարեկան 10 տոկոս**: Դասարանից դասարան փոխադրման գործակիցը կանխատեսվում է որպես ժամանակահատվածում լինելու և կայուն և կազմելու է B1՝ բազային սցենարով նախատեսված մակարդակից ցածր երեք ստանդարտ շեղման (սիզմայի չափով):

²³ Ենթադրությունը հետևյալն է, որ վերջին տարիներին ծնունդների թվի անկման տեմպի ուժեղացումը կպահպանվի: Կանխատեսվել է, որ ծնունդների նվազումը տարեցտարի կարագանա, այն է՝ ծնունդների թիվը **տարեկան 1 տոկոսային կետով կպակասի**: Միևնույն ժամանակ ենթադրվել է, որ դասարանից դասարան փոխադրման գործակիցը ոչ թե կմնա հաստատուն այլ կանխատեսվում է որպես ժամանակահատվածում կշարունակի վերջին 5 տարիներին արձանագրված միտումները: Այսպես, բացասական միտումները խորանալու են՝ **վերջին 5 տարիների համար հաշվարկված միջին տարեկան տեմպի չափով**:


²⁴ Ենթադրությունները խիստ լավատեսական է: Ենթադրվել է, որ ծնունդների թվի տարեցտարի նվազման միտումը վերափոխվելու է աճի, 2017-ից սկսած, յուրաքանչյուր հաջորդ տարի, նախորդի համեմատությամբ, ծնունդների թիվը կավելանա **1 տոկոսային կետով**: Իսկ դասարանից դասարան փոխադրման գործակիցը պարագայում կանխատեսվում է որպես ժամանակահատվածում դրսևորվելու է վերջին 5 տարիներին արձանագրված միտումներին հակադրված իրավիճակ: Այսինքն ենթադրվել է, որ 2017-ին դիտարկվող ցուցանիշները գրանցել են իրենց վատագույն արդյունքը, իսկ 2017-ից հետո սկիզբ է առնում արմատական բարելավման փուլը: Ցուցանիշների արժեքների տարեկան փոփոխությունը (**աճը**) **տեղի է ունենում նույն տեմպով**, ինչ միջին տարեկան տեմպով որ դրանք նվազել են **նախորդ 5 տարիների ընթացքում**:

²⁵ Ենթադրությունը հետևյալն է, որ խիստ լավատեսական է: Ենթադրվել է, որ ավագ դպրոցում աշակերտների ընդգրկվածությունը կաճի: Ենթադրվել է, որ հիմնական դպրոցից ավագ դպրոց փոխադրման գործակիցը կանխատեսվող ժամանակահատվածի համար կաճի **միջինում 15 տոկոսային կետով**:

ՀԱՎԵԼՎԱԾ 12 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ 2013-2016 ԹԹ



ՀԱՎԵԼՎԱԾ 13 ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ



ՀԱՎԵԼՎԱԾ 14 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

	Փաստաթղթի անվանումը	Ընդունման տարեթիվը
1.	ՀՀ Սահմանադրություն ՀՀ Սահմանադրության փոփոխություններ	06.12.2015
2.	ՀՀ օրենքը կրթության մասին	14.04.1999
3.	ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին	14.12.2004
4.	ՀՀ օրենքը գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին	05.12.2000
5.	ՀՀ օրենքը հիմնական գործունեության պետական աջակցության մասին	23.05.2006
6.	ՀՀ օրենքը ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին	19.07.2011
7.	Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին կոնվենցիա /Լիսաբոնի կոնվենցիա	09.06.2004
8.	Բոլոնիայի գործընթացին Հայաստանի Հանրապետության միացում /ք. Բրեզեն/	2005
9.	ՀՀ Նախագահի հրամանագիրը ՀՀ գիտության ՀՀ գիտության պետական կոմիտե ստեղծելու մասին	18.07.2007
10.	ՀՀ կառավարության որոշումը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին	22.12.2005
11.	ՀՀ կառավարության որոշումը գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին	27.05.2010
12.	ՀՀ կառավարության որոշումը բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու մասին	25.08.2011
13.	ՀՀ կառավարության որոշումը ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն հիմնադրամ ստեղծելու մասին	14.06.2005
14.	ՀՀ կառավարության որոշումը ՀՀ մասնագիտական կրթական համակարգի՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագրին և դրա իրականացման ժամանակացույցին հավանություն տալու մասին	15.03.2012
15.	ՀՀ կառավարության որոշումը ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությանը և ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին	30.06.2011
16.	ՀՀ կառավարության որոշումը ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգը հաստատելու մասին	20.07.2001
17.	ՀՀ կառավարության որոշումը ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին	23.10.2014
18.	ՀՀ կառավարության որոշումը ՀՀ բուհեր օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին	28.04.2011
19.	ՀՀ կառավարության որոշումը ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին	30.06.2011
20.	ՀՀ կառավարության որոշումը մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ ստեղծելու մասին	27.11.2008
21.	ՀՀ կառավարության որոշումը ՀՀ-ում կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու մասին	07.07.2000
22.	ՀՀ կառավարության որոշումը բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին	16.06.2001

23. ՀՀ կառավարության որոշումները որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին	31.03.2011 07.07.2016
24. ՀՀ կառավարության որոշումները ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով (առկա, հեռակա) մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատելու մասին	ամենամյա
25. ՀՀ կառավարության որոշումները ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին	ամենամյա
26. ՀՀ կառավարության որոշումը ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը հաստատելը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1112-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին	16.07.2009